ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2019

02.2019

03.2019

04.2019

05.2019

06.2019
Հունիս

07.2019

08.2019

09.2019

10.2019

11.2019

12.2019

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 26-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2019

Հունիս

թիվ 6 (250)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-70-Ն ՀՀ օրենքը

5 «Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-71-Ն ՀՀ օրենքը

6 «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-72-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

9 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԱՐՄԱՆ ԵՎ ԳՆԵԼ», «ՍԿԻՖ ԿՐԵԴԻՏ», «ՄԵԼՔՈՆՅԱՆՍ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ների գրավատնային գործունեության լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

9 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԱՆԴԱԿՈ», «ԱՄՍՏԵՐ ՖԼԱՈՒԵՐՍ», «ՎԱՐԴԱՆ ԵՎ ՄՈՆԻԿԱ», «ՎԱՂԱՐՇ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ ԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ-ներին տրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

9 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՍԻԹԻ» ՍՊԸ-ին փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիա տրամադրելու վերաբերյալ

9 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «ԻՍԱԿՈՎ», «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Մասիվ» մասնաճյուղերը գրանցելու, «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ՈՒՎԿ ՓԲԸ «Արմավիր» ներկայացուցչությունը, «ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ» ՈՒՎԿ ՍՊԸ «Կենտրոն» մասնաճյուղը գրանցումից հանելու վերաբերյալ

9 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 8 գրավատան, 3 վարկային կազմակերպության նկատմամբ տուգանք կիրառելու, 3 վարկային կազմակերպության, 2 գրավատան նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 79Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 56-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

14 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 71-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

47 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 75-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

49 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 82-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

50 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 83-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»[*] օրենքում փոփոխություն կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի 43-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 43. Պետական տուրքը

Ընկերությանը, Ընկերության մասնաճյուղին, Ընկերության ներկայացուցչությանը, օտարերկրյա Ընկերության մասնաճյուղին կամ ներկայացուցչությանը, վերաապահովագրական ընկերությանը, ապահովագրական բրոքերային ընկերությանը լիցենզիա տալու, գրանցելու կամ հաշվառելու համար գանձվում է պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
27 հունիսի 2019 թ., Երևան, ՀՕ-70-Ն

[*] *ՀՀՊՏ 2007 N 27 (551), 30.05.07:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2019 թվականի հունիսի 25-ին (ՀՀՊՏ N 42 (1495), 28.06.19):

« Լիցենզավորման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին***

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակում 6-րդ բաժնի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

9.	Վարկային կազմակերպության գործունեություն	ԿԲ		-	-	-	Ո	Հ	-»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
27 հունիսի 2019 թ., Երևան, ՀՕ-71-Ն

* *ՀՀՊՏ 2001 N 26 (158), 08.08.01:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2019 թվականի հունիսի 25-ին (ՀՀՊՏ N 42 (1495), 28.06.19):

«Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին***

Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2-րդ կետի «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ բացառապես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերերի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ բացառապես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող անհատ ձեռնարկատերերի» բառերով.

2) 9-րդ կետի «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի N 3 հավելվածի» բառերով, իսկ «ինչպես նաև «Ինքնազբաղված անձանց հարկային արտոնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի ցանկում ընդգրկված գործունեության տեսակներով զբաղվող անհատ ձեռնարկատեր և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ բացառապես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվող» բառերը փոխարինել «ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված՝ բացառապես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող» բառերով:

Հոդված 2. Օրենքի 81-րդ հոդվածի 8.1-ին և 8.2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8.1. 2021 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում և սույն հոդվածի 6-րդ մասում նշված՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող անձանց համար՝

1) սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված սոցիալական վճարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

աշխատավարձի ամսական չափը	սոցիալական վճարի չափը՝ հաշվարկված աշխատավարձի նկատմամբ
մինչև 500000 դրամը ներառյալ	3.5 տոկոս
500000-ից ավելի դրամ	10 տոկոսի և 32500 դրամի տարբերության չափով

2) կատարվող կուտակային հատկացումների և այդ անձանց եկամուտներից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարի տարբերությունը չի կարող գերազանցել ամսական 32500 դրամը:

8.2. 2022 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում և սույն հոդվածի 6-րդ մասում նշված՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող անձանց համար՝

1) սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված սոցիալական վճարը հաշվարկվում է հետևյալ կերպ.

աշխատավարձի ամսական չափը	սոցիալական վճարի չափը՝ հաշվարկված աշխատավարձի նկատմամբ
մինչև 500000 դրամը ներառյալ	4.5 տոկոս
500000-ից ավելի դրամ	10 տոկոսի և 27500 դրամի տարբերության չափով

* *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*

** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2019 թվականի հունիսի 25-ին (ՀՀՊՏ N 42 (1495), 28.06.19):

2) կատարվող կուտակային հատկացումների և այդ անձանց եկամուտներից հաշվարկված և փոխանցված (գանձված) սոցիալական վճարի տարբերությունը չի կարող գերազանցել ամսական 27500 դրամը:»:

Հոդված 3. Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից: Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ա. Սարգսյան
27 հունիսի 2019 թ., Երևան, ՀՕ-72-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԱՐՄԱՆ ԵՎ ԳՆԵԼ», «ՍԿԻՖ ԿՐԵԴԻՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատնային գործունեության լիցենզիաները (որոշումներ թիվ 76Ա, 77Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԱՆԴԱԿՈ», «ԱՄՍՏԵՐ ՖԼԱՈՒԵՐՍ», «ՎԱՐԴԱՆ ԵՎ ՄՈՆԻԿԱ», «ՎԱՂԱՐՇ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 86Ա, 87Ա, 92Ա, 93Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ՄԵԼՔՈՆՅԱՆՍ ԿՈՄՊԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության լիցենզիան (որոշում թիվ 89Ա):
- ***Փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիա է*** տրամադրվել «ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 90Ա):
- ***Գրանցվել են*** «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «ԻՍԱԿՈՎ», «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Մասիվ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/342Ա, 1/348Ա):
- ***Գրանցումից հանվել են*** «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Արմավիր» ներկայացուցչությունը, «ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՇՆԼ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Կենտրոն» մասնաճյուղը (որոշումներ թիվ 1/369Ա, 1/377Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 3 վարկային կազմակերպության, 8 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 4820000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/359Ա, 1/361Ա, 1/364Ա, 1/365Ա, 1/366Ա, 1/367Ա, 1/385Ա, 1/386Ա, 1/389Ա, 1/415Ա, 1/416Ա), 3 վարկային կազմակերպության, 2 գրավատան ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/345Ա, 1359Ա, 1/365Ա, 1/386Ա, 1/389Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2019 թ. հունիսի 11-ի թիվ 79Ա որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 5.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 7.25%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.25%:***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով լուծել կանոնակարգի կիրառման ընթացքում մինչ այժմ ի հայտ եկած խնդիրները,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 6-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի ««Կենսաթոշակային ֆոնդի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ը հաստատելու մասին» թիվ 62-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակային ֆոնդի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
13 մայիսի 2019 թ., N 56-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. ապրիլի 26-ին (ՀՀՊՏ N16 (652), 01.07.2019):

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2019 թվականի ապրիլի 26-ի թիվ 56-Ն որոշմամբ

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2012 թվականի մարտի 6-ի
թիվ 62-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/17
ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է կամավոր և պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի (այսուհետ՝ ֆոնդ) ակտիվների եկամտաբերության հաշվարկման մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) ***Ֆոնդի եկամտաբերություն***՝ ֆոնդի փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքի փոփոխություն՝ արտահայտված տոկոսներով,
2) ***ռիսկի յուրաքանչյուր միավորի դիմաց ֆոնդի ակտիվների եկամտաբերություն***՝ ցուցանիշ է, որը ցույց է տալիս նախորդ ժամանակահատվածներում ֆոնդի եկամտաբերության և դրա առաջացման հետ կապված ռիսկի միջև հարաբերությունը:

3. Սույն կանոնակարգում օգտագործվող այլ հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում և/կամ «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքում կիրառվող նշանակությունները:

ԳԼՈՒԽ 3. ՖՈՆԴԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

4. Կառավարիչն իր կողմից հրապարակվող եկամտաբերության ցուցանիշները հաշվարկում է հետևյալ կերպ՝

1) յուրաքանչյուր աշխատանքային օրվա եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 6-րդ կետում նշված բանաձևի,
2) յուրաքանչյուր աշխատանքային օրվա դրությամբ մեկ շաբաթվա եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 6-րդ կետում նշված բանաձևի,
3) յուրաքանչյուր աշխատանքային օրվա դրությամբ մեկ ամսվա եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 6-րդ կետում նշված բանաձևի,
4) նախորդ օրացուցային տարվա եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 6-րդ կետում նշված բանաձևի,
5) յուրաքանչյուր աշխատանքային օրվա դրությամբ տվյալ տարվա սկզբից եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 6-րդ կետում նշված բանաձևի,
6) յուրաքանչյուր աշխատանքային օրվա դրությամբ վերջին տասներկու ամիսների եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 6-րդ կետում նշված բանաձևի,
7) յուրաքանչյուր աշխատանքային օրվա դրությամբ վերջին տասներկու ամիսների ռիսկի յուրաքանչյուր միավորի դիմաց եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 8-րդ կետում նշված բանաձևի.
8) յուրաքանչյուր աշխատանքային օրվա դրությամբ վերջին երեք տարիների միջին տարեկան եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 7-րդ կետում նշված բանաձևի,

9) յուրաքանչյուր աշխատանքային օրվա դրությամբ վերջին հինգ տարիների միջին տարեկան եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 7-րդ կետում նշված բանաձևի,
10) յուրաքանչյուր աշխատանքային օրվա դրությամբ գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի (ստեղծման պահից) միջին տարեկան եկամտաբերությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 7-րդ կետում նշված բանաձևի:

5. Կառավարչի կողմից ֆոնդերի եկամտաբերության վերաբերյալ հրապարակման ենթակա ցուցանիշները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ով:

ԳԼՈՒԽ 4. ՖՈՆԴԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

6. Սույն կանոնակարգի 4-րդ կետի 1-6-րդ ենթակետերով նախատեսված ֆոնդի եկամտաբերությունները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$\text{Ե}=\left(\frac{\text{ՓՀԱ}_1}{\text{ՓՀԱ}_0}\text{-1}\right)\text{ x 100\%}\text{ ,}$$ *որտեղ՝*

Ե-ն ֆոնդի եկամտաբերությունն է հաշվարկվող ժամանակահատվածի համար,

$ՓՀԱ_0$-ն հաշվարկվող ժամանակահատվածի առաջին օրվան նախորդող առաջին աշխատանքային օրվա համար հաշվարկված փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է,

$ՓՀԱ_1$-ը հաշվարկվող ժամանակահատվածի վերջին օրվա համար հաշվարկված փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է:

7. Սույն կանոնակարգի 4-րդ կետի 8-10-րդ ենթակետերով նախատեսված ֆոնդի եկամտաբերությունները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

$$\text{Ե} = \left(\frac{\text{ՓՀԱ}_1}{\text{ՓՀԱ}_0} - \text{1}\right)^{\frac{365}{\text{d}}}\text{ x 100\%,}$$ *որտեղ՝*

Ե-ն ֆոնդի եկամտաբերությունն է հաշվարկվող ժամանակահատվածի համար,

$ՓՀԱ_0$-ն փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է հաշվարկվող ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ,

$ՓՀԱ_1$-ը փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքն է հաշվարկվող ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ,

d-ն հաշվարկվող ժամանակահատվածն է՝ արտահայտված օրերով:

ԳԼՈՒԽ 5. ՌԻՍԿԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԻԱՎՈՐԻ ԴԻՄԱՑ ՖՈՆԴԻ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

8. Սույն կանոնակարգի 4-րդ կետի 7-րդ ենթակետում նշված ռիսկի յուրաքանչյուր միավորի դիմաց ֆոնդի եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\text{Ռ}_\text{Ե} = \frac{\text{Ե}-\text{ԵՊԿՊ}}{\sigma}\text{ ,}$$ *որտեղ՝*

$Ռ_Ե$-ն ռիսկի յուրաքանչյուր միավորի դիմաց ֆոնդի եկամտաբերությունն է հաշվարկվող ժամանակահատվածի համար,

Ե-ն սույն կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված ֆոնդի եկամտաբերությունն է՝ տարեկանացված և արտահայտված միավորի մասերով: Ընդ որում, սույն կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված եկամտաբերությունը տարեկանացվում է վերջինս բազմապատկելով 12-ով,

ԵՊԿՊ-ն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակվող՝ եկամտաբերության կորով հաշվարկվող շրջանառության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության մինչև 90 օր մարման ժամկետով պետական զեղչատոկոսային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունն է՝ արտահայտված միավորի մասերով,

σ-ն ֆոնդի գործունեության վերջին երեք տարիների համար (գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի համար, եթե ֆոնդը գործում է երեք տարուց պակաս) ֆոնդի եկամտաբերության ստանդարտ շեղումն է՝ տարեկանացված, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\boldsymbol{\sigma = \sqrt{12} * \sqrt{\frac{1}{N-1}\sum_{i=1}^{N}(Ե_i - \mu)^2}}\ ,\ \textit{որտեղ}$$

բ-ն ֆոնդի գործունեության վերջին երեք տարիների համար (գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի համար, եթե ֆոնդը գործում է երեք տարուց պակաս) ֆոնդի եկամտաբերությունների միջինն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\boldsymbol{\mu = \frac{1}{N}\sum_{i=1}^{N} Ե_i}\ ,\ \textit{որտեղ}$$

$Ե_i$-ն սույն կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված ֆոնդի եկամտաբերությունն է արտահայտված միավորի մասերով i-երորդ ժամանակահատվածի համար,

N-ը ֆոնդի գործունեության վերջին երեք տարիների (գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի, եթե ֆոնդը գործում է երեք տարուց պակաս) համար սույն կանոնակարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված ֆոնդի եկամտաբերությունների հաշվարկների քանակն է:»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Նպատակ ունենալով բարձրացնել հիմնական տնտեսական նորմատիվների՝ ապահովագրական գործունեության ռիսկայնությունը զսպելու ունակությունը, ինչպես նաև համապատասխանեցնել ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները միջազգային լավագույն փորձին,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը, 58-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները ու լրացումները.

1) Կանոնակարգի 2-րդ կետի 15-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,
2) Կանոնակարգը 3.1 կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.2 կետով.

   «3.2 Օտարերկրյա ապահովագրական ընկերությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի նկատմամբ տարածվում են սույն կանոնակարգով ապահովագրական ընկերությունների համար սահմանված հիմնական տնտեսական նորմատիվները՝ ընդհանուր կապիտալի մեծություն համարելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» Կանոնակարգ 3/01-ի 34-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված ավանդը:»,
3) Կանոնակարգի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «6. Սույն կանոնակարգի գլուխ 3-ի համաձայն հաշվարկված ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվի (Ն1.1 նորմատիվ) նվազագույն սահմանաչափը սահմանվում է 1:»,
4) Կանոնակարգի 7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,
5) Կանոնակարգի 3-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գ Լ ՈՒ Խ 3
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԻ ՆՈՐՄԱՏԻՎԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՏԱՐՐԵՐԻ ԿԱԶՄԸ

15. Ապահովագրական ընկերության համար ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը (Ն1.1) հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Ն1.1 = \frac{ԸԿ}{ՆԿ}$$

$$ՆԿ = max(ՆԿ_{հաշվարկային}, ՆԿ_{բացարձակ})$$

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. մայիսի 27-ին (ՀՀՊՏ N16 (652), 01.07.2019):

$$ՆԿ_{հաշվարկային} = \min(\max(ՆԿ_{գծային};\ 0.25 * ՊԿ);\ 0.45 * ՊԿ)$$

որտեղ՝

ԸԿ - *ընդհանուր կապիտալի մեծություն՝ հաշվետու ամսվա միջին օրական մեծությամբ (ամսվա ընթացքում ընդհանուր կապիտալի օրական մեծությունների հանրագումարը հարաբերած ամսվա օրերի թվին)՝ հաշվարկված համաձայն սույն կանոնակարգի **Հավելված 1**-ի,*

ՆԿ - *հաշվետու ամսվա համար սույն գլխի համաձայն հաշվարկված նվազագույն կապիտալի մեծություն,*

$ՆԿ_{բացարձակ}$ - *նվազագույն կապիտալի բացարձակ մեծություն, որը որոշվում է սույն կանոնակարգի 16-րդ, 17-րդ և 18-րդ կետերի համաձայն,*

$ՆԿ_{հաշվարկային}$ – *հաշվետու ամսվա համար հաշվարկված նվազագույն կապիտալի հաշվարկային մեծություն, որը հաշվարկվում է սույն գլխի համաձայն,*

$ՆԿ_{գծային}$ – *հաշվետու ամսվա համար գծային մեթոդով հաշվարկվող կապիտալի նվազագույն մեծություն, որը ոչ կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերությունների դեպքում հաշվարկվում է սույն կանոնակարգի 19-րդ կետի համաձայն, իսկ կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերությունների դեպքում սույն կանոնակարգի 20-րդ կետի համաձայն,*

ՊԿ - *հաշվետու ամսվա համար սույն կանոնակարգի 23-րդ կետի համաձայն հաշվարկված պահանջվող կապիտալի մեծություն:*

16. Ապահովագրական ընկերության նվազագույն կապիտալի բացարձակ մեծությունը ($ՆԿ_{բացարձակ}$) որոշվում է հետևյալ կերպ՝

1) մեկ միլիարդ (1 000 000 000) Հայաստանի Հանրապետության դրամ գումար, եթե ընկերությունն ունի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «1-9»-րդ, «16-18»-րդ կետերով սահմանված ոչ կյանքի ապահովագրության մեկ կամ մի քանի դասերով ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա,
2) մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն (1 500 000 000) Հայաստանի Հանրապետության դրամ գումար, եթե ապահովագրական ընկերությունն ունի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «10-15»-րդ կետերով սահմանված ոչ կյանքի ապահովագրության մեկ կամ մի քանի դասերով ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա,
3) մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն (1 500 000 000) Հայաստանի Հանրապետության դրամ գումար, եթե ընկերությունն ունի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի «1-6»-րդ կետերով սահմանված կյանքի ապահովագրության մեկ կամ մի քանի դասերով ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա,
4) մեկ միլիարդ հինգ հարյուր միլիոն (1 500 000 000) Հայաստանի Հանրապետության դրամ գումար, եթե ընկերությունն ունի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դասերով ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիա:

17. Միաժամանակ մի քանի դասերով ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերության համար $ՆԿ_{բացարձակ}$ մեծությունը սահմանվում է տվյալ դասերի համար սույն կանոնակարգի 16-րդ կետի 1-ին, 2-րդ կամ 4-րդ ենթակետերում սահմանված չափերից առավելագույնը:

18. Օտարերկրյա ապահովագրական ընկերությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի համար $ՆԿ_{բացարձակ}$ մեծությունը սահմանվում է ՀՀ ԿԲ խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» Կանոնակարգ 3/01-ի 34-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված մեծությունների չափով:

19. Ոչ կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերությունների համար գծային մեթոդով հաշվարկվող կապիտալի նվազագույն մեծությունը ($ՆԿ_{գծային}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևի համաձայն՝

$$ՆԿ_{գծային} = \sum_i (Գ_{տպi} * ՏՊ_i + Գ_{ապi} * Ա_i),$$

որտեղ՝

$ՏՊ_i$ - *i-րդ ապահովագրության դասի գծով հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ ձևավորված տեխնիկական պահուստների մեծություն՝ նվազեցված այդ պահուստներում վերապահովագրողի մասնաբաժնի չափով,*

U_i — *i-րդ ապահովագրության դասի գծով հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում հաշվեգրված համախառն ապահովագրավճարների մեծությունը՝ նվազեցված այդ գումարներում վերաապահովագրողի մասնաբաժնի չափով,*

$Գ_{տպi}$,$Գ_{աi}$ — *$Գ_{տպi}$ և $Գ_{աi}$ գործակիցներն ապահովագրության յուրաքանչյուր դասի համար սահմանվում են հետևյալ աղյուսակի համաձայն՝*

Ապահովագրության դասեր	**$Գ_{տպi}$**	**$Գ_{աi}$**
Առողջության ապահովագրություն	0.089	0.066
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	0.119	0.080
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	0.085	0.094
Ցամաքային և երկաթուղային տրանսպորտի ապահովագրություն	0.075	0.075
Օդանավերի, ջրային փոխադրամիջոցների, փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, օդանավերի և ջրային փոխադրամիջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	0.103	0.140
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն, գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	0.094	0.075
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	0.103	0.131
Վարկի ապահովագրություն, երաշխիքի տրամադրում	0.177	0.113
Դատական և արտադատական ծախսերի ապահովագրություն	0.113	0.066
Աջակցության ապահովագրություն	0.186	0.085
Ֆինանսական վնասների ապահովագրություն	0.186	0.122

20. Կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերությունների համար գծային մեթոդով հաշվարկվող կապիտալի նվազագույն մեծությունը ($Ն Կ_{գծային}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևի համաձայն՝

$$Ն Կ_{գծային} = 0.037 * ՏՊ_{կյանք} + 0.0007 * ՌԿ,$$

որտեղ՝

$ՏՊ_{կյանք}$ — *Կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ ձևավորված տեխնիկական պահուստների մեծությունը՝ նվազեցված այդ պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի չափով,*

ՌԿ — *Հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ սույն կանոնակարգի Հավելված 7-ի համաձայն հաշվարկված ռիսկային կապիտալի մեծությունը՝ նվազեցրած այդ գումարում վերաապահովագրողի մասնակցության չափով:»,*

6) Կանոնակարգի 21-րդ և 22-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել,

7) Կանոնակարգի 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«23. Ապահովագրական ընկերության համար կապիտալի համարժեքության նորմատիվը (Ն1.2) հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Ն1.2 = \frac{ԸԿ}{ՊԿ}$$

$$ՊԿ = ՊԿ_{գործ} + \sqrt{\sum_{ij} Կոր_{ij} * ՊԿ_i * ՊԿ_j},\ \textbf{որտեղ}$$

ԸԿ - — *ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի մեծությունը հաշվետու ամսվա միջին օրական մեծությամբ (ամսվա ընթացքում ընդհանուր կապիտալի օրական մեծությունների հանրագումարը հարաբերած ամսվա օրերի թվին)՝ հաշվարկված համաձայն սույն կանոնակարգի **Հավելված 1**-ի,*

ՊԿ- — *հաշվետու ամսվա համար սույն գլխի համաձայն հաշվարկված պահանջվող կապիտալի մեծությունը,*

$ՊԿ_{գործ}$ – — *գործառնական ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը՝ հաշվարկված համաձայն սույն կանոնակարգի **Հավելված 3**-ի,*

$ПК_i$ $ПК_j$ Պահանջվող կապիտալի մեծություններ հետևյալ i,j ռիսկերի համար՝

$ПК_{վարկային}$ - *վարկային ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը հաշվարկված համաձայն սույն կանոնակարգի **Հավելված 2**-ի,*

$ПК_{արտ}$ - *արտարժութային ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը հաշվարկված համաձայն սույն կանոնակարգի **Հավելված 4**-ի,*

$ПК_{ոչ\ կյանք}$ – *ոչ կյանքի անդերռայթինգի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը հաշվարկված համաձայն սույն կանոնակարգի **Հավելված 5**-ի,*

$ПК_{առողջ}$ - *առողջության անդերռայթինգի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը հաշվարկված համաձայն սույն կանոնակարգի **Հավելված 6**-ի,*

$ПК_{կյանք}$ - *կյանքի անդերռայթինգի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը հաշվարկված համաձայն սույն կանոնակարգի **Հավելված 7**-ի:*

$Կոր_{ij}$ – $ПК_i$ և $ПК_j$ մեծությունների միջև կոռելյացիայի գործակիցներ՝ ըստ ստորև աղյուսակի.

	$ПК_{ոչ\ կյանք}$	$ПК_{առողջ}$	$ПК_{կյանք}$	$ПК_{վարկային}$	$ПК_{արտ}$
$ПК_{ոչ\ կյանք}$	1	0	0	0.5	0.25
$ПК_{առողջ}$	0	1	0.25	0.25	0.25
$ПК_{կյանք}$	0	0.25	1	0.25	0.25
$ПК_{վարկային}$	0.5	0.25	0.25	1	0.25
$ПК_{արտ}$	0.25	0.25	0.25	0.25	1

»,

8) Կանոնակարգի 27-րդ կետում.
   ա. «830% ռիսկի կշռին» բառերը փոխարինել «830% և 800% ռիսկի կշիռներին» բառերով,
   բ. «սույն կանոնակարգի գլուխ 3-ի» բառերը փոխարինել «սույն կանոնակարգի Հավելված 1-ի» բառերով,
9) Կանոնակարգը 28-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 28.1, 28.2 և 28.3 կետերով.

«28.1. Երկրաշարժի ռիսկի դեպքում Ն3 նորմատիվի Պ տարրը առանձին տարածքային խմբում գտնվող և երկրաշարժի ռիսկից ապահովագրված բոլոր օբյեկտներից յուրաքանչյուրի ապահովագրական արժեքի 15%-ի միաժամանակյա վնասման դեպքում ապահովագրական ընկերության պարտավորության չափն է՝ նվազեցված վնասման այս սցենարի դեպքում սույն կանոնակարգի 27-րդ և 27.2-րդ կետերով սահմանված պայմանները բավարարող վերաապահովագրողի պարտավորության չափով:

Սույն կետի իմաստով առանձին տարածքային խմբերն են՝

Խումբ 1 - Երևան

Խումբ 2 - Արարատ, Արմավիր, Արագածոտն, Վայոց ձոր

Խումբ 3 - Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք

Խումբ 4 - Կոտայք

Խումբ 5 - Սյունիք

Խումբ 6 – Արցախ

Խումբ 7 - այլ:

28.2. Եթե ապահովագրության օբյեկտը միաժամանակ գտնվում է սույն կանոնակարգի 28.1-րդ կետով սահմանված 1-ից ավելի տարածքային խմբերում, ապա Ն3 նորմատիվի հաշվարկման ժամանակ պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքով՝

1) եթե հնարավոր է ապահովագրական ընկերության պատասխանատվության չափը տվյալ օբյեկտի մասով ապահովագրության պայմանագրի դրույթներին համապատասխան տարանջատել ըստ տարածքային խմբերի, ապա նորմատիվի հաշվարկման ժամանակ տվյալ օբյեկտի մասով ընկերության պատասխանատվության չափը համապատասխանորեն բաշխվում է ըստ տարածքային խմբերի,
2) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված տարանջատման անհնարինության դեպքում տվյալ օբյեկտը ընդգրկվում է այն տարածքային միավորում, որտեղ գտնվում է ապահովագրված ռիսկերի գերակշիռ մասը:

28.3. Եթե ապահովագրության օբյեկտը ապահովագրված է երկրաշարժի ռիսկից, ապա տվյալ օբյեկտի գծով Ն3 նորմատիվի Պ տարրը հաշվարկվում է ինչպես սույն կանոնակարգի 28.1-րդ, այնպես էլ 27-րդ կետերի համաձայն (27-րդ կետի կիրառման դեպքում երկրաշարժի ռիսկի հիմքով ապահովագրության օբյեկտների փոխկապակցվածությունը չի դիտարկվում):»,

10) Կանոնակարգի 35-րդ կետում և գլուխ 8.1-ում բոլոր «սույն կանոնակարգի գլուխ 3-ի» բառերը փոխարինել «սույն կանոնակարգի Հավելված 1-ի» բառերով,
11) Կանոնակարգի 9-րդ գլուխն ուժը կորցրած ճանաչել,

12) Կանոնակարգի Հավելված 2-ում.

ա. հավելվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՊԻՏԱԼԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿ»,

բ. Գլուխ 1-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՊԻՏԱԼԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՌԻՍԿԻ ԿՇԻՌՆԵՐԸ»,

գ. 1-ին և 2-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վարկային ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ПК_{վարկային}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևերով.

$$ПК_{վարկային} = \frac{\sum_{i=1}^{Ն} ПК_{վարկային\,i}}{Ն} + ՆԷ,$$

$$ПК_{վարկային\,i} = \sum_j 0.12 * U_j * Ռ_j$$

որտեղ՝

$ПК_{վարկային\,i}$ — վարկային ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծություն՝ ըստ հաշվետու ամսվա օրերի (i),

Ն – հաշվետու ամսվա օրերի քանակ,

U_j - ապահովագրական ընկերության ակտիվների (բացառությամբ այն ակտիվների, որոնք նվազեցվում են հիմնական կապիտալից), արտահաշվեկշռային պայմանական պարտավորությունների և արտահաշվեկշռային ածանցյալ գործիքների հանրագումար՝ խմբավորված ըստ ռիսկի միևնույն կշիռների (j): U_j տարրի հաշվարկը արտահաշվեկշռային պայմանական պարտավորությունների և արտահաշվեկշռային ածանցյալ գործիքների գծով իրականացվում է սույն հավելվածի գլուխ 2-ի համաձայն: Ընդ որում, վարկային ռիսկի համար պահանջվող կապիտալի հաշվարկում ապահովագրական ընկերությունները կարող են կիրառել սույն հավելվածի գլուխ 3-ով սահմանված վարկային ռիսկի զսպման մեխանիզմները (այսուհետ՝ ՎՌՁՄ),

$Ռ_j$ - համապատասխան ակտիվների ռիսկի կշիռներ,

ՆԷ – սույն հավելվածի 2-րդ կետի համաձայն հաշվարկված վերաապահովագրության արդյունքում անդերռայթինգի ռիսկի նվազեցման էֆեկտ՝ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ:

2. Վերաապահովագրության արդյունքում անդերռայթինգի ռիսկի նվազեցման էֆեկտը (ՆԷ) հաշվարկվում է հետևյալ բանաձևի համաձայն՝

$$ՆԷ = \sum_k 0.25 * \ ՆԷ_k * Ռ_k$$

$$ՆԷ_k = ПК_k^{հիպ} - ПК_{անդերռայթինգ}$$

$$ПК_{անդերռայթինգ} = \sum_{ij} Կոր_{ij} * ПК_i * ПК_j$$

որտեղ՝

k — *հաշվետու ամսվա համար սույն կանոնակարգի համաձայն աղետների ռիսկի համար պահանջվող կապիտալի հաշվարկում ընդգրկված k-րդ վերաապահովագրող,*

$ՆԷ_k$ — *k-րդ վերաապահովագրողի հետ կնքված պայմանագրի/պայմանագրերի արդյունքում անդերռայթինգի ռիսկի նվազեցման էֆեկտ,*

$Ռ_k$ — *k-րդ վերաապահովագրողի ռիսկի գործակից՝ համաձայն ստորև աղյուսակի՝*

	Վերաապահովագրող		Ռիսկի գործակից
Օտարերկրյա վերադիրքերում	Ստանդարտ և Փուրզ/Ֆիտչ Մուդիզ Ա.Մ.Բեստ	«AAA» «Aaa» «A++»	0.00002
	Ստանդարտ և Փուրզ/Ֆիտչ Մուդիզ Ա.Մ.Բեստ	«AA+»-ից «AA-» «Aa1»-ից «Aa3» «A+»	0.0001
	Ստանդարտ և Փուրզ/Ֆիտչ Մուդիզ Ա.Մ.Բեստ	«A+»-ից «A-» «A1»-ից «A3» «A»-ից «A-»	0.0005
	Ստանդարտ և Փուրզ/Ֆիտչ Մուդիզ Ա.Մ.Բեստ	«BBB+»-ից «BBB-» «Baa1»-ից «Baa3» «B++»-ից «B+»	0.0024
	Ստանդարտ և Փուրզ/Ֆիտչ Մուդիզ Ա.Մ.Բեստ	«BB+»-ից «BB-» «Ba1»-ից «Ba3» «B»-ից «B-»	0.012
	Ստանդարտ և Փուրզ/Ֆիտչ Մուդիզ Ա.Մ.Բեստ Վարկանիշ չունեցող	«B+»-ից ցածր «B1»-ից ցածր «C++»-ից ցածր	0.042
ՀՀ տարածքում գործող վերաապահովագրողներ			0.005

$ПК_{անդերռայթինգ}$ *հաշվետու ամսվա համար սույն կետի համաձայն հաշվարկվող անդերռայթինգի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը՝ հաշվի առնելով վերաապահովագրության ծավալները,*

$\sum_{ij} КОР_{ij} * ПК_i * ПК_j$ *սույն կանոնակարգի 23-րդ կետով սահմանված մեծություններ, որտեղ $ПК_i$ $ПК_j$–ն ներառում են միայն ոչ կյանքի անդերռայթինգի, առողջության անդերռայթինգի և կյանքի անդերռայթինգի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունները,*

$ПК_k^{հիպ}$ *հաշվետու ամսվա համար սույն կետի համաձայն հաշվարկվող անդերռայթինգի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը՝ առանց հաշվի առնելու k-րդ վերաապահովագրողի հետ կնքված վերաապահովագրության պայմանագիրը/պայմանագրերը:»*,

դ. 3-րդ կետում «Ապահովագրական ընկերության վարկային ռիսկի հաշվարկում» բառերը փոխարինել «Վարկային ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծության հաշվարկում» բառերով, իսկ «Ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում օգտագործվող ռիսկի կշիռների աղյուսակ» բառերը՝ «Վարկային ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծության հաշվարկում օգտագործվող ռիսկի կշիռների աղյուսակ» բառերով,

ե. 4-րդ, 9-րդ, 15-րդ, 15.1-րդ, 15.2-րդ, 17-րդ կետերում, 8-րդ կետի 1-ին և 6-րդ ենթակետերում «վարկային ռիսկի հաշվարկում» բառերը փոխարինել «Վարկային ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծության հաշվարկում» բառերով,

զ. 8.1-րդ և 15-րդ կետերում «Վարկային ռիսկի հաշվարկման» բառերը փոխարինել «Վարկային ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծության հաշվարկման» բառերով,

է. 12-րդ կետում «ռիսկով կշռված ակտիվների հաշվարկում» բառերը փոխարինել «վարկային ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծության հաշվարկում» բառերով,

ը. Գլուխ 4-ի վերնագրում «Վարկային ռիսկի հաշվարկի» բառերը փոխարինել «Վարկային ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծության հաշվարկի» բառերով,

13) Կանոնակարգի Հավելված 1-ը, Հավելված 3-ը, Հավելված 4-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի, Հավելված 2-ի, Հավելված 3-ի,

14) Կանոնակարգը լրացնել Հավելված 5-ով, Հավելված 6-ով և Հավելված 7-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ին:

3. Սույն որոշման 1-ին կետի 9-րդ ենթակետով լրացվող Կանոնակարգի 28.1-րդ կետում սահմանված 15%-ի փոխարեն կիրառվում են ստորև նշված գործակիցները՝ ըստ սահմանված ժամանակացույցի՝

Կիրառման ժամանակահատված	Գործակից
2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ	5%
2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ	10%
2023 թվականի հունվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ	15%

4. Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը կնքված կամ երկարաձգված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների այն պայմանագրերը, որոնցով ներգրավված փոխառությունները չեն համապատասխանում սույն որոշմամբ երկարաժամկետ ստորադաս փոխառությունների նկատմամբ սահմանված պահանջներին, և որոնք 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ ընդգրկված են ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի հաշվարկում՝ ենթակա են նվազեցման՝ համաձայն հետևյալ ժամանակացույցի.

Ամսաթիվ	Մինչև 01/01/2021 կնքված կամ երկարաձգված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների հետագա ընդգրկումը ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի հաշվարկում՝ արտահայտված 01/01/2021 թվականի դրությամբ դրանց՝ ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկված գումարի նկատմամբ տոկոսով
01/01/2021	50%
01/01/2022	0%

5. Մինչև 2021 թվականի հունվարի 1-ը տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերը, որոնք չեն համապատասխանում սույն որոշմամբ արտոնյալ բաժնետոմսերի նկատմամբ սահմանված պահանջներին, և

որոնք 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ ընդգրկված են ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի հաշվարկում՝ ենթակա են նվազեցման՝ համաձայն հետևյալ ժամանակացույցի.

Ամսաթիվ	Մինչև 01/01/2021 տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսերի ընդգրկումը ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի հաշվարկում՝ արտահայտված 01/01/2021 թվականի դրությամբ դրանց՝ ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկված գումարի նկատմամբ տոկոսով
01/01/2021	50%
01/01/2022	0%

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
4 հունիսի 2019 թ., N 71-Ն

Հավելված 1
Հաստատված է ՀՀ ԿԲ խորհրդի մայիսի 27-ի թիվ 71-Ն որոշմամբ

«Հավելված 1
«Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները»
Կանոնակարգ 3/02-ի

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿ

1. Ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալը (ԸԿ) հիմնական և լրացուցիչ կապիտալների հանրագումարն է՝ համապատասխան նվազեցումները կատարելուց հետո: Ընդ որում, նորմատիվների մեծությունը հաշվարկելիս լրացուցիչ կապիտալն ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է հիմնական կապիտալի (սույն հավելվածի համաձայն կատարվող նվազեցումներից հետո) առավելագույնը 50 տոկոսի չափով, բացառությամբ Ն1.1 նորմատիվի մեծությունը հաշվարկելիս, որի դեպքում լրացուցիչ կապիտալն ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկվում է հիմնական կապիտալի (սույն հավելվածի համաձայն կատարվող նվազեցումներից հետո) առավելագույնը 25 տոկոսի չափով:

2. Հիմնական կապիտալը սույն կետով սահմանված հետևյալ տարրերի և հիմնական կապիտալի մեծությունից նվազեցվող տարրերի տարբերությունն է.

1) ամբողջությամբ վճարված սովորական բաժնետոմսերի, բաժնեմասերի կամ փայերի (այսուհետ՝ սովորական բաժնետոմս) անվանական արժեք՝ գումարած սովորական բաժնետոմսերից էմիսիոն եկամուտ և նվազեցրած զեղչ: Ընդ որում, սովորական բաժնետոմսերի անվանական արժեքը նվազեցվում է ապահովագրական ընկերության կողմից թողարկված այն սովորական բաժնետոմսերի անվանական արժեքի չափով, որոնք

   ա. հետ են գնվել ապահովագրական ընկերության կողմից, եթե արդեն իսկ չեն նվազեցվում սովորական բաժնետոմսերի անվանական արժեքից՝ կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն, կամ

   բ. ձեռք են բերվել այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնցում ապահովագրական ընկերությունը հանդիսանում է նշանակալից մասնակից, կամ ձեռք են բերվել ապահովագրական ընկերության անուղղակի ֆինանսավորմամբ, կամ

   գ. ապահովագրական ընկերությունը, որևէ իրավաբանական փաստաթղթի հիման վրա, պարտավոր է կամ կարող է պարտավորվել ձեռք բերել հետագայում (բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր հետգնման դեպքերի), կամ

   դ. ապահովված են ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց երաշխիքով կամ երաշխավորությամբ, կամ որոնց սեփականատերերը տնտեսապես կամ իրավական տեսանկյունից ավելի բարենպաստ կարգավիճակում են հայտնվում այն բանի արդյունքում, որ նրանց՝ սովորական բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքից բխող պահանջը, կանոնադրության համաձայն կամ որևէ այլ կերպ ենթակա է բավարարման ավելի շուտ, քան օրենքով տվյալ պահանջի համար սահմանված բավարարման հերթը:
2) ապահովագրական ընկերության կորուստները ծածկելու նպատակով օրենքի հիման վրա ստեղծված պահուստային հիմնադրամ կամ այլ ֆոնդ (այսուհետ՝ գլխավոր պահուստ),
3) չբաշխված շահույթ (վնաս)՝ նվազեցված հաշվային պլանի 52-րդ բաժնում հաշվառվող միջանկյալ շահաբաժինների չափով (այսուհետ՝ չբաշխված շահույթ): Ընդ որում, ապահովագրական ընկերության չբաշխված շահույթը ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի հաշվարկում ներառվում է ամբողջությամբ վճարված սովորական բաժնետոմսերի և սույն հավելվածի Ենթահավելված 1.1-ի բոլոր պահանջները բավարարող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքների՝ գումարած բաժնետոմսերից էմիսիոն եկամուտ և նվազեցված զեղչ, առավելագույնը 150 տոկոսի չափով,
4) սույն հավելվածի Ենթահավելված 1.1-ի բոլոր պահանջները բավարարող արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեք՝ գումարած արտոնյալ բաժնետոմսերից էմիսիոն եկամուտ և նվազեցված զեղչ: Ընդ որում, արտոնյալ բաժնետոմսերը նվազեցվում են սույն հավելվածի Ենթահավելված 1.1-ի բոլոր պահանջները բավարարող այն արտոնյալ բաժնետոմսերի անվանական արժեքի չափով, որոնք

   ա. հետ են գնվել ապահովագրական ընկերության կողմից, եթե արդեն իսկ չեն նվազեցվում սովորական բաժնետոմսերի անվանական արժեքից կիրառվող հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն, կամ

բ. ձեռք են բերվել այնպիսի կազմակերպությունների կողմից, որոնցում ապահովագրական ընկերությունը հանդիսանում է նշանակալից մասնակից, կամ ձեռք են բերվել ապահովագրական ընկերության անուղղակի ֆինանսավորմամբ, կամ

գ. ապահովագրական ընկերությունը, որևէ իրավաբանական փաստաթղթի հիման վրա, պարտավոր է կամ կարող է պարտավորվել ձեռք բերել հետագայում (բացառությամբ՝ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր հետգնման դեպքերի), կամ

դ. ապահովված են ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց երաշխիքով կամ երաշխավորությամբ, կամ որոնց սեփականատերերը տնտեսապես կամ իրավական տեսանկյունից ավելի բարենպաստ կարգավիճակում են հայտնվում այն բանի արդյունքում, որ նրանց՝ սովորական բաժնետոմսի նկատմամբ սեփականության իրավունքից բխող պահանջը, կանոնադրության համաձայն կամ որևէ այլ կերպ ենթակա է բավարարման ավելի շուտ, քան օրենքով տվյալ պահանջի համար սահմանված բավարարման հերթը:

3. Հիմնական կապիտալի մեծությունը նվազեցվում է.

1) ապահովագրական ընկերության կողմից տրված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների հաշվեկշռային արժեքի չափով: Ընդ որում, սույն պարբերության իմաստով՝ երկարաժամկետ ստորադաս փոխառություն է համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այն ստորադաս փոխառությունը, որը տրամադրվել է առնվազն հինգ տարի ժամկետով:
2) ոչ նյութական ակտիվների (այդ թվում՝ շահագործումից դուրս գտնվող), ինչպես նաև ոչ նյութական ակտիվների վրա կատարված կապիտալ ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով, բացառությամբ՝ ապահովագրական գործունեության համար օգտագործվող համակարգչային ծրագրերի և դրանց օգտագործման իրավունքների հաշվեկշռային արժեքի,
3) ապահովագրական ընկերության սեփականությունը հանդիսացող, ապահովագրական գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների և դրանց վրա կատարված կապիտալ ներդրումների (ներառյալ գրավի տնօրինումից, սուբրոգացիայից և այլ պահանջներից առաջացած սեփականացված նյութական ակտիվների, այդ թվում՝ շահագործումից դուրս գտնվող) հաշվեկշռային արժեքի չափով, այդ ակտիվներն օրենքով սահմանված կարգով ապահովագրական ընկերության սեփականությունը համարվելու յոթերորդ ամսվանից սկսած,
4) ապահովագրական ընկերության սեփականությունը հանդիսացող և նրա գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների (հիմնական միջոցների, այդ թվում՝ անշարժ գույքի (շենքերի և շինությունների), այլ հիմնական միջոցների) հաշվեկշռային արժեքի՝ հիմնական կապիտալի հաշվարկային մեծության 25 տոկոսը գերազանցող գումարի չափով: Ընդ որում, նյութական ակտիվի հաշվեկշռային արժեքը հավասար է սույն հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված մեծությանը,
5) ապահովագրական ընկերության կողմից վարձակալված կամ անհատույց օգտագործման պայմանագրով օգտագործվող հիմնական միջոցների բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների հաշվեկշռային մնացորդի չափով,
6) ֆիզիկական անձանց տրամադրված փոխառությունների հաշվեկշռային արժեքի չափով,
7) ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 1-10-րդ ենթակետերով նախատեսված գործառնություններ իրականացնող անձանց կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների հաշվեկշռային արժեքի չափով, եթե.

ա. կանոնադրական կապիտալում ներդրումը կազմում է տվյալ անձի կանոնադրական կապիտալի 5 տոկոսը կամ ավելին, կամ

բ. բոլոր անձանց (այդ թվում՝ սույն կետի 8-րդ ենթակետում նշված անձանց) կանոնադրական կապիտալում ներդրումները գերազանցում են ապահովագրական ընկերության հիմնական կապիտալի հաշվարկային մեծության (նվազեցրած սույն կետի 1-6-րդ ենթակետերում նշված տարրերը) 10 տոկոսը: Ընդ որում, սույն պարբերության պահանջը բավարարող ներդրումները նվազեցվում են հիմնական կապիտալի մեծությունից, եթե այդ ներդրումներն արդեն իսկ չեն նվազեցվել սույն կետի «ա» պարբերության համաձայն:

Բացառություն են կազմում այն ներդրումները, որոնց արդյունքում ապահովագրական ընկերությունը ձեռք է բերում սույն ենթակետում նշված կազմակերպության կապիտալում 100 տոկոս մասնակցություն՝ պայմանով, որ ներդրումը կատարվել է այդ կազմակերպությունը հետագայում լուծարելու կամ ապահովագրական ընկերությանը միացնելու նպատակով, և Կենտրոնական բանկը տեղեկացվել է այդ նպատակի մասին: Այդ ներդրումները չեն նվազեցվում ներդրումը կատարելու պահից 6 ամսվա ընթացքում,

8) սույն կետի 7-րդ ենթակետում նշված կազմակերպություններից տարբեր այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում կատարված ներդրումների հաշվեկշռային արժեքի և սույն ենթակետի «ա» և «բ» պարբերություններում նշված մեծությունների տարբերություններից առավելագույնի չափով, եթե.

ա. կանոնադրական կապիտալում ներդրումը կազմում է տվյալ անձի կանոնադրական կապիտալի 5 տոկոսը կամ ավելին, կամ

բ. եթե բոլոր անձանց (այդ թվում՝ սույն կետի 7-րդ ենթակետում նշված անձանց) կանոնադրական կապիտալում ներդրումները գերազանցում են ապահովագրական ընկերության հիմնական կապիտալի հաշվարկային մեծության (նվազեցրած սույն կետի 1-6-րդ ենթակետերում նշված տարրերը) 10 տոկոսը: Ընդ որում, սույն պարբերության պահանջը բավարարող ներդրումները նվազեցվում են հիմնական կապիտալի մեծությունից, եթե այդ ներդրումներն արդեն իսկ չեն նվազեցվել սույն կետի «ա» պարբերության համաձայն:

9) այլ կազմակերպություններում կատարված փոխադարձ ներդրումների դեպքում ապահովագրական ընկերության կապիտալում կատարված ներդրման հաշվեկշռային արժեքի չափով, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով այդ ներդրումը կատարվել է ապահովագրական ընկերության կապիտալն արհեստականորեն մեծացնելու նպատակով: Սույն պարբերության իմաստով՝ փոխադարձ է համարվում այն ներդրումը, որի արդյունքում ապահովագրական ընկերությունը կամ այն կազմակերպությունը, որի կապիտալում ապահովագրական ընկերությունն ունի նշանակալից մասնակցություն (այսուհետ՝ սույն պարբերությունում՝ ապահովագրական ընկերություն), մասնակցություն է ձեռք բերում մեկ այլ անձի կամ այն կազմակերպության կապիտալում, որում այդ անձն ունի նշանակալից մասնակցություն, և վերջինս (վերջինիս նշանակալից մասնակիցը) իր հերթին մասնակցություն ունի (ունեն) ապահովագրական ընկերության կապիտալում:

4. Հիմնական կապիտալի հաշվարկային մեծությունը սույն հավելվածի 2-րդ կետի 1-4 ենթակետերում նշված մեծությունների հանրագումարն է՝ հաշվի առնելով այդ ենթակետերում նշված նվազեցումները և սահմանափակումները:

5. Լրացուցիչ կապիտալը բաղկացած է հետևյալ տարրերի հանրագումարից.

1) ապահովագրական ընկերության կողմից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառություններ՝ հաշվեկշռային արժեքով: Սույն գլխի իմաստով (բացառությամբ սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետի)՝ ստորադաս փոխառություն է համարվում այն փոխառությունը, որը բավարարում է սույն հավելվածի Ենթահավելված 1.2-ի բոլոր պայմանները միաժամանակ: Ընդ որում, ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի հաշվարկում ներառման առումով երկարաժամկետ ստորադաս փոխառություններն ունեն առաջնահերթություն՝ լրացուցիչ կապիտալի այլ տարրերի նկատմամբ, բացառությամբ արտոնյալ բաժնետոմսերի: Ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունները, սկսած դրանց մարման ժամկետի սկզբին նախորդող հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ տարվա հունվարի 1-ից, լրացուցիչ կապիտալի հաշվարկից նվազեցվում են դրանց սկզբնական արժեքի քսան տոկոսի չափով,

2) ապահովագրական ընկերության սեփականությունը հանդիսացող և ապահովագրական գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատումից փոփոխություն՝ հաշվեկշռային արժեքով՝ ոչ ավելի, քան ապահովագրական ընկերության հիմնական կապիտալի հաշվարկային արժեքի 25 տոկոսի և ապահովագրական ընկերության սեփականությունը հանդիսացող ու ապահովագրական գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի տարբերության չափը: Եթե նշված տարբերությունը բացասական մեծություն է, ապա ապահովագրական ընկերության սեփականությունը հանդիսացող և ապահովագրական ընկերության գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատումից փոփոխությունը չի ներառվում լրացուցիչ կապիտալի հաշվարկում: Նշվածը արտահայտվում է ստորև ներկայացված բանաձևով.

$$ВФ = \begin{cases} \min(ВФ_{Հ}, (ՀԿ*0.25 - ՆԱ_{ՀԿ})), \text{ եթե } (ՀԿ*0.25 - ՆԱ_{ՀԿ}) \geq 0 \\ 0, \text{ եթե } (ՀԿ*0.25 - ՆԱ_{ՀԿ}) < 0 \end{cases}$$

որտեղ՝

ՎՖ - լրացուցիչ կապիտալի հաշվարկում ներառվող՝ ապահովագրական ընկերության սեփականությունը հանդիսացող և ապահովագրական գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատումից փոփոխությունն է,

$ВФ_{Հ}$ - ապահովագրական ընկերության սեփականությունը հանդիսացող և ապահովագրական գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների վերագնահատումից փոփոխության հաշվեկշռային մեծությունն է,

ՀԿ - *ապահովագրական ընկերության հիմնական կապիտալի հաշվարկային մեծությունն է,*

$ՆԱ_{ՀԿ}$ - *ապահովագրական ընկերության սեփականությունը հանդիսացող և ապահովագրական գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքն է, որը հավասար է նյութական ակտիվի սկզբնական արժեքի, կապիտալ ներդրումների և վերագնահատումից օգուտների հանրագումարից՝ նվազեցված դրանց գծով կատարված ամորտիզացիոն հատկացումների, վերագնահատումից կորուստների և արժեզրկումից կորուստների չափով,*

3) Կենտրոնական բանկի համապատասխան նորմատիվ իրավական ակտերի համաձայն հաշվարկված հավասարակշռման պահուստ՝ հաշվեկշռային արժեքով,
4) օտարերկրյա ստորաբաժանման ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկման արդյունքում առաջացող օգուտներից և վնասներից՝ հաշվեկշռային արժեքով,
5) հաշվային պլանի 54-րդ բաժնում հաշվառվող այլ համապարփակ եկամտի այլ տարրերից՝ հաշվեկշռային արժեքով:

6. Լրացուցիչ կապիտալի հաշվարկում չեն ընդգրկվում ապահովագրական գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների, հիմնական կապիտալի մեծությունից պակասեցվող նյութական և ոչ նյութական ակտիվների՝ այլ համապարփակ եկամտի տարր հանդիսացող վերագնահատումից փոփոխությունները, օգուտները և վնասները:

7. Սույն կանոնակարգի իմաստով՝ ապահովագրական գործունեության համար օգտագործվող նյութական ակտիվներ են համարվում այն ակտիվները, որոնք օգտագործվում են ապահովագրական գործունեության, ինչպես նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 79-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված գործառնությունների համար: Ընդ որում, ապահովագրական գործունեության համար օգտագործվող սեփական շենքեր և շինություններ (անշարժ գույք) են համարվում այն նյութական ակտիվները, որտեղ ապահովագրական ընկերությունը և դրա մասնաճյուղերն իրականացնում են ապահովագրական գործունեություն, ինչպես նաև «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 79-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված գործառնություններ:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՐՏՈՆՅԱԼ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Արտոնյալ բաժնետոմսն ընդգրկվում է ապահովագրական ընկերության հիմնական կապիտալի հաշվարկում, եթե բավարարում է հետևյալ պայմանները միաժամանակ.

1) այն ամբողջությամբ վճարված է և օրենքով սահմանված կարգով հաշվապահական հաշվեկշռում արտացոլվում է կանոնադրական կապիտալի «Արտոնյալ բաժնետոմսեր-անվանական արժեք» հաշվում.
2) ապահովագրական ընկերության լուծարման դեպքում արտոնյալ բաժնետիրոջ պահանջները (այդ թվում՝ շահութաբաժինների գծով) ենթակա են բավարարման ապահովագրական ընկերության մյուս բոլոր պահանջատերերի պահանջները բավարարվելուց հետո, բացառությամբ սովորական բաժնետերերի պահանջների.
3) ապահովված չէ ապահովագրական ընկերության հետ փոխկապակցված անձանց երաշխիքով կամ երաշխավորությամբ, և (կամ) արտոնյալ բաժնետոմսի սեփականատերը տնտեսապես և (կամ) իրավական տեսանկյունից ավելի բարենպաստ կարգավիճակում չի հայտնվում այն բանի արդյունքում, որ նրա պահանջը, կանոնադրության համաձայն կամ որևէ այլ կերպ, ենթակա է բավարարման ավելի շուտ, քան ապահովագրական ընկերության լուծարման դեպքում օրենքով տվյալ պահանջի համար սահմանված բավարարման հերթը: Ընդ որում, արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ պահանջը չի կարող հաշվանցվել (զուտացվել) արտոնյալ բաժնետոմսի սեփականատիրոջ՝ ապահովագրական ընկերության հանդեպ ունեցած այլ պարտավորությունների հետ.
4) թողարկված է անժամկետ.
5) արտոնյալ բաժնետոմսի գծով շահութաբաժինը՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի ապահովագրական ընկերության տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը կամ ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի վատթարացմանը, ընդ որում՝

   ա. շահութաբաժնի լրիվ կամ մասնակի չվճարումը ենթակա չէ կուտակման և վճարման հետագայում,

   բ. ապահովագրական ընկերության և արտոնյալ բաժնետիրոջ միջև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում ապահովագրական ընկերության համար շահութաբաժնի ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում արտոնյալ բաժնետիրոջը, բացառությամբ, եթե սահմանափակումը վերաբերում է սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարմանը: Ընդ որում, սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարման՝ սույն պարբերությամբ նշված սահմանափակումը կարող է վերաբերել միայն այն ժամանակահատվածին, որի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի վճարվել արտոնյալ բաժնետոմսին հասանելիք շահութաբաժինը.
6) տվյալ բաժնետոմսի գծով շահութաբաժինները ենթակա են վճարման միայն ապահովագրական ընկերության զուտ շահույթից և (կամ) դրա հաշվին ձևավորված հիմնադրամներից, ընդ որում, շահութաբաժինները վճարվում են միայն դրամական միջոցով.
7) տվյալ բաժնետոմսերի գծով վճարվող շահութաբաժնի չափը չի կարող կախվածության մեջ դրվել ապահովագրական ընկերության վարկանիշից, ֆինանսական վիճակը բնութագրող որևէ ցուցանիշից կամ արտոնյալ բաժնետոմսերի գծով նախկինում վճարված շահութաբաժինների փաստացի մեծությունից.
8) ապահովագրական ընկերությունն անուղղակիորեն չի ֆինանսավորել այդ բաժնետոմսերի ձեռքբերումը.
9) առկա չէ համաձայնություն (որոշում, պայմանագիր, համաձայնագիր), որով արտոնյալ բաժնետոմսի սեփականատերն իրավունք կունենա որևէ սահմանափակում կամ խոչընդոտ նախատեսել ապահովագրական ընկերության կողմից լրացուցիչ սովորական կամ արտոնյալ բաժնետոմսերի հետագա թողարկման կամ նոր ստորադաս փոխառությունների ներգրավման համար.
10) ցանկացած իրավաբանական փաստաթղթով (բացառությամբ՝ ապահովագրական ընկերության կանոնադրության), որով կարգավորվում են ապահովագրական ընկերության և արտոնյալ բաժնետիրոջ միջև արտոնյալ բաժնետոմսի հետ կապված հարաբերությունները, սահմանված է, որ սույն հավելվածով սահմանված պահանջները (պայմանները) փոփոխվելու դեպքում այդ փոփոխությունները ներկայացվում են Կենտրոնական բանկի նախնական համաձայնությանը, առանց որի փոփոխությունները պարտադիր իրավական ուժ չունեն (կողմերի համար չեն առաջացնում իրավական հետևանքներ):

Ենթահավելված 1.2

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՍՏՈՐԱԴԱՍ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Երկարաժամկետ ստորադաս փոխառությունը (այսուհետ նաև՝ փոխառություն) ընդգրկվում է ապահովագրական ընկերության լրացուցիչ կապիտալի հաշվարկում, եթե փոխառությունը (փոխառության պայմանագիրը) բավարարում է հետևյալ պայմանները միաժամանակ.

1) Փոխառությունը չի տրամադրվել ապահովագրական ընկերության հանդեպ ունեցած որոշակի պարտավորության կամ պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով կամ որպես դրանք ապահովելու միջոց:
2) Փոխառությունը ներգրավված է Հայաստանի Հանրապետության դրամով կամ առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներով:
3) Ապահովագրական ընկերության լուծարման դեպքում փոխատուի պահանջները (այդ թվում՝ տոկոսների գծով) ենթակա են բավարարման ապահովագրական ընկերության մյուս բոլոր պարտատերերի պահանջները բավարարվելուց հետո:
4) Փոխառությունն ապահովված չէ ապահովագրական ընկերության և (կամ) նրա հետ փոխկապակցված անձանց երաշխիքով կամ երաշխավորությամբ, և (կամ) փոխատուն տնտեսապես և (կամ) իրավական տեսանկյունից ավելի բարենպաստ կարգավիճակում չի հայտնվում այն բանի արդյունքում, որ նրա պահանջը ենթակա է բավարարման ավելի շուտ, քան ապահովագրական ընկերության լուծարման դեպքում օրենքով տվյալ պահանջի համար սահմանված բավարարման հերթը: Ընդ որում, փոխատուի պահանջը չի կարող հաշվանցվել (զուտացվել) փոխատուի՝ ապահովագրական ընկերության հանդեպ ունեցած այլ պարտավորությունների հետ:
5) Փոխառությունը տրամադրվել է առնվազն 5 տարի ժամկետով: Ընդ որում, փոխառության պայմանագրով փոխառության մայր գումարի մարում կարող է նախատեսվել միայն փոխառության գումարի լրիվ մարման վերջնաժամկետին նախորդող մեկ օրացուցային տարվա ընթացքում, իսկ փոխառության պայմանագրի երկարաձգման դեպքում՝ երկարաձգված ամբողջական մարման վերջնաժամկետին նախորդող մեկ օրացուցային տարվա ընթացքում (բացառությամբ՝ սույն Ենթահավելվածի 7-րդ ենթակետով սահմանված կարգով փոխառության ամբողջ գումարի վաղաժամկետ մարման դեպքերի):
6) Փոխառության պայմանագիրը չի պարունակում այնպիսի դրույթներ (խթաններ), որոնք տնտեսապես կամ այլ կերպ կարող են ստիպել (խթանել) ապահովագրական ընկերությանը ժամկետից շուտ ամբողջությամբ կամ մասնակիորեն մարել փոխառության գումարը: Սույն Ենթահավելվածի 17-րդ ենթակետով սահմանված փոխառության՝ բաժնետոմսերի փոխարկվելու դրույթը չի համարվում սույն ենթակետի իմաստով խթան:
7) Փոխառությունը (մայր գումարը և տոկոսները) ժամկետից շուտ մարման ենթակա չէ, բացառությամբ՝
   ա. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
   բ. եթե ժամկետից շուտ մարման դեպքում փոխառության ամբողջ գումարն ուղղվում է ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալի համալրմանը (սույն կանոնակարգի Հավելված 1-ի 2-րդ կետի համաձայն հիմնական կապիտալի կազմի մեջ մտնող բաժնետոմսերի տեսքով),
   գ. եթե փոխառությունը ժամկետից շուտ մարվում է ապահովագրական ընկերության նախաձեռնությամբ, և եթե պահպանվել են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ.
      գ1. փոխառությունը ժամկետից շուտ մարելու նպատակով ապահովագրական ընկերությունը ստացել է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը,
      գ2. փոխառության ժամկետից շուտ մարման ամսաթվի և փոխառության ստացման ամսաթվի միջև տարբերությունը կազմում է առնվազն 5 օրացուցային տարի:
8) Սույն Ենթահավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետում նշված նախնական համաձայնությունը ստանալու նպատակով ապահովագրական ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ստորադաս փոխառությունը վաղաժամկետ մարելու նպատակահարմարությունը և դրա հետևանքով անցանկալի հետևանքներ չառաջանալը հիմնավորող տեղեկատվությունը և (կամ) փաստաթղթերը: Կենտրոնական բանկը փաստաթղթերը ստանալու պահից 30-օրյա ժամկետում որոշում է կայացնում նախնական համաձայնության տրամադրման կամ մերժման վերաբերյալ, որի մասին ծանուցում է ապահովագրական ընկերությանը 30-օրյա ժամկետի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու և (կամ) ապահովագրական ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում փոփոխություններ, ճշգրտում-

ներ կատարելու անհրաժեշտության դեպքում 30-օրյա ժամկետը կարող է կասեցվել Կենտրոնական բանկի որոշմամբ: Կենտրոնական բանկը սույն Ենթահավելվածի 1-ին կետի 7-րդ ենթակետում նշված նախնական համաձայնությունը տրամադրում է, եթե՝

ա. Ապահովագրական ընկերությունը փոխարինում է ստորադաս փոխառությունը սույն Ենթահավելվածի պահանջները բավարարող մեկ այլ երկարաժամկետ ստորադաս փոխառությամբ կամ սույն կանոնակարգի Ենթահավելված 1.1-ի պահանջները բավարարող արտոնյալ բաժնետոմսերով, և այդ փոխարինումը բացասաբար չի անդրադառնա ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի վրա, կամ

բ. Ապահովագրական ընկերությունը հիմնավորում է, որ իր ընդհանուր կապիտալի մակարդակը, առանց սույն կետում նշված ստորադաս փոխառության, բավարար չափով բարձր է, և նոր կապիտալի գործիքով փոխարինելու անհրաժեշտությունը բացակայում է:

9) Պայմանագրի համաձայն՝ փոխառությունը (մայր գումարը կամ տոկոսները) ենթակա չէ մարման ապահովագրական ընկերության կողմից, եթե փոխառության գումարի և (կամ) դրա գծով տոկոսների մարումը վճարման օրվա դրությամբ կհանգեցնի ապահովագրական ընկերության տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը: Ընդ որում, ապահովագրական ընկերության և փոխատուի միջև որևէ պայմանագրով կամ ապահովագրական ընկերության ներքին կամ անհատական իրավական ակտով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում ապահովագրական ընկերության համար փոխառության գումարի և (կամ) դրա գծով տոկոսների ամբողջական կամ մասնակի չվճարման դեպքում, ինչպես նաև այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունք տրամադրել փոխատուին, բացառությամբ, եթե սահմանափակումը վերաբերում է ապահովագրական ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարմանը և (կամ) լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվող այլ ստորադաս փոխառությունների գծով վճարումների իրականացմանը:
10) Սույն Ենթահավելվածի 9-րդ ենթակետում նշված դեպքում փոխառության մայր գումարի և (կամ) տոկոսների մասնակի կամ ամբողջական չվճարումը չի հանդիսանում ապահովագրական ընկերության կողմից պարտավորությունների չկատարում կամ ոչ պատշաճ կատարում:
11) Փոխառության գծով վճարման ենթակա տոկոսների մեծությունը չի կարող կախվածության մեջ դրվել ապահովագրական ընկերության վարկանիշից, ֆինանսական վիճակը բնութագրող որևէ ցուցանիշից կամ փոխառության գծով կատարված մայր գումարի և (կամ) տոկոսների փաստացի վճարումների մակարդակից: Փոխառության գծով վճարման ենթակա տոկոսների չափը չի կարող նվազել այն դեպքում, երբ փոխառության գծով սահմանված վճարումները ապահովագրական ընկերությունը կատարում է ամբողջությամբ և ժամանակին:
12) Որևէ իրավաբանական փաստաթղթով սահմանված չէ փոխատուի համար իրավունք՝ ժամկետից շուտ պահանջելու փոխառության գումարը միայն այն հիմքով, որ ապահովագրական ընկերությունը պատշաճ կերպով չի կատարել այլ պարտավորությունների գծով իր ստանձնած պարտավորությունները:
13) Փոխառությունը չի տրամադրվել այնպիսի իրավաբանական անձի կողմից, որում ապահովագրական ընկերությունը հանդիսանում է նշանակալից մասնակից, և (կամ) ապահովագրական ընկերությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ֆինանսավորել այդ փոխառության ներգրավումը:
14) Որևէ իրավաբանական փաստաթղթով սահմանված չէ, որ փոխատուն կարող է որևէ կերպ սահմանափակել կամ խոչընդոտել ապահովագրական ընկերությանը այլ փոխատուներից նոր փոխառությունների ներգրավման հարցում:
15) Փոխառության գծով վճարվող գումարների վճարման ժամանակացույցը հստակ նշված է փոխառության պայմանագրում:
16) Այն դեպքում, երբ փոխառության գումարը ապահովագրական ընկերությանը տրամադրվում է փուլերով (տրանշերով), ապա լրացուցիչ կապիտալի հաշվարկում ընդգրկվելու նպատակով յուրաքանչյուր այդպիսի փուլ (տրանշ) պետք է բավարարի սույն հավելվածով սահմանված բոլոր պայմանները, այդ թվում՝ յուրաքանչյուր փուլ պետք է տրամադրվի առնվազն 5 տարի ժամկետով:
17) Փոխառության պայմանագրով նախատեսված է, որ ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի վատթարացման դեպքում փոխառությունը մարվում է փոխառության համապատասխան գումարի չափով ապահովագրական ընկերության կողմից, իսկ փոխատուն պարտավորվում է մարված փոխառության գումարն անհապաղ ուղղել ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալի համալրմանը (այսուհետ՝ փոխարկում)՝ սույն կանոնակարգի Հավելված 1-ի 2-րդ կետի համաձայն հիմնական կապիտալի կազմի մեջ մտնող բաժնետոմսերի տեսքով: Ընդ որում, սույն ենթակետի իմաստով՝ փոխառության համապատասխան գումար է համարվում այն գումարը, որը, Կենտրոնական բանկի կարծիքով, անհրաժեշտ է ապահովագրական ընկերության ֆինանսական վիճակի

վատթարացման հիմքերը վերացնելու (մեղմելու) համար, սակայն ոչ ավելի, քան այն առավելագույն գումարը, որով փոխառությունը սույն Ենթահավելվածի 2-րդ կետով սահմանված իրավիճակն ի հայտ գալուն նախորդող 120 օրվա ընթացքում ներառվել է ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի հաշվարկում: Եթե փոխառությունը ներգրավված է առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներով, ապա ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալի համալրմանն ուղղվող գումարը փոխարկվում է Հայաստանի Հանրապետության դրամի՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի կողմից փոխարկման օրվա համար հայտարարված տվյալ արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

18) Փոխառության պայմանագրով հստակ սահմանվում է այն հարաբերակցությունը, ըստ որի՝ սույն Ենթահավելվածի 1-ին կետի 17-րդ ենթակետով սահմանված փոխարկումն իրականացնելու նպատակով փոխառությունը պետք է փոխարկվի հիմնական կապիտալի կազմի մեջ մտնող բաժնետոմսերի:
19) Փոխառության պայմանագրով սահմանվում է, որ փոխառության պայմանագրի փոփոխության և (կամ) լուծելու դեպքում անհրաժեշտ է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը, առանց որի պայմանագրի ցանկացած փոփոխություն և (կամ) լուծում պարտադիր իրավական ուժ չունեն (կողմերի համար չեն առաջացնում իրավական հետևանքներ):

2. Սույն կանոնակարգի իմաստով՝ ֆինանսական վիճակի վատթարացում է համարվում հետևյալ իրավիճակներից որևէ մեկի ի հայտ գալը.

1) ապահովագրական ընկերության կապիտալի համարժեքության նորմատիվը նվազում է 1.05-ից,
2) Կենտրոնական բանկը գրավոր տեղեկացնում է ապահովագրական ընկերությանն այն մասին, որ կապիտալի գործիքի դուրսգրումը կամ փոխարկումը հիմնական կապիտալի կազմի մեջ մտնող բաժնետոմսերի՝ անհրաժեշտ է, քանի որ առանց դրա ապահովագրական ընկերության մոտ կառաջանան (հնարավոր է, որ առաջանան) օրենքով սահմանված անվճարունակության կամ սնանկության հիմքեր:

3. Այն դեպքերում, երբ փոխառության ներգրավման արդյունքում տվյալ փոխատուից ներգրավված ստորադաս փոխառության արժեքը կգերազանցի ապահովագրական ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10, 20 կամ 50 տոկոսը, կամ փոխատուի՝ ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած ձայնի իրավունք տվող մասնակցության և ապահովագրական ընկերությանը տրամադրած փոխառության հանրագումարը կգերազանցի ապահովագրական ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10, 20 կամ 50 տոկոսը, ապա, նախքան փոխառության գումարը (կամ դրա մի մասը) ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի հաշվարկում ընդգրկելը, փոխատուն պետք է ստանա ապահովագրական ընկերությունում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու վերաբերյալ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» Կանոնակարգ 3/01-ի համաձայն:»

Հավելված 2
Հաստատված է ՀՀ ԿԲ խորհրդի մայիսի 27-ի թիվ 71-Ն որոշմամբ

«Հավելված 3
«Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները»
Կանոնակարգ 3/02-ի

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՊԻՏԱԼԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿ

1. Ոչ կյանքի ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների համար գործառնական ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{գործ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$ՊԿ_{գործ} = \min (0.3 * \sqrt{\sum_{ij} Կոր_{ij} ՊԿ_i ՊԿ_j} ; Ռ_{գործ})$$

$$Ռ_{գործ} = \max (Ռ_{ապվճար}, Ռ_{տուպ})$$

$$Ռ_{ապվճար} = 0.03 * ՎԱ + \max(0; 0.03*(ՎԱ - 1.2 * ՎԱ_0))$$

$$Ռ_{տուպ} = 0.03 * ՏՊ$$

որտեղ՝

$\sqrt{\sum_{ij} Կոր_{ij} ՊԿ_i ՊԿ_j}$ — *հաշվարկվում է սույն կանոնակարգի 23-րդ կետի համաձայն,*

$ՎԱ$ — *հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում վաստակած համախառն ապահովագրավճարների մեծություն,*

$ՎԱ_0$ — *հաշվետու ամսվան և դրան նախորդող 11 ամիսներին նախորդող 12 ամիսների ընթացքում վաստակած համախառն ապահովագրավճարների մեծություն,*

$ՏՊ$ — *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ տեխնիկական պահուստների մեծություն առանց նվազեցնելու վերաապահովագրողի մասնաբաժինը:*

2. Կյանքի ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների համար գործառնական ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{գործ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$ՊԿ_{գործ} = \min (0.3 * \sqrt{\sum_{ij} Կոր_{ij} ՊԿ_i ՊԿ_j} ; Ռ_{գործ}) + 0.25 * Ծ_{կտ}$$

$$Ռ_{գործ} = \max (Ռ_{ապվճար}, Ռ_{տուպ})$$

$$Ռ_{ապվճար} = 0.04 * (ՎԱ - ՎԱ_{կտ}) + \max(0; 0.04*(ՎԱ - 1.2 * ՎԱ_0 – (ՎԱ_{կտ} – 1.2 *ՎԱ_{կտ0})))$$

$$Ռ_{տուպ} = 0.0045 * \max (0; ՏՊ-ՏՊ_{կտ})$$

որտեղ՝

$\sqrt{\sum_{ij} Կոր_{ij} ՊԿ_i ՊԿ_i}$ — *հաշվարկվում է սույն կանոնակարգի 23-րդ կետի համաձայն*

$Ծ_{կտ}$ — *«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում հաշվեգրված ծախսերի մեծություն,*

$ՎԱ$ — *հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում վաստակած համախառն ապահովագրավճարների մեծություն, բացառությամբ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով վաստակած համախառն ապահովագրավճարների,*

$ՎԱ_{առ}$ — *«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում վաստակած համախառն ապահովագրավճարների մեծություն,*

$ՎԱ_0$ — *հաշվետու ամսվան և դրան նախորդող 11 ամիսներին նախորդող 12 ամիսների ընթացքում վաստակած համախառն ապահովագրավճարների մեծություն, բացառությամբ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով վաստակած համախառն ապահովագրավճարների,*

$ՎԱ_{առ0}$ — *«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսվան և դրան նախորդող 11 ամիսներին նախորդող 12 ամիսների ընթացքում վաստակած համախառն ապահովագրավճարների մեծություն,*

$ՏՊ$ — *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ տեխնիկական պահուստների մեծություն (բացառությամբ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով ձևավորված տեխնիկական պահուստների)՝ առանց նվազեցնելու վերաապահովագրողի մասնաբաժինը,*

$ՏՊ_{առ}$ — *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ տեխնիկական պահուստների մեծություն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված կյանքի ապահովագրության պայմանագրերի գծով առանց նվազեցնելու վերաապահովագրողի մասնաբաժինը:»*

Հավելված 3
Հաստատված է ՀՀ ԿԲ խորհրդի մայիսի 27-ի թիվ 71-Ն որոշմամբ

«Հավելված 4
«Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները»
Կանոնակարգ 3/02-ի

ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՊԻՏԱԼԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿ

1. Կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկում ընդգրկելու նպատակով արտարժութային ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{արտ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$ՊԿ_{արտ} = 0.25 * Դ,$$

որտեղ՝

Դ-ն հաշվետու ամսվա յուրաքանչյուր օրվա վերջի դրությամբ ապահովագրական ընկերության արտարժութային համախառն դիրքերից առավելագույնի մեծությունն է: Արտարժութային համախառն դիրքը տարբեր արտարժույթների բաց դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումարն է՝ հաշվարկված համաձայն սույն հավելվածի:

2. Արտարժութային դիրքը ապահովագրական ընկերության արտարժութային ռիսկ պարունակող ակտիվների և արտարժութային ռիսկ պարունակող պարտավորությունների միջև եղած տարբերությունն է: Արտարժութային դիրքերը սահմանվում են.

1) երկար, եթե տարբերությունը մեծ է զրոյից,
2) կարճ, եթե տարբերությունը փոքր է զրոյից,
3) փակ, եթե տարբերությունը հավասար է զրոյի,
4) բաց, եթե տարբերությունը մեծ կամ փոքր է զրոյից:

3. Արտարժութային դիրքերի հաշվարկն իրականացվում է արտարժույթների առանձին տեսակներով: Արտարժութային ռիսկի հաշվարկման իմաստով բանկային ոսկին, ոսկու ստանդարտացված ձուլակտորները, որոնց հարգը ցածր չէ 999-ից, դրանցով արտահայտված պահանջներն ու պարտավորությունները և մետաղական հաշիվները դիտվում են որպես արտարժույթի մեկ տեսակ: Ընդ որում, արտարժութային դիրքերի հաշվարկում չեն ընդգրկվում սույն կանոնակարգի համաձայն հիմնական կապիտալի մեծությունից նվազեցվող արտարժութային ռիսկ պարունակող տարրերը:

4. Արտարժութային դիրքերը հաշվարկվում են յուրաքանչյուր օրվա դրությամբ և արտահայտվում Հայաստանի Հանրապետության դրամով՝ հիմք ընդունելով տվյալ օրվա համար Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը, իսկ բանկային ոսկու, թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորների, մետաղական հաշիվների դեպքում՝ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված թանկարժեք մետաղների հաշվարկային գները: Եթե ապահովագրական ընկերությունն ունի բաց արտարժութային դիրք այնպիսի արտարժույթի գծով, որի փոխարժեքը Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ չի արտացոլվում Կենտրոնական բանկի պաշտոնական էլեկտրոնային կայքում, ապա պետք է հիմք ընդունել տվյալ պետության կենտրոնական բանկի կողմից հաստատված արտարժույթ/ԱՄՆ դոլար և Կենտրոնական բանկի կողմից հաստատված ԱՄՆ դոլար/Հայաստանի Հանրապետության դրամ փոխարժեքները:

5. Այն օրերին, երբ ապահովագրական ընկերության արտարժութային դիրքերը փոփոխությունների չեն ենթարկվել, օրական տվյալների հաշվարկում ընդգրկվում են նախորդ օրվա տվյալները:

6. Ակտիվները կամ պարտավորությունները պարունակում են արտարժութային ռիսկ, երբ դրանց մեծությունները, դրանց գծով ստացվելիք կամ վճարելիք գումարները դրամային արտահայտությամբ ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել արտարժույթի՝ Հայաստանի Հանրապետության դրամի նկատմամբ փոխարժեքի փոփոխությամբ պայմանավորված: Ընդ որում, արտարժութային ռիսկի հաշվարկման իմաստով՝ արտարժութային ռիսկ են պարունակում նաև բանկային ոսկին, թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորները, մետաղական հաշիվները, ինչպես նաև բանկային ոսկով, թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներով արտահայտված ակտիվները և պարտավորությունները:

7. Արտարժութային դիրքերի հաշվարկում ակտիվների և պարտավորությունների մեջ ընդգրկվում են նաև արտարժութային ռիսկ պարունակող արտահաշվեկշռային ածանցյալ գործիքները՝ արտահաշվեկշռում գրանցված գումարների (ներառյալ՝ դրանց գծով արտահաշվեկշռում գրանցված տոկոսները) և հաշվեկշռում հաշվեգրած տույժերի և տուգանքների չափով (եթե այդպիսիք կան), ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող ապահովագրական (վերաապահովագրական) գումարները՝ արտահաշվեկշռում արտացոլված արժեքի 0.07%-ի չափով:»

Հավելված 4
Հաստատված է ՀՀ ԿԲ խորհրդի մայիսի 27-ի թիվ 71-Ն որոշմամբ

«Հավելված 5
«Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները»
Կանոնակարգ 3/02-ի

ՈՉ ԿՅԱՆՔԻ ԱՆԴԵՐՈՒՅԹԻՆԳԻ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՊԻՏԱԼԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ոչ կյանքի անդերռայթինգի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{ոչ\ կյանք}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$ՊԿ_{ոչ\ կյանք} = \sqrt{ՊԿ^2_{ապ} + ՊԿ^2_{աղետ} + 0.5 * ՊԿ_{ապ} * ՊԿ_{աղետ}},$$

որտեղ՝

$ՊԿ_{ապ}$ *ապահովագրավճարների և տեխնիկական պահուստի ռիսկի համար պահանջվող կապիտալ՝ հաշվարկված համաձայն սույն հավելվածի,*

$ՊԿ_{աղետ}$ *աղետների ռիսկի համար պահանջվող կապիտալ՝ հաշվարկված համաձայն սույն հավելվածի:*

2. Սույն հավելվածի համաձայն՝ ոչ կյանքի անդերռայթինգի ռիսկի համար պահանջվող կապիտալի հաշվարկներում չեն ներառվում «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ապահովագրության դասերի գծով համապատասխան ցուցանիշները:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՊԻՏԱԼ

3. Ապահովագրավճարների և տեխնիկական պահուստի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{ապ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԿ_{ապ} = 3 * Գ * \bar{Օ},$$

որտեղ՝

Օ-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$\bar{Օ} = \sum_i Օ_i$$

$$Օ_i = Օ_{ապi} + Օ_{տպi}$$

$$Օ_{ապi} = \max(Ա_i; Ա_{նi}) + Ա_{գործողi} + Ա_{ապագաi}$$

$$Օ_{տպi} = ՏՊ_i$$

որտեղ՝

i — *սույն բաժնի Աղյուսակ 1-ում սահմանված ապահովագրության դասերի խմբեր, $i = 1, 2 \ldots 9$,*

$Ա_i$ — *ապահովագրության դասերի i-րդ խմբի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում վաստակման ենթակա ապահովագրավճարների գնահատված մեծություն՝ նվազեցված վերաապահովագրողի մասնաբաժնի չափով,*

$Ա_{նi}$ — *ապահովագրության դասերի i-րդ խմբի գծով հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում վաստակած ապահովագրավճարների մեծություն՝ նվազեցված վերաապահովագրողի մասնաբաժնի չափով,*

$Ա_{գործողi}$ — *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ ապահովագրության դասերի i-րդ խմբի գործող պայմանագրերի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսներից հետո վաստակման ենթակա ապահովագրավճարների գնահատված մեծություն՝ նվազեցված վերաապահովագրողի մասնաբաժնի չափով,*

$Ա_{ապագաi}$ — *հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում ուժի մեջ մտնող ապահովագրության դասերի i-րդ խմբի պայմանագրերի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսներից հետո վաստակման ենթակա ապահովագրավճարների գնահատված մեծություն՝ նվազեցված վերաապահովագրողի մասնաբաժնի չափով,*

$ՏՊ_i$ *ապահովագրության դասերի i-րդ խմբի գծով հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ ձևավորված պահանջների պահուստի մեծություն՝ նվազեցված վերաապահովագրողի մասնաբաժնի չափով:*

Գ-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$Գ = \frac{1}{Օ}\sqrt{\sum_{i,j} Կոր_{ij} * Գ_i * Օ_i * Գ_j * Օ_j}$$

$$Գ_i = \frac{\sqrt{(Գ_{ապi} * Օ_{ապi})^2 + Գ_{ապi} * Գ_{տպi} * Օ_{ապi} * Օ_{տպi} + (Գ_{տպi} * Օ_{տպi})^2}}{Օ_{ապi} + Օ_{տպi}}$$

որտեղ՝

i,j *սույն բաժնի Աղյուսակ 1-ում սահմանված ապահովագրության դասերի խմբեր, i/j = 1, 2 □ 9,*

Օ *սույն բաժնի համաձայն հաշվարկված համապատասխան մեծություն,*

$Օ_i$, $Օ_j$ *ապահովագրության դասերի i-րդ կամ j-րդ խմբերի համար սույն բաժնի համաձայն հաշվարկված համապատասխան մեծություններ,*

$Գ_i$, $Գ_j$ *ապահովագրության դասերի i-րդ կամ j-րդ խմբերի համար սույն բաժնի համաձայն հաշվարկված համապատասխան մեծություններ,*

$Օ_{ապi}$, $Օ_{տպi}$ *ապահովագրության դասերի i-րդ խմբի համար սույն բաժնի համաձայն հաշվարկված համապատասխան մեծություններ,*

$Գ_{ապi}$, $Գ_{տպi}$ *ապահովագրության դասերի i-րդ խմբի համար սահմանված մեծություններ՝ ըստ ստորև աղյուսակի՝*

Աղյուսակ 1

Հերթական համար (i/j)	**Ապահովագրության դասերի խմբեր**	$Գ_{ապi}$	$Գ_{տպi}$
1.	Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	0.10	0.09
2.	Ցամաքային և երկաթուղային տրանսպորտի ապահովագրություն	0.08	0.08
3.	Օդանավերի, ջրային փոխադրամիջոցների, փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն, օդանավերի և ջրային փոխադրամիջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	0.15	0.11
4.	Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն, գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	0.08	0.10
5.	Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	0.14	0.11
6.	Վարկի ապահովագրություն, երաշխիքի տրամադրում	0.12	0.19
7.	Դատական և արտադատական ծախսերի ապահովագրություն	0.07	0.12
8.	Աջակցության ապահովագրություն	0.09	0.20
9.	Ֆինանսական վնասների ապահովագրություն	0.13	0.20

$Կոր_{ij}$ ապահովագրության դասերի i-րդ և j-րդ խմբերի միջև կոռելյացիայի գործակիցներ՝ ըստ ստորև աղյուսակի՝

Աղյուսակ 2

$Կոր_{ij}$ Ապահովագրության դասերի խմբերի հերթական համարներ՝ համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 1-ի	1	2	3	4	5	6	7	8	9
1	1	0.5	0.5	0.25	0.5	0.25	0.5	0.25	0.5
2	0.5	1	0.25	0.25	0.25	0.25	0.5	0.5	0.5
3	0.5	0.25	1	0.25	0.25	0.25	0.25	0.5	0.5
4	0.25	0.25	0.25	1	0.25	0.25	0.25	0.5	0.5
5	0.5	0.25	0.25	0.25	1	0.5	0.5	0.25	0.5
6	0.25	0.25	0.25	0.25	0.5	1	0.5	0.25	0.5
7	0.5	0.5	0.25	0.25	0.5	0.5	1	0.25	0.5
8	0.25	0.5	0.5	0.5	0.25	0.25	0.25	1	0.5
9	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.5	1

ԲԱԺԻՆ 3. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՊԻՏԱԼ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4. Աղետների ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը (ՊԿ $_{\text{բն. աղետ}}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ПК_{աղետ} = \sqrt{ПК^2_{բն.աղետ} + ПК^2_{մարդ.աղետ}},$$

որտեղ՝

$ПК_{բն.աղետ}$ *բնական աղետների ռիսկի համար պահանջվող կապիտալ՝ հաշվարկված համաձայն սույն հավելվածի 2-րդ գլխի,*

$ПК_{մարդ.աղետ}$ *մարդածին աղետների ռիսկի համար պահանջվող կապիտալ՝ հաշվարկված համաձայն սույն հավելվածի 3-րդ գլխի:*

5. Աղետների ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծության հաշվարկման ժամանակ կիրառվում է սցենարների վրա հիմնված մոտեցումը, այսինքն՝ պահանջվող կապիտալի մեծությունը որոշվում է՝ գնահատելով սահմանված սցենարի ազդեցությունը ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի մեծության վրա՝ հաշվի առնելով առկա վերաապահովագրության պայմանագրերը, արդեն իսկ ձևավորված տեխնիկական պահուստների մեծությունները և այլ գործոններ: Ընդ որում, վերաապահովագրության պայմանագրերը, տեխնիկական պահուստները և այլ գործոնները հաշվի են առնվում միայն այն դեպքում և միայն այն չափով, երբ և որքանով տվյալ սցենարի դեպքում դրանք կարող են ազդել ընկերության ընդհանուր կապիտալի մեծության վրա՝ ազդեցության և՛ դրական, և՛ բացասական ուղղվածության դեպքում:

6. Սույն հավելվածում $ПК = \Delta ЧК | К$ նշագրումը նշանակում է, որ տվյալ ռիսկի մասով պահանջվող կապիտալի մեծությունը հավասար է Կ միանվագ կորստի՝ հաշվետու ամսվա վերջին օրվա ընթացքում ի հայտ գալու արդյունքում ապահովագրական ընկերության՝ սույն կանոնակարգի Հավելված 1-ի համաձայն հաշվարկված ընդհանուր կապիտալի մեծության փոփոխությանը ($\Delta ЧК$): Ընդ որում, $\Delta ЧК$-ն դրական մեծություն է, երբ դիտարկվող սցենարը հանգեցնում է ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի կրճատմանը□ Երբ դիտարկվող սցենարը հանգեցնում է ընկերության ընդհանուր կապիտալի ավելացմանը, ապա տվյալ պարագայում պահանջվող կապիտալի մեծությունը հավասար է 0-ի□

7. Բնական աղետների ռիսկի գնահատման ժամանակ սույն հավելվածով սահմանված ցուցանիշների հաշվարկում դիտարկվում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 3-9-րդ կետերում նշված ապահովագրության դասերի ներքո ապահովագրված պայմանագրերը□

8. Բնական աղետների ռիսկի գնահատման ժամանակ փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրության դեպքում ռիսկի/ապահովագրության օբյեկտի գտնվելու տարածք է համարվում այն տարածքը, որտեղ ապահովագրական ընկերության գնահատմամբ հիմնականում գտնվելու է ռիսկը/ապահովագրության օբյեկտը ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում:

ԳԼՈՒԽ 2. ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՊԱՀԱՆՋ

9. Բնական աղետների ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ПК_{բն.աղետ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ПК_{բն.աղետ} = \sqrt{\sum_i ПК_i^2},$$

որտեղ՝

i *փոթորիկի, երկրաշարժի, ջրհեղեղի, կարկտի, սողանքի ռիսկեր,*

$ПК_i$ *i-րդ ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծություն:*

10. Փոթորիկի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ПК_{փոթորիկ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$ПК_{փոթորիկ} = \sqrt{ПК^2_{(փոթորիկ,ՀՀ)} + ПК^2_{(փոթորիկ,այլ)}}$$

$$ПК_{(փոթորիկ,ՀՀ)} = \Delta ЧК | К_{(փոթորիկ,ՍԳ)}$$

$$Կ_{(փոթորիկ,ԱԳ)} = \sum_{j} 0.0008 * ԱՊ_{փոթորիկj}$$

$$ՊԿ_{(փոթորիկ,այլ)} = ΔՀԿ| Կ_{(փոթորիկ,այլ)}$$

$$Կ_{(փոթորիկ,այլ)} = 1.75 * \max(Ա_{(փոթորիկ,այլ,Ն)}; Ա_{(փոթորիկ,այլ,Ա)})$$

որտեղ՝

$ԱՊ_{փոթորիկj}$ *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ ապահովագրության օբյեկտը փոթորիկի ռիսկից ապահովագրող j-րդ ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումար (նվազեցված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով), երբ ռիսկը/ապահովագրության օբյեկտը գտնվում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներում,*

$Ա_{(փոթորիկ,այլ,Ն)}$ *ապահովագրության օբյեկտը փոթորիկի ռիսկից ապահովագրող ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսում և դրան նախորդող 11 ամիսներում վաստակած համախառն ապահովագրավճարների մեծություն, երբ ռիսկը/ապահովագրության օբյեկտը գտնվում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներից դուրս,*

$Ա_{(փոթորիկ,այլ,Ա)}$ *ապահովագրության օբյեկտը փոթորիկի ռիսկից ապահովագրող ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում վաստակման ենթակա ապահովագրավճարների գնահատված մեծություն, երբ ռիսկը/ապահովագրության օբյեկտը գտնվում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներից դուրս:*

11. Կարկտի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ԿՊ_{կարկուտ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$ՊԿ_{կարկուտ} = \sqrt{ՊԿ^2_{(կարկուտ,ՀՀ)} + ՊԿ^2_{(կարկուտ,այլ)}}$$

$$ՊԿ_{(կարկուտ,ՀՀ)} = ΔՀԿ| Կ_{(կարկուտ,ԱԳ)}$$

$$Կ_{(կարկուտ,ԱԳ)} = \sum_{j} 0.001 * ԱՊ_{կարկուտj}$$

$$ՊԿ_{(կարկուտ,այլ)} = ΔՀԿ| Կ_{(կարկուտ,այլ)}$$

$$Կ_{(կարկուտ,այլ)} = 0.3 * \max(Ա_{(կարկուտ,այլ,Ն)}; Ա_{(կարկուտ,այլ,Ա)})$$

որտեղ՝

$ԱՊ_{կարկուտj}$ *Հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ ապահովագրության օբյեկտը կարկտի ռիսկից ապահովագրող j-րդ ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումար (նվազեցված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով), երբ ռիսկը/ապահովագրության օբյեկտը գտնվում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներում,*

$Ա_{(կարկուտ,այլ,Ն)}$ *Ապահովագրության օբյեկտը կարկտի ռիսկից ապահովագրող ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսում և դրան նախորդող 11 ամիսներում վաստակած համախառն ապահովագրավճարների մեծություն, երբ ռիսկը/ապահովագրության օբյեկտը գտնվում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներից դուրս,*

$Ա_{(կարկուտ,այլ,Ա)}$ *Ապահովագրության օբյեկտը կարկտի ռիսկից ապահովագրող ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում վաստակման ենթակա ապահովագրավճարների գնահատված մեծություն, երբ ռիսկը/ապահովագրության օբյեկտը գտնվում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներից դուրս:*

12. Երկրաշարժի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ԿՊ_{երկրաշարժ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$ՊԿ_{երկրաշարժ} = \sqrt{ՊԿ^2_{(երկրաշարժ,ՀՀ)} + ՊԿ^2_{(երկրաշարժ,այլ)}}$$

$$ՊԿ_{(երկրաշարժ,ՀՀ)} = \sqrt{\sum_{i=1}^{6} ՊԿ^2_{(երկրաշարժ,ԱԳ)i}}$$

$$ՊԿ_{(երկրաշարժ,ԱԳ)i} = ΔՀԿ| Կ_{(երկրաշարժ,ԱԳ)i}$$

$$Կ_{(երկրաշարժ,ԱԳ)i} = \sum_j 0.025 * \ ԱՊ_{երկրաշարժj}$$

$$ՊԿ_{(երկրաշարժ,այլ)} = ΔՀԿ| \ Կ_{(երկրաշարժ,այլ)}$$
$$Կ_{(երկրաշարժ,այլ)} = 1.2 * \max(Ա_{(երկրաշարժ,այլ,Ն)}; Ա_{(երկրաշարժ,այլ,Ա)})$$

որտեղ՝

$ԱՊ_{երկրաշարժj}$ *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ i-րդ տարածքային խմբում գտնվող ապահովագրության օբյեկտը երկրաշարժի ռիսկից ապահովագրող j-րդ ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումար (նվազեցված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով):*
Սույն կետի իմաստով տարածքային խմբերն են՝
Խումբ 1 - Երևան
Խումբ 2 - Արարատ, Արմավիր, Արագածոտն, Վայոց ձոր
Խումբ 3 - Լոռի, Շիրակ, Տավուշ, Գեղարքունիք
Խումբ 4 - Կոտայք
Խումբ 5 - Սյունիք
Խումբ 6 – Արցախ
Եթե ապահովագրության օբյեկտը միաժամանակ գտնվում է 1-ից ավելի տարածքային խմբերում, ապա $ԱՊ_{երկրաշարժj}$ մեծության հաշվարկման ժամանակ պետք է առաջնորդվել սույն կանոնակարգի 28.2-րդ կետով սահմանված սկզբունքով:

$Ա_{(երկրաշարժ,այլ,Ն)}$ *ապահովագրության օբյեկտը երկրաշարժի ռիսկից ապահովագրող ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսում և դրան նախորդող 11 ամիսներում վաստակած համախառն ապահովագրավճարների մեծություն, երբ ռիսկը/ապահովագրության օբյեկտը գտնվում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներից դուրս:*

$Ա_{(երկրաշարժ,այլ,Ա)}$ *ապահովագրության օբյեկտը երկրաշարժի ռիսկից ապահովագրող ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում վաստակման ենթակա ապահովագրավճարների գնահատված մեծություն, երբ ռիսկը/ապահովագրության օբյեկտը գտնվում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներից դուրս:*

13. Ջրհեղեղի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ԿՊ_{ջրհեղեղ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$ՊԿ_{ջրհեղեղ} = \sqrt{ՊԿ^2_{(ջրհեղեղ,ՀՀ)} + ՊԿ^2_{(ջրհեղեղ,այլ)}}$$

$$ՊԿ_{(ջրհեղեղ,ՀՀ)} = ΔՀԿ| \ Կ_{(ջրհեղեղ,ԱԳ)}$$
$$Կ_{(ջրհեղեղ,ԱԳ)} = \sum_j 0.001 * \ ԱՊ_{ջրհեղեղj}$$

$$ՊԿ_{(ջրհեղեղ,այլ)} = ΔՀԿ| \ Կ_{(ջրհեղեղ,այլ)}$$
$$Կ_{(ջրհեղեղ,այլ)} = 1.1 * \max(Ա_{(ջրհեղեղ,այլ,Ն)}; Ա_{(ջրհեղեղ,այլ,Ա)})$$

որտեղ՝

$ԱՊ_{ջրհեղեղj}$ *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ ապահովագրության օբյեկտը ջրհեղեղի ռիսկից ապահովագրող j-րդ ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումար (նվազեցված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով), երբ ռիսկը/ապահովագրության օբյեկտը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում: Բացառություն են կազմում Արարատ, Արմավիր, Կոտայք, Սյունիք, Վայոց ձոր մարզերում գտնվող ռիսկերը/ապահովագրության օբյեկտները, որոնց գծով համապատասխան ցուցանիշները չեն ընդգրկվում հաշվարկում:*

$Ա_{(ջրհեղեղ,այլ,Ն)}$ *ապահովագրության օբյեկտը ջրհեղեղի ռիսկից ապահովագրող ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսում և դրան նախորդող 11 ամիսներում վաստակած համախառն ապահովագրավճարների մեծություն, երբ ռիսկը/ապահովագրության օբյեկտը գտնվում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներից դուրս:*

$Ա_{(ջրհեղեղ,այլ,Ա)}$ *ապահովագրության օբյեկտը ջրհեղեղի ռիսկից ապահովագրող ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում վաստակման ենթակա ապահովագրավճարների գնահատված մեծություն, երբ ռիսկը/ապահովագրության օբյեկտը գտնվում է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքներից դուրս:*

Եթե հնարավոր չէ պարզել, թե տվյալ ապահովագրության օբյեկտը Հայաստանի Հանրապետության որ մարզում է գտնվում (օրինակ՝ տեղեկատվություն առկա չէ ապահովագրական ընկերության համապատասխան բազայում, ապահովագրության օբյեկտը շարժական է և այլն), ապա տվյալ օբյեկտի վերաբերյալ տեղեկատվությունը ներառվում է ջրհեղեղի ռիսկի համար կապիտալի հաշվարկում:

14. Սողանքի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ԿՊ_{սողանք}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$ՊԿ_{սողանք} = ΔԸԿ| Կ_{սողանք}$$
$$Կ_{սողանք} = 0.0005 * ԱՊ_{սողանք}$$
$$Կ_{սողանքj} = \sum_{j} 0.0005 * ԱՊ_{սողանքj}$$

որտեղ՝

$ԱՊ_{սողանքj}$ — *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ ապահովագրության օբյեկտը սողանքի ռիսկից ապահովագրող j-րդ ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական գումար (նվազեցված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով): Այս ցուցանիշի հաշվարկում չեն ընդգրկվում այն ռիսկերի/ապահովագրության օբյեկտների ապահովագրական գումարները, որոնք գտնվում են Արմավիր և Արարատ մարզերում:*

Եթե հնարավոր չէ պարզել, թե տվյալ ապահովագրության օբյեկտը որ մարզում է գտնվում (օրինակ՝ տեղեկատվություն առկա չէ ապահովագրական ընկերության համապատասխան բազայում, ապահովագրության օբյեկտը շարժական է և այլն), ապա տվյալ օբյեկտի վերաբերյալ տեղեկատվությունը ներառվում է սողանքի ռիսկի համար կապիտալի հաշվարկում:

ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴԱԾԻՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՊԱՀԱՆՋ

15. Մարդածին աղետների ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{մարդ.աղետ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԿ_{մարդ.աղետ} = \sqrt{\sum_i ՊԿ_i^2},$$

որտեղ՝

i — *ավիացիոն, հրդեհի, պատասխանատվության, վարկի և երաշխիքի, բեռի և ֆինանսական վնասների ռիսկեր,*

$ՊԿ_i$ — *i-րդ ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծություն:*

16. Ավիացիոն ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{ավիացիա}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԿ_{ավիացիա} = ΔԸԿ| Կ_{ավիացիա}$$
$$Կ_{ավիացիա} = \max(ԱՊ_i)$$

որտեղ՝

$ԱՊ_i$ — *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ գործող i-րդ օդանավի և դրա օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության պայմանագրով/պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարների հանրագումար՝ նվազեցված ոչ պայմանական չհատուցվող գումարների չափով:*

17. Հրդեհի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{հրդեհ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԿ_{հրդեհ} = ΔԸԿ| Կ_{հրդեհ}$$
$$Կ_{հրդեհ} = ԱՊ$$

որտեղ՝

$ԱՊ$ — *ապահովագրական ընկերության հրդեհի ռիսկի ամենամեծ կենտրոնացման մեծություն, որը հավասար է հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ ամենամեծ ապահովագրական գումար (նվազեցված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով) ունեցող ապահովագրված օբյեկտների համախմբի ապահովագրական գումարների (նվազեցված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով) հանրագումարին, եթե բավարարված են հետևյալ պայմանները.*

1) *ապահովագրության օբյեկտը ապահովագրված է «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում նշված ապահովագրության դասի ներքո և ծածկում է գույքին պատճառված վնասը հրդեհի կամ պայթյունի (ներառյալ՝ ահաբեկչության) արդյունքում,*
2) *բոլոր ապահովագրված օբյեկտները ամբողջությամբ կամ մասամբ գտնվում են 200 մետր շառավղով տարածքում:*

Համախմբի ապահովագրության օբյեկտները կարող են ապահովագրվել մեկ կամ մի քանի ապահովագրության պայմանագրերով:

18. Պատասխանատվության ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{պատ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԿ_{պատ} = ΔԸԿ| \ Կ_{պատ}$$
$$Կ_{պատ} = \mathbf{1.3} * \max(Ա_{պատ,Ն}; Ա_{պատ,Ա})$$

որտեղ՝

$Ա_{պատ,Ն}$ *ընդհանուր պատասխանատվության ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում վաստակած համախառն ապահովագրավճարների մեծություն,*

$Ա_{պատ,Ա}$ *ընդհանուր պատասխանատվության ապահովագրության պայմանագրերի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում վաստակման ենթակա համախառն ապահովագրավճարների գնահատված մեծություն:*

19. Վարկի և երաշխիքի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{վարկ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԿ_{վարկ} = \sqrt{ՊԿ^2_{սեռանկ} + ՊԿ^2_{անկում}}$$

$$ՊԿ_{սեռանկ} = ΔԸԿ| \ Կ_{սեռանկ}$$
$$Կ_{սեռանկ} = \max(ԱՊ_i)$$
$$ՊԿ_{անկում} = ΔԸԿ| \ Կ_{անկում}$$
$$Կ_{անկում} = \max(Ա_{անկում,Ն}; Ա_{անկում,Ա})$$

որտեղ՝

$ԱՊ_i$ *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ i-րդ անձի գծով վարկի ապահովագրության և/կամ երաշխիքի պայմանագրով/պայմանագրերով սահմանված ապահովագրական գումարների հանրագումար՝ նվազեցված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով,*

$Ա_{անկում,Ն}$ *վարկի ապահովագրության և երաշխիքի տրամադրման դասերի գծով հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում վաստակած համախառն ապահովագրավճարների մեծություն,*

$Ա_{անկում,Ա}$ *վարկի ապահովագրության և երաշխիքի տրամադրման դասերի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում վաստակման ենթակա համախառն ապահովագրավճարների գնահատված մեծություն:*

20. Բեռի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{բեռ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԿ_{բեռ} = ΔԸԿ| \ Կ_{բեռ}$$
$$Կ_{բեռ} = \max(Ա_{բեռ,Ն}; Ա_{բեռ,Ա})$$

որտեղ՝

$Ա_{բեռ,Ն}$ *բեռների ապահովագրության դասի գծով հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում վաստակած համախառն ապահովագրավճարների մեծություն,*

$Ա_{բեռ,Ա}$ *բեռների ապահովագրության դասի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում վաստակման ենթակա համախառն ապահովագրավճարների գնահատված մեծություն:*

21. Ֆինանսական վնասի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{ֆին}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԿ_{ֆին} = ΔԸԿ| \ Կ_{ֆին}$$
$$Կ_{ֆին} = \mathbf{0.4} * \max(Ա_{ֆին,Ն}; Ա_{ֆին,Ա})$$

որտեղ՝

$Ա_{ֆին,Ն}$ *ֆինանսական վնասների ապահովագրության դասի գծով հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում վաստակած ապահովագրավճարների համախառն մեծություն,*

$Ա_{ֆին,Ա}$ *ֆինանսական վնասների ապահովագրության դասի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում վաստակման ենթակա համախառն ապահովագրավճարների գնահատված մեծություն:*

Հավելված 6
«Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները»
Կանոնակարգ 3/02-ի

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՆԴԵՐՈՒԱՅԹԻՆԳԻ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԻՏԱԼԻ ՊԱՀԱՆՋԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Կապիտալի համարժեքության նորմատիվի հաշվարկում ընդգրկելու նպատակով առողջության անդերռայթինգի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{առողջ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$ՊԿ_{ոչ\ կյանք} = \sqrt{ՊԿ^2_{ապ} + ՊԿ^2_{աղետ} + 0.5 * ՊԿ_{ապ} * ՊԿ_{աղետ}},$$

որտեղ՝

$ՊԿ_{ապ}$ — *ապահովագրավճարների և տեխնիկական պահուստի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծություն՝ հաշվարկված համաձայն սույն հավելվածի,*

$ՊԿ_{աղետ}$ — *աղետների ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծություն՝ հաշվարկված համաձայն սույն հավելվածի:*

2. Սույն հավելվածի համաձայն առողջության անդերռայթինգի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծության հաշվարկներում ներառվում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ապահովագրության դասերի գծով համապատասխան ցուցանիշները:

ԲԱԺԻՆ 2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՊԻՏԱԼ

3. Ապահովագրավճարների և տեխնիկական պահուստի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{ապ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԿ_{ապ} = 3 * Գ * Ō ,$$

որտեղ՝

Ō-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$Ō = \sum_i Ծ_i$$

$$Ծ_i = Ծ_{ապi} + Ծ_{տպi}$$

$$Ծ_{ապi} = \max (Ա_i; Ա_{նi}) + Ա_{գործողi} + Ա_{ապահովագi}$$

$$Ծ_{տպi} = ՏՊ_i$$

որտեղ՝

i — *սույն բաժնի Աղյուսակ 1-ում սահմանված ապահովագրության դասեր, $i = 1, 2$,*

$Ա_i$ — *ապահովագրության i-րդ դասի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում վաստակման ենթակա ապահովագրավճարների գնահատված մեծություն՝ նվազեցված վերաապահովագրողի մասնաբաժնի չափով,*

$Ա_{նi}$ — *ապահովագրության i-րդ դասի գծով հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում վաստակած ապահովագրավճարների մեծություն՝ նվազեցված վերաապահովագրողի մասնաբաժնի չափով,*

$Ա_{գործողi}$ — *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ ապահովագրության i-րդ դասի գործող պայմանագրերի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսներից հետո վաստակման ենթակա ապահովագրավճարների գնահատված մեծություն՝ նվազեցված վերաապահովագրողի մասնաբաժնի չափով,*

$Ա_{ապագաi}$ *հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսների ընթացքում ուժի մեջ մտնող ապահովագրության i-րդ դասի պայմանագրերի գծով հաշվետու ամսվան հաջորդող 12 ամիսներից հետո վաստակման ենթակա ապահովագրավճարների գնահատված մեծություն նվազեցված վերաապահովագրողի մասնաբաժնի չափով,*

$ՏՊ_i$ *ապահովագրության i-րդ դասի գծով հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ ձևավորված պահանջների պահուստի մեծություն նվազեցված վերաապահովագրողի մասնաբաժնի չափով:*

Գ-ն հաշվարկվում է հետևյալ բանաձևերով՝

$$Գ = \frac{1}{Օ}\sqrt{\sum_{i,j} Կոր_{ij} * Գ_i * Օ_i * Գ_j * Օ_j}$$

$$Գ_i = \frac{\sqrt{(Գ_{ապi} * Օ_{ապi})^2 + Գ_{ապi} * Գ_{տպi} * Օ_{ապi} * Օ_{տպi} + (Գ_{տպi} * Օ_{տպi})^2}}{Օ_{ապi} + Օ_{տպi}}$$

որտեղ՝

i,j *սույն բաժնի Աղյուսակ 1-ում սահմանված ապահովագրության դասեր, i/j = 1,2,*

$Օ$ *սույն բաժնի համաձայն հաշվարկված համապատասխան մեծություն,*

$Օ_i$, $Օ_j$ *ապահովագրության i-րդ կամ j-րդ դասերի համար սույն բաժնի համաձայն հաշվարկված համապատասխան մեծություններ,*

$Գ_i$, $Գ_j$ *ապահովագրության i-րդ կամ j-րդ դասերի համար սույն բաժնի համաձայն հաշվարկված համապատասխան մեծություններ,*

$Օ_{ապi}$, $Օ_{տպi}$ *i-րդ ապահովագրության դասի համար սույն բաժնի համաձայն հաշվարկված համապատասխան մեծություններ,*

$Գ_{ապi}$, $Գ_{տպi}$ *ապահովագրության i-րդ դասի համար սահմանված մեծություններ՝ ըստ ստորև աղյուսակի՝*

Աղյուսակ 1

Ապահովագրության դասեր	$Գ_{ապi}$	$Գ_{տպi}$
Առողջության ապահովագրություն	*0.07*	*0.10*
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	*0.09*	*0.13*

$Կոր_{ij}$ *ապահովագրության i-րդ և j-րդ դասերի միջև կոռելյացիայի գործակից, որը հավասար է 0.5-ի:*

ԲԱԺԻՆ 3. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՊԻՏԱԼ

4. Աղետների ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծության հաշվարկման ժամանակ կիրառվում է սցենարների վրա հիմնված մոտեցումը, այսինքն՝ պահանջվող կապիտալի մեծությունը որոշվում է՝ գնահատելով սահմանված սցենարի ազդեցությունը ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի մեծության վրա՝ հաշվի առնելով առկա վերաապահովագրության պայմանագրերը, արդեն իսկ ձևավորված տեխնիկական պահուստների մեծությունները և այլ գործոններ: Ընդ որում, վերաապահովագրության պայմանագրերը, տեխնիկական պահուստները և այլ գործոնները հաշվի են առնվում միայն այն դեպքում և միայն այն չափով, երբ և որքանով տվյալ սցենարի դեպքում դրանք կարող են ազդել ընկերության ընդհանուր կապիտալի մեծության վրա՝ ազդեցության և՛ դրական, և՛ բացասական ուղղվածության դեպքում:

5. Սույն հավելվածում $ՊԿ = ΔՀԿ|Կ$ նշագրումը նշանակում է, որ տվյալ ռիսկի մասով պահանջվող կապիտալի մեծությունը հավասար է Կ միանվագ կորստի՝ հաշվետու ամսվա վերջին օրվա ընթացքում ի հայտ գալու արդյունքում ապահովագրական ընկերության՝ սույն կանոնակարգի Հավելված 1-ի համաձայն հաշվարկված ընդհանուր կապիտալի մեծության փոփոխությանը ($ΔՀԿ$): Ընդ որում, $ΔՀԿ$-ն դրական մեծություն է, երբ դիտարկվող սցենարը հանգեցնում է ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի կրճատմանը: Երբ դիտարկվող սցենարը հանգեցնում է ընկերության ընդհանուր կապիտալի ավելացմանը, ապա տվյալ պարագայում պահանջվող կապիտալի մեծությունը հավասար է 0-ի:

6. Բնական աղետների ռիսկի գնահատման ժամանակ սույն հավելվածով սահմանված ցուցանիշների հաշվարկում դիտարկվում են «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված ապահովագրության դասերի ներքո ապահովագրված պայմանագրերը:

7. Աղետների ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{աղետ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԿ_{աղետ}=\sqrt{ՊԿ^2_{զնգ}+ՊԿ^2_{կենտ}+ՊԿ^2_{պանդեմիկ}},$$

որտեղ՝

$ՊԿ_{զնգ}$ *զանգվածային պատահարների համար պահանջվող կապիտալի մեծություն՝ հաշվարկված համաձայն սույն բաժնի,*

$ՊԿ_{կենտ}$ *կենտրոնացման ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծություն՝ հաշվարկված համաձայն սույն բաժնի,*

$ՊԿ_{պանդեմիկ}$ *պանդեմիկ ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծություն՝ հաշվարկված համաձայն սույն բաժնի:*

8. Զանգվածային պատահարների համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{զնգ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԿ_{զնգ}=ΔԸԿ|\ Կ_{զնգ}$$
$$Կ_{զնգ}=0.0015*\sum_i Գ_i*ՄԳ_i$$

որտեղ՝

ՄԳ$_i$ *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ գործող առողջության և դժբախտ պատահարներից ապահովագրության պայմանագրերի համաձայն i-րդ տեսակի վնասից ապահովագրված անձանց i-րդ տեսակի վնասի առաջացման դեպքում վճարման ենթակա առավելագույն գումարների (ապահովագրական գումարներ՝ նվազեցված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով) հանրագումար:*

$Գ_i$ *i-տեսակի վնասի գործակից՝ համաձայն ստորև աղյուսակի՝*

Աղյուսակ 1

i-րդ տեսակի վնաս	$Գ_i$
Մահ	0.1
Մշտական անաշխատունակություն	0.015
Ժամանակավոր անաշխատունակություն (1-10 տարի)	0.05
Ժամանակավոր անաշխատունակություն (մինչև 1 տարի)	0.135
Բժշկական օգնության անհրաժեշտություն	0.3

9. Կենտրոնացման ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{կենտ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԿ_{կենտ}=ΔԸԿ|\ Կ_{կենտ}$$
$$Կ_{կենտ}=Ք_{կենտ}*\sum_{i}^{Ք_i} Գ_i*ՄՄԳ_i$$
$$ՄՄԳ_i=\frac{1}{Ք_i}\sum_{j=1}^{Ք_j} ՄԳ_{(i,j)}$$

որտեղ՝

$Ք_{կենտ}$ *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ առողջության և դժբախտ պատահարներից ապահովագրության պորտֆելում առկա ամենամեծ կենտրոնացման խմբում ընդգրկված ապահովագրության պայմանագրերով ապահովագրված անձ հանդիսացող անձանց քանակ:*
Ամենամեծ կենտրոնացում է համարվում ապահովագրության պայմանագրերի այն համախումբը, որի համար բավարարված են հետևյալ պայմանները միաժամանակ.

- *համախմբում ընդգրկված պայմանագրերով անձինք ապահովագրված են սույն բաժնի Աղյուսակ 1-ում նշված վնասներից առնվազն մեկից,*
- *համախմբում ընդգրկված պայմանագրերով ապահովագրված անձինք աշխատում և/կամ բնակվում են միևնույն շենքում,*
- *պայմանագրերի տվյալ համախմբի համար $\sum_{i=1}^{5}\sum_{j=1}^{Ք_j} ՄԳ_{(i,j)}$ մեծությունը ամենամեծն է:*

$Ք_i$ *i-րդ տեսակի վնասից ապահովագրված անձանց քանակ, որոնք գտնվում են ամենամեծ կենտրոնացման խմբում,*

$ԱԳ_{(i,j)}$ *i-րդ տեսակի վնասի առաջացման դեպքում j-րդ ապահովագրված անձին վճարման ենթակա առավելագույն գումար (ապահովագրական գումար՝ նվազեցված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով),*

$Գ_i$ *i-տեսակի վնասի գործակից՝ համաձայն սույն բաժնի աղյուսակ 1-ի:*

10. Պանդեմիկ ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{պանդեմիկ}$) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ՊԿ_{պանդեմիկ} = ΔԸԿ| \ Կ_{պանդեմիկ}$$

$$Կ_{պանդեմիկ} = 0.000075 \sum_i ԱԳ_i^{աշխ} + 0.4 \sum_i ԱԳ_i^{ծախս}$$

որտեղ՝

i *հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ առողջության ապահովագրության պայմանագրերով ապահովագրված անձ հանդիսացող անձանց քանակ, եթե ապահովագրության պայմանագրերով ծածկույթ է նախատեսված ինֆեկցիոն հիվանդությունների արդյունքում առաջացող բժշկական ծախսերի և կորցրած աշխատավարձի (եկամտի) փոխհատուցման համար,*

$ԱԳ_i^{աշխ}$ *i-րդ ապահովագրված անձին ինֆեկցիոն հիվանդության պատճառով մշտական անաշխատունակ դառնալու արդյունքում կորցրած աշխատավարձի (եկամտի) մասով վճարման ենթակա առավելագույն գումար (ապահովագրական գումար՝ նվազեցված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով,*

$ԱԳ_i^{ծախս}$ *i-րդ ապահովագրված անձին ինֆեկցիոն հիվանդության պատճառով մշտական անաշխատունակ դառնալու արդյունքում բժշկական ծախսերի փոխհատուցման մասով վճարման ենթակա առավելագույն գումար (ապահովագրական գումար՝ նվազեցված ոչ պայմանական չհատուցվող գումարի չափով):*

Հավելված 7
«Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները»
Կանոնակարգ 3/02-ի

ԿՅԱՆՔԻ ԱՆԴԵՐՌԱՅԹԻՆԳԻ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ԿԱՊԻՏԱԼԻ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿ

1. Կյանքի անդերռայթինգի ռիսկի համար պահանջվող կապիտալի մեծությունը ($ՊԿ_{կյանք}$) սույն գլխի համաձայն կյանքի ապահովագրության առանձին դասերի համար հաշվարկված կապիտալի պահանջների հանրագումարն է:

2. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և (կամ) 2-րդ կետերով սահմանված կյանքի ապահովագրության դասերով (բացառությամբ՝ ի լրումն կյանքի ապահովագրության պայմանագրի իրականացվող դժբախտ պատահարներից, առողջության ապահովագրության) գործունեություն իրականացնող ապահովագրական ընկերության համար նշված դասերի գծով կապիտալի պահանջը մաթեմատիկական պահուստի մեթոդով և ռիսկային կապիտալի մեթոդով հաշվարկվող մեծությունների հանրագումարն է:

3. Կյանքի ապահովագրության դեպքում մաթեմատիկական պահուստի մեթոդով հաշվարկվող մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ԱՊՄ=ՄՊ*ԳՊ*0.04,

որտեղ՝

ԱՊՄ-ն կյանքի ապահովագրության դեպքում մաթեմատիկական պահուստների մեթոդով հաշվարկվող մեծությունն է,

ՄՊ - հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ կյանքի ապահովագրության համապատասխան դասի (դասերի) պայմանագրերի գծով ձևավորված մաթեմատիկական պահուստի մեծությունն է,

ԳՊ - վերաապահովագրության գործակից՝ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ կյանքի ապահովագրության համապատասխան դասի (դասերի) պայմանագրերի գծով ձևավորված մաթեմատիկական պահուստի (նվազեցված մաթեմատիկական պահուստում վերաապահովագրողի մասնաբաժնի չափով) հարաբերությունն է հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ կյանքի ապահովագրության համապատասխան դասի (դասերի) պայմանագրերի գծով ձևավորված մաթեմատիկական պահուստի մեծությանը: Եթե ԳՊ-ն փոքր է 0.85-ից, ապա բանաձևի հաշվարկում այն վերցվում է 0.85 մեծությամբ:

4. Կյանքի ապահովագրության դեպքում ռիսկային կապիտալի մեթոդով հաշվարկվող մեծությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

ՌԿՄ=ՌԿ*ԳՌ*0.003,

որտեղ՝

ՌԿՄ-ն կյանքի ապահովագրության դեպքում ռիսկային կապիտալի մեթոդով հաշվարկվող մեծությունն է,

ՌԿ - հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ ռիսկային կապիտալի մեծությունն է, որը հանդիսանում է կյանքի ապահովագրության համապատասխան դասի (դասերի) պայմանագրերով նախատեսված ապահովագրական գումարի մեծության և այդ պայմանագրերի գծով ձևավորված մաթեմատիկական պահուստի մեծության տարբերություն: Ընդ որում, եթե ապահովագրության պայմանագրով նախատեսված է ապահովագրական գումարի վճարում անուիտետի միջոցով կամ մաս-մաս վճարում կամ նախատեսված է պարբերական վճարումների այլ ձև, ապա ռիսկային կապիտալը հաշվարկվում է որպես այդ գումարների ներկա (զեղչված) արժեքի և այդ պայմանագրերի գծով ձևավորված մաթեմատիկական պահուստի տարբերություն,

ԳՌ - վերաապահովագրության գործակից՝ հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ կյանքի ապահովագրության համապատասխան դասի (դասերի) գծով հաշվարկված ռիսկային կապիտալի մեծության և այդ մեծության մեջ վերաապահովագրողի մասնակցության բաժնի տարբերության (զուտ ռիսկային կապիտալ) հարաբերությունն է հաշվետու ամսվա վերջին օրվա դրությամբ կյանքի ապահովագրության համապատասխան դասի (դասերի) գծով հաշվարկված ռիսկային կապիտալի համախառն մեծությանը: Եթե ԳՌ-ն փոքր է 0.5-ից, ապա բանաձևի հաշվարկում այն վերցվում է 0.5 մեծությամբ:

5. Եթե կյանքի ապահովագրության առանձին պայմանագրերի գծով ռիսկային կապիտալը բացասական մեծություն է, ապա ռիսկային կապիտալի մեթոդով հաշվարկվող մեծության հաշվարկում այն մասնակցում է 0 արժեքով:

6. Կյանքի ապահովագրության այն պայմանագրերի գծով, որոնցով ապահովագրական հատուցում վճարվում է միայն սահմանված որոշակի ժամկետում մահվան դեպքում (կյանքի ժամկետային ապահո-

վագրություն), և այդ պայմանագրի գործողության ժամկետը չի գերազանցում 3 տարին, ռիսկային կապիտալի մեթոդը կիրառելիս սույն հավելվածի 13-րդ կետով սահմանված բանաձևում 0.003-ի փոխարեն օգտագործվում է 0.001 գործակիցը, իսկ եթե պայմանագրի գործողության ժամկետը գերազանցում է 3 տարին, սակայն չի գերազանցում 5 տարին, կիրառվում է 0.0015 գործակիցը:

7. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված ի լրումն կյանքի ապահովագրության պայմանագրի դժբախտ պատահարներից, առողջության ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերության համար կապիտալի պահանջը հաշվարկվում է սույն կանոնակարգի Հավելված 6-ի համաձայն:

8. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով սահմանված կյանքի ապահովագրության դասով գործունեություն իրականացնող ապահովագրական ընկերության համար կապիտալի պահանջը նշված դասի գծով հաշվարկվում է որպես հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում ապահովագրության տվյալ դասի գծով հաշվեգրված կառավարչական ծախսերի (կառավարչական և հասարակական կապերի գծով ծախսեր, ուսուցման ծախսեր և այլ ոչ տոկոսային ծախսեր) 25 տոկոս: Ընդ որում, տվյալ դասի գծով կառավարչական ծախսերի հաշվարկն իրականացվում է համամասնության սկզբունքով, այսինքն՝ հաշվետու ամսվա և դրան նախորդող 11 ամիսների ընթացքում ապահովագրական ընկերության կողմից հաշվեգրված համախառն ապահովագրավճարներում ապահովագրության տվյալ դասի գծով հաշվեգրված մեծության տեսակարար կշիռը կիրառվում է նույն ժամանակահատվածում ապահովագրական ընկերության կողմից հաշվեգրված ընդհանուր կառավարչական ծախսերի նկատմամբ:

9. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ և (կամ) 6-րդ կետերով սահմանված կյանքի ապահովագրության դասերով գործունեություն իրականացնող ապահովագրական ընկերության համար կապիտալի պահանջը նշված դասերի գծով հաշվարկվում է մաթեմատիկական պահուստի մեթոդով:

10. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված կյանքի ապահովագրության դասով գործունեություն իրականացնող ապահովագրական ընկերության համար կապիտալի պահանջը նշված դասի գծով հավասար է տոնտինի ներքո կուտակված ակտիվների 1 տոկոսին:»:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Առաջնորդվելով ֆինանսական կայունության ապահովման՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նպատակով,

նպատակ ունենալով ապահովել նախադրյալներ արտարժութային իրացվելիության բուֆերների ստեղծման համար,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «դ» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունը.

1) Կանոնակարգի 50-51-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«50. Կենտրոնական բանկում պահուստավորման են ենթակա բանկի և օտարերկրյա բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղի կողմից Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով, ինչպես նաև մետաղական հաշիվներով ներգրավված միջոցները: Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության դրամով, ԱՄՆ դոլարով ներգրավված միջոցների դիմաց՝ 16%-ը Հայաստանի Հանրապետության դրամով, իսկ 2%-ը՝ ԱՄՆ դոլարով, եվրոյով ներգրավված միջոցների դիմաց՝ 16%-ը Հայաստանի Հանրապետության դրամով, իսկ 2%-ը՝ եվրոյով, իսկ մնացած այլ արժույթներով, ինչպես նաև մետաղական հաշիվներով ներգրավված միջոցների դիմաց՝ 16%-ը Հայաստանի Հանրապետության դրամով, իսկ 2%-ը՝ ԱՄՆ դոլարով: Ընդ որում, Կանոնակարգ 2-ի 24.1.3 և 24.1.4 կետերին համապատասխան՝ պահուստավորումն ամբողջությամբ կատարվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

Ներգրավված միջոցների դիմաց պարտադիր պահուստավորումն իրականացվում է սույն կանոնակարգի 52-րդ կետով սահմանված ժամանակահատվածներում: Արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետ կապված ռիսկը կրում է բանկը: Արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց սույն կետով սահմանված կարգով առաջին փաստացի պահուստավորման ժամանակահատված է համարվում 2019 թվականի հունիսի 12-ից 2019 թվականի հուլիսի 9-ն ընկած ժամանակահատվածը:

51. Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորման ենթակա գումարի, ինչպես նաև արտարժույթով (այդ թվում՝ մետաղական հաշիվներով) ներգրավված միջոցների դիմաց Հայաստանի Հանրապետության դրամով պահուստավորման ենթակա գումարի մեծության կարգավորումը կատարվում է փաստացի պահուստավորված և պահուստավորման ենթակա միջոցների միջին օրական գումարների համեմատման միջոցով, այնպես, որ փաստացի պահուստավորված միջին օրական գումարը հավասար կամ ավելի լինի հաշվետու ժամանակահատվածում պահուստավորման ենթակա միջոցների միջին օրական գումարից:

Արտարժույթով (այդ թվում՝ մետաղական հաշիվներով) ներգրավված միջոցների դիմաց համապատասխան արտարժույթով պահուստավորման ենթակա գումարի մեծության կարգավորումը կատարվում է օրական կտրվածքով, այնպես, որ փաստացի պահուստավորման ժամանակահատվածում յուրաքանչյուր օր փաստացի պահուստավորված գումարը հավասար կամ ավելի լինի հաշվետու ժամանակահատվածում պահուստավորման ենթակա միջոցների միջին օրական գումարից:

Արտարժույթով (այդ թվում՝ մետաղական հաշիվներով) ներգրավված միջոցների դիմաց՝ հաշվետու ժամանակահատվածում դրամով պահուստավորման ենթակա միջոցների գումարը յուրաքանչյուր

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հունիսի 7-ին (ՀՀՊՏ N15 (651)[1], 26.06.2019):

օրվա համար որոշվում է՝ հիմք ընդունելով արտարժույթով ներգրավված միջոցների օրական դրամային համարժեքը: Օրական դրամային համարժեքը յուրաքանչյուր օրվա համար որոշվում է՝ հիմք ընդունելով տվյալ օրվա՝ Կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը: Մետաղական հաշիվներով ներգրավված միջոցների օրական դրամային համարժեքը որոշվում է՝ հիմք ընդունելով տվյալ օրվա՝ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված ոսկու հաշվարկային գները:

ԱՄՆ դոլարից և եվրոյից տարբերվող արտարժույթներով ներգրավված միջոցների դիմաց արտարժույթով իրականացվող պարտադիր պահուստավորման հաշվարկները կատարվում են կրոս փոխարժեքով՝ հիմք ընդունելով տվյալ օրվա՝ Կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:

Մետաղական հաշիվներով ներգրավված միջոցների դիմաց արտարժույթով իրականացվող պարտադիր պահուստավորման հաշվարկները կատարվում են՝ հիմք ընդունելով տվյալ օրվա՝ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված ոսկու հաշվարկային գները, ինչպես նաև տվյալ օրվա՝ Կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար հայտարարված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական տնային էջում հրապարակմանը հաջորդող օրվանից: Ընդ որում՝ սույն որոշմամբ սահմանված դրույթները վերաբերում են 2019 թվականի հունիսի 12-ից սկսվող փաստացի ժամանակահատվածներին և վերջիններիս համար հիմք հանդիսացող հաշվետու ժամանակահատվածներին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
7 հունիսի 2019 թ., N 75-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնել ներդրումային ընկերությունների կողմից արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների իրականացման պայմանները,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի ««Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը հաստատելու մասին» թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-րդ գլխով.

ԳԼՈՒԽ 17
ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

84. Ներդրումային ընկերությունը Օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված գործառնությունները կարող է իրականացնել միայն այն դեպքում, երբ դրա իրականացումն ուղղակիորեն պայմանավորված է.

1) Օրենքի 25-րդ հոդվածով, 26-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 7-րդ կետերով նախատեսված ծառայությունների մատուցմամբ կամ գործունեության իրականացմամբ, և այն ծավալով, որն անհրաժեշտ է այդ ծառայությունների մատուցման կամ գործունեության իրականացման համար, կամ

2) ներդրումային ընկերության ակտիվների և պարտավորությունների կառավարմամբ՝ առանց առքի և(կամ) վաճառքի փոխարժեքների հրապարակային գնանշման, և այդ գործառնությունները կատարվում են «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված մասնագիտացված անձանց հետ կամ նրանց միջոցով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
14 հունիսի 2019 թ., N 82-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հունիսի 11-ին (ՀՀՊՏ N16 (652), 01.07.2019):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը և 5-րդ մասը և 96-րդ հոդվածի 2-րդ մասը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 9-րդ մասը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ և 17-րդ հոդվածի 3-րդ մասերը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63-րդ հոդվածի 2-րդ մասը, 70-րդ հոդվածը, 83-րդ հոդվածի 2-րդ և 182-րդ հոդվածի 2-րդ մասերը, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 94-րդ հոդվածի 2-րդ մասը, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 9-րդ և 25-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ, 4-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը, «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 17-րդ հոդվածները, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 25-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերը, «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7^1-րդ հոդվածի 4-րդ մասը, «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի 17-րդ ենթակետը և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի ««Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ը հաստատելու մասին» թիվ 166-Ն որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) և Որոշմամբ հաստատված «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, ապահովագրական բրոքերների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդերի կառավարիչների, Կենտրոնական դեպոզիտարիայի և դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ ««ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/03-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,

2) Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հաստատել «Ֆինանսական կազմակերպությունների և ֆինանսական խմբերի կողմից տեղեկությունների հրապարակումը» կանոնակարգ 8/03-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):»,

3) Կանոնակարգը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող վաթսուներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. Ջավադյան
14 հունիսի 2019 թ., N 83-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2019 թ. հունիսի 11-ին (ՀՀԳՏ N16 (652), 01.07.2019):

Հավելված
Հաստատված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2019 թվականի հունիսի 11-ի թիվ 83-Ն որոշմամբ

«Հավելված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2009 թվականի հունիսի 2-ի
թիվ 166-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/03

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 1
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ֆինանսական խմբերի կողմից իրենց և իրենց ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման նվազագույն պահանջները և կարգը:

2. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են բոլոր ֆինանսական կազմակերպությունների, ինչպես նաև ֆինանսական խմբերի վրա՝ բացառությամբ, եթե օրենքով այլ բան է նախատեսված տվյալ տեսակի ֆինանսական կազմակերպության կամ ֆինանսական խմբի համար, կամ կոնկրետ դրույթի բովանդակությունից կամ էությունից բխում է, որ այն վերաբերում է կոնկրետ տեսակի ֆինանսական կազմակերպությանը կամ ֆինանսական խմբի կամ կոնկրետ պահանջը չի տարածվում տվյալ տեսակի ֆինանսական կազմակերպության վրա կամ տվյալ տեսակի ֆինանսական կազմակերպության կամ ֆինանսական խմբի նկատմամբ համապատասխան պահանջը սահմանելու իրավասություն օրենքով վերապահված չէ Կենտրոնական բանկին: Արտարժույթի առուվաճառք իրականացնող անձանց (փոխանակման կետերի) վրա տարածվում են միայն սույն կանոնակարգի 8-րդ գլխով սահմանված դրույթները: Սույն կանոնակարգով սահմանված պահանջները չեն տարածվում որակավորված ներդրողների ֆոնդերի վրա: Ֆոնդի կառավարիչների կողմից կառավարվող ֆոնդերի ակտիվների եկամտաբերության հաշվարկման և հրապարակման վերաբերյալ պահանջները չեն տարածվում նոր ստեղծված ֆոնդերի վրա՝ ֆոնդի ստեղծման պահից մեկ տարվա ընթացքում:

ԳԼՈՒԽ 2
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները.

1) ***հրապարակում***՝ տեղեկությունը հրապարակման միջոցներով (ինտերնետային կայքով, սոցիալական ցանցի պաշտոնական էջ(եր)ով, տեղեկատվական ամփոփագրերով, գովազդային նյութերով, հաղորդակցման միջոցներով (օրինակ՝ տեքստային (SMS) հաղորդագրություններ, ձայնագրվող հեռախոսազանգ, Viber, Whatsapp, Messenger և այլն), էլեկտրոնային հասցեով, հայտարարությունների փակցման, տեխնիկական սարքերի օգտագործմամբ (օրինակ՝ ֆինանսական կազմակերպության գլխամասային գրասենյակում և/կամ մասնաճյուղում տեղադրված դյուրակիր էկրանների միջոցով), զանգվածային լրատվության այլ միջոցներով կամ օրենսդրությամբ նախատեսված այլ միջոցներով) հանրությանը մատչելի դարձնելը,

2) ***սպառող***՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն օգտվել է կամ օգտվում է կամ կարող է օգտվել ֆինանսական կազմակերպության կողմից մատուցվող որևէ ծառայությունից, կամ դիմել է ֆինանսական կազմակերպությանն այդ ծառայությունից օգտվելու նպատակով,

3) ***ներկայացուցչական սպառող***՝ միջնակարգ կրթությամբ, ֆինանսատնտեսագիտական կրթություն կամ աշխատանքային փորձ չունեցող, իրավունակ, 25-34 տարեկան ֆիզիկական անձ, եթե այլ թիրախային սպառող նախատեսված չէ ֆինանսական կազմակերպության կողմից տվյալ հրապարակման համար,

4) ***Ֆինանսական կազմակերպություն***՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկ և օտարերկրյա բանկի մասնաճյուղ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, օտարերկրյա ապահովագրական ընկերության մասնաճյուղ, ապահովագրական բրոքեր, դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպություն, ներդրումային ընկերություն և օտարերկրյա ներդրումային ընկերության մասնաճյուղ, ներդրումային և կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ, օտարերկրյա ներդրումային և կենսաթոշակային ֆոնդի կառավարչի մասնաճյուղ, Կենտրոնական դեպոզիտարիա, արտարժույթի առուվաճառք իրականացնող անձ (փոխանակման կետ), հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատոր,
5) ***Ֆինանսական խումբ***՝ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով Կենտրոնական բանկի կողմից ճանաչված ֆինանսական խումբ,
6) ***Ֆինանսական խմբի պատասխանատու անձ***՝ ըստ «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.15-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի,
7) ***Ֆինանսական խմբի կազմ***՝ ֆինանսական խմբի բոլոր անդամների համախումբ,
8) ***Ինտերնետային կայք***՝ ինտերնետում ֆինանսական կազմակերպության պաշտոնական ինտերնետային կայքը, որի հասցեն ֆինանսական կազմակերպությունը ներկայացնում է Կենտրոնական բանկ սույն կանոնակարգի 8-րդ կետով սահմանված կարգով,
9) ***Սոցիալական ցանցի պաշտոնական էջ***՝ սոցիալական ցանցում (օրինակ՝ Facebook, Twitter, LinkedIn և այլն) ֆինանսական կազմակերպության կողմից ստեղծված էջ, որի հղումը առկա է ֆինանսական կազմակերպության ինտերնետային կայքի առաջին էջում (գլխավոր (դիմային) էջ),
10) ***Տեղեկատվական ամփոփագիր***՝ թերթոններ, ամփոփաթերթեր, բրոշյուրներ, գրքույկներ և այլն, որոնք պարունակում են սույն կանոնակարգի 6-րդ գլխով սահմանված տեղեկությունները,
11) ***Սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ (այսուհետ՝ Անհատական թերթիկ)***՝ փաստաթուղթ, որով սահմանվում են տվյալ սպառողական վարկի գծով վարկային պայմանագրի կնքման դեպքում տվյալ սպառողի համար կիրառելի՝ սպառողական վարկի հիմնական պայմանները, սակագները, սպառողի իրավունքներն ու պարտավորությունները և ժամանակին չկատարելու դեպքում բացասական հետևանքները,
12) ***Ծառայության ընդհանուր պայմաններ***՝ փաստաթուղթ, որով սահմանվում են բոլոր սպառողների համար կիրառելի մատուցվող ծառայության ստանդարտ պայմանները, ֆինանսական կազմակերպության և սպառողի միջև հարաբերությունների ընդհանուր սկզբունքները, ֆինանսական կազմակերպության և սպառողի հաղորդակցման կանոնները, ֆինանսական կազմակերպության և սպառողի միջև կատարվող գործարքների ընդհանուր պայմանները (օրինակ՝ ապահովագրության ընդհանուր պայմաններ, կրեդիտավորման ընդհանուր պայմաններ),
13) ***Գովազդ կամ գովազդային նյութ***՝ տարբեր տեսակի (գրավոր, պատկերազարդ, տեսողական, կամ այլ ձևով) տեղեկատվական և հաղորդակցման միջոցների օգնությամբ (օրինակ՝ տեքստային (SMS) հաղորդագրություններ, ձայնագրվող հեռախոսազանգ, Viber, Whatsapp, Messenger և այլն) ֆինանսական կազմակերպության և իր կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հրապարակվող նյութ, հայտարարություն, հրապարակային կամ անհատական առաջարկ, օֆերտա կամ օֆերտա անելու հրավեր, որի նպատակը տեղեկությունների տարածումն, հետաքրքրություն ձևավորելը կամ պահպանելը և/կամ հանրության ուշադրությունը գրավելն է իր վրա և (կամ) մատուցվող/առաջարկվող ծառայությանը: Որպես գովազդի (գովազդային նյութի) օրինակ կարող է լինել հեռուստատեսությամբ և (կամ) ռադիոյով տարածվող գովազդը, զանգվածային տեղեկատվության տպագիր (օրինակ՝ թերթ, ամսագիր) և էլեկտրոնային (օրինակ՝ ինտերնետ, սոցիալական ցանց, բաներ, էլեկտրոնային փոստով տեքստային կարճ հաղորդագրություններ) միջոցներով հայտարարությունները կամ ծանուցումները, ինքնասպասարկման սարքավորման էկրանին հայտնվող գովազդը և այլն,
14) Բողոք՝ ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 225-Ն որոշմամբ հաստատված «Հաճախորդների բողոքների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ» կանոնակարգ 8/04-ի,
15) ***Բանկային ավանդ***՝ ավանդ և բանկային հաշիվ՝ ըստ «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,
16) ***Սպառողական վարկ, վարկառու, վարկատու***՝ կրեդիտ, սպառող, կրեդիտավորող՝ ըստ «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,
17) ***Կենտրոնական բանկ***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
18) ***Ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարք (ՖԳԻԱՍ)՝ սույն կարգի իմաստով***՝ ավտոմատ գանձման մեքենա (բանկոմատ), վճարումների ընդունման տերմինալ, արժույթի փոխանակման մեքենա, բանկային ավտոմատացված մեքենա,

19) ***Գործունեության վայր***՝ ֆինանսական կազմակերպության գլխամասային գրասենյակ, մասնաճյուղ: Եթե ֆինանսական կազմակերպությունը տվյալ ծառայությունը մատուցում է ֆինանսական կազմակերպության գլխամասային գրասենյակից (մասնաճյուղից) դուրս կամ երրորդ անձի (միջնորդի) միջոցով, ապա գործունեության վայր է համարվում նաև՝ միջնորդի այն գլխամասային գրասենյակը, մասնաճյուղը և(կամ) այն վայրը, որտեղ այդ ծառայությունը մատուցվում է: Այն դեպքում, երբ ծառայությունը մատուցվում է միայն ՖԳԻԱՍ-ների միջոցով՝ գրասենյակից, մասնաճյուղից կամ մատուցվող ծառայության վայրից դուրս և կամ ծառայության մատուցումը մասամբ պատվիրակված է այլ կազմակերպությանը (օրինակ՝ վարկի կանխիկացումը վարկային կազմակերպությունը իրականացնում է այլ բանկի կամ վճարահաշվարկային կազմակերպության միջոցով), ապա նշված դեպքերում ՖԳԻԱՍ-ի տեղակայման վայրը և պատվիրակված կազմակերպության տարածքը չի համարվում գործունեության վայր,

20) ***ԱՊՊԱ, Բյուրո, երաշխավորման ֆոնդ, Բոնուս-Մալուս համակարգ՝ ըստ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,***

21) ***Հրապարակային ֆոնդ (այսուհետ՝ ֆոնդ), ենթաֆոնդ, ֆոնդի փայ (այսուհետ՝ փայ), ֆոնդի զուտ ակտիվների արժեք, փայի հաշվարկային արժեք, ֆոնդի կառավարիչ, ֆոնդի պահառու, ֆոնդի գործակալ, բաժնետոմս կամ այլ բաժնային արժեթուղթ (այսուհետ՝ բաժնետոմս), բաց ֆոնդ, փակ ֆոնդ, միջակայքային ֆոնդ, պայմանագրային ֆոնդ, կորպորատիվ ֆոնդ, կենսաթոշակային ֆոնդ***՝ ըստ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

22) ***Իմաստալից հենանիշ***՝ ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» կանոնակարգ 4/07-ի,

23) ***Ֆոնդի եկամտաբերություն, հաշվարկման օր***՝ ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ի,

24) ***Մասնակից, կենսաթոշակային հաշիվ, կենսաթոշակային ֆոնդ, կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ, հաշվի օպերատոր***՝ ըստ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

25) ***Հաշվառման հաշիվ, գործակալ, տարածող***՝ ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հունվարի 13-ի թիվ 2-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային փողերի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողերով գործարքների իրականացմանը ներկայացվող պահանջները» Կանոնակարգ 16/2-ի,

26) ***Ծրագրային հավելված***՝ ֆինանսական կազմակերպության կողմից գործարկված (մշակված) ծրագիր կամ ծրագրերի համախումբ (օրինակ՝ բջջային, ինտերնետ (վեբ) հավելված),

27) ***Հիպոտեկային կրեդիտ***՝ ըստ «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության,

28) ***Լողացող տոկոսադրույք***՝ ըստ «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նշանակության:

ԳԼՈՒԽ 3
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

4. Ֆինանսական կազմակերպության կողմից տեղեկություններ հրապարակելիս պահպանվում են հետևյալ ընդհանուր սկզբունքները.

1) տեղեկատվությունը ներկայացվում է ճշգրիտ, հստակ և արժանահավատ, այն չպետք է լինի ապակողմնորոշիչ, ոչ լիարժեք կամ խեղաթյուրված, օրինակ՝ մատուցվող ծառայությունների էական պայմանները չպետք է ինչ-որ ձևով քողարկված լինեն բովանդակության, դիզայնի, կառուցվածքի կամ ներկայացման միջոցով, ինչպես նաև տեղեկատվությունը չպետք է ազդեցություն ունենա ծառայության կամ ֆինանսական կազմակերպության նկատմամբ սպառողի վերաբերմունքի վրա՝ անճշտության, անորոշության, չափազանցության կամ թերներկայացման միջոցով,

2) տեղեկատվությունը ներկայացվում է ժամանակին և ամբողջական (բավարար չափով՝ ըստ կանոնակարգով սահմանված համապատասխան պահանջի),

3) ֆինանսական կազմակերպության և նրա կողմից մատուցվող միևնույն ծառայության վերաբերյալ տեղեկատվությունը, որը հրապարակվում է հրապարակման տարբեր միջոցներով կամ բացահայտվում է գործունեության վայրում, չպետք է լինի իրարամերժ և տարբեր ֆինանսական կազմակերպության վերաբերյալ իրական տեղեկատվությունից և նրա կողմից մատուցվող ծառայության իրական (փաստացի) պայմաններից,
4) տեղեկատվությունը ներկայացվում է ներկայացուցչական սպառողի համար պարզ, հասկանալի և մատչելի լեզվով (տեքստի շարադրանքով)՝ առանց շփոթեցուցիչ, խրթին կամ մոլորեցնող բառերի, արտահայտությունների, խիստ մասնագիտական, տեխնիկական եզրույթների (օրինակ՝ ֆինանսական կազմակերպությունը պետք է խուսափի այնպիսի բառերի օգտագործումից, ինչպիսին «կետանց» բառն է): Տեղեկատվությունը համարվում է պարզ և հասկանալի, եթե ներկայացուցչական սպառողը հասկանում է տեղեկատվությունն առանց դժվարության կամ որևէ մեկի օգնության,
5) տեղեկատվությունը ներկայացվում է առնվազն հայերեն լեզվով (բացառությամբ՝ օտար լեզուներով տպագրվող թերթերի, հատուկ հրատարակությունների և այն դեպքերի, երբ սպառողի և ֆինանսական կազմակերպության միջև առկա է համաձայնություն այլ լեզվով հաղորդակցվելու վերաբերյալ): Ընդ որում, օտար լեզվով հրապարակված տեղեկատվությունը պետք է չհակասի դրա հայերեն տարբերակին և նշում պարունակի այն մասին, որ տարբեր լեզուներով հրապարակված տեղեկատվության միջև անհամապատասխանություն բացահայտվելու դեպքում անհրաժեշտ է ղեկավարվել հայերեն տարբերակով, ինչպես նաև, որ նշված խնդրի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը կարելի է ստանալ հայերեն տարբերակից, եթե այդ օտար լեզվով հրապարակված տեղեկատվությունն ամբողջական չէ,
6) տեղեկատվությունը շարադրվում է ներկայացուցչական սպառողի համար հեշտ ընթեռնելի տառաչափերով և տառատեսակներով և տեսանելի ձևով (օրինակ՝ հայտարարության ձևով փակցվելու դեպքում տեղադրվի տեսանելի վայրերում),
7) տեղեկատվությունն այնպես է ներկայացվում, որ ներկայացուցչական սպառողը հեշտությամբ գտնի իրեն հետաքրքրող տեղեկատվությունը: Օրինակ՝ տեքստը պարունակում է վերնագրեր, առանձին բացատրական նշումներ, բովանդակության վերաբերյալ առանձին բաժին, տեքստի առավել կարևոր մասերը շեղատառերով կամ ավելի մեծ տառաչափերով են արտացոլվում՝ սպառողների ուշադրությունը դրանց վրա հրավիրելու նպատակով,
8) տեղեկատվության մեջ չեն կարող օգտագործվել այնպիսի տեղեկություններ կամ այլ անձանց կողմից այդ ֆինանսական կազմակերպության վերաբերյալ կատարված հայտարարություններ, որոնք կարող են թյուր ենթադրության տեղիք տալ տվյալ ֆինանսական կազմակերպության ֆինանսական վիճակի, ֆինանսական շուկայում նրա զբաղեցրած դիրքի, հեղինակության, գործարար համբավի կամ իրավական կարգավիճակի վերաբերյալ,
9) տեղեկատվությունում առկա անվանումները, տեքստերը, հղումները, կանխատեսումները, բնութագրումը կամ գովասանքը, ծառայության վերաբերյալ հատուկ տեղեկությունները և նախազգուշացումները ներկայացվում են հստակ,
10) տեղեկատվությունում առկա տողատակի ծանոթագրությունները կամ մանր շարվածքով տեքստերը ընթեռնելի լինելու համար ներկայացվում են բավարար մեծությամբ, ինչպես նաև հղում է կատարվում համապատասխան աղբյուրին՝ մանրամասներին ծանոթանալու համար,
11) տեղեկատվության բովանդակությունը ներկայացվում է այնպես, որ ներկայացուցչական սպառողի համար լինի տեղին և իմաստալից ֆինանսական կազմակերպության ծառայությունը հասկանալու և իր պահանջմունքներին համապատասխանությունը գնահատելու տեսանկյունից,
12) այն դեպքում, երբ տեղեկատվությունը պարունակում է համեմատություններ այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների հետ, ապա

ա. այդ համեմատությունները ներկայացվում են անկողմնակալ և հավասարակշռված ձևով, մասնավորապես արգելվում է անբարեխիղճ մրցակցության մեթոդների կիրառումը՝ նշելով այլ ֆինանսական կազմակերպությունների ցանկացած թերություններ՝ անկախ այն հանգամանքից, թե այդ տեղեկություններն իրականում հավաստի են, թե ոչ,

բ. համեմատություններում նշվում են համեմատությունների համար հիմք հանդիսացած տեղեկությունների աղբյուրները (օրինակ՝ կոնկրետ հետազոտությունները, կոնկրետ հրապարակումներում ներառված տեղեկատվությունը կամ այլ),

գ. համեմատություններում ներառվում են այն հիմնական փաստերը կամ ենթադրությունները, որոնք հիմք են հանդիսացել համեմատության կատարման համար (օրինակ՝ երկու ֆինանսական կազմակերպության ավտովարկ համեմատելիս համեմատության հիմքում ընկած ենթադրություն կարող են հանդիսանալ վարկի ժամկետը, գումարը և տոկոսադրույքը (համեմատվում են, օրինակ, 2 տարի ժամկետով, 3 միլիոն գումարով, ֆիքսված անվանական տոկոսադրույքով վարկերը)),

13) եթե ծառայության մասին տեղեկատվությունում առանձնահատուկ շեշտադրվել են ֆինանսական կազմակերպության կողմից մատուցվող ծառայություններից սպասվելիք օգուտները, ապա միաժամանակ առկայության դեպքում ներկայացվում է անկողմնակալ և աչքի ընկնող ձևով տեղեկատվություն հնարավոր էական ***ռիսկերի*** մասին,
14) ֆինանսական կազմակերպությանն արգելվում է վարկերի վերաբերյալ իրականացվող որևէ գովազդում, հայտարարությունում կամ հրապարակման այլ միջոցներով կիրառել «անվճար» կամ նմանատիպ իմաստ ունեցող այլ բառեր, եթե
    ա. որոշակի ժամանակահատվածում ֆինանսական կազմակերպության կողմից գանձվում կամ գանձվելու է որևէ վճար,
    բ. հետագա վարկերի համար գանձվում կամ կարող է գանձվել տոկոսագումար և/կամ որևէ վճար,
    գ. որոշակի գործոններից ելնելով՝ կարող է գանձվել տոկոսագումար և/ կամ որևէ վճար,
15) տպագիր կամ այլ ձևով հրապարակվող տեղեկատվությունը պարունակում է աչքի ընկնող և առանձնացված ձևով (այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և (կամ) այլ ձևով) նշում այն մասին, որ ֆինանսական կազմակերպությունը վերահսկվում է Կենտրոնական բանկի կողմից,
16) ֆինանսական կազմակերպությունը պետք է պատշաճ քայլեր (պարբերաբար վերահսկի իր մասին հրապարակված տեղեկատվությունը) ձեռնարկի, որ իր կողմից այլ տեղեկատվական ուղիներով (օրինակ՝ այլ ոչ պաշտոնական ինտերնետային կայք, բջջային հավելված) հրապարակվող տեղեկատվությունը, ծառայության պայմանները համահունչ լինեն ընկերության պաշտոնական կայքով հրապարակվող տեղեկատվության հետ, իսկ այլ անձանց (օրինակ՝ ֆինանսական ծառայությունների մասին իրազեկող էլեկտրոնային հարթակներ, էլեկտրոնային թերթեր, ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցող վաճառքի սրահներ, այլ կազմակերպություններ) կողմից տվյալ ֆինանսական կազմակերպության մասին հրապարակած տեղեկատվությունը հնարավորինս բավարարի վերոնշյալ սկզբունքներին:

Գ Լ ՈՒ Խ 4
ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔ

5. Սույն գլուխը սահմանում է ֆինանսական կազմակերպության ինտերնետային կայքում հրապարակման ենթակա տեղեկատվության կազմը, տեղեկատվության նկատմամբ պահանջները, հրապարակման կարգը և պայմանները: Սույն կանոնակարգով սահմանված տեղեկություններից բացի, ֆինանսական կազմակերպությունները կարող են իրենց հայեցողությամբ իրենց ինտերնետային կայքում տեղադրել օրենքով չարգելված այլ տեղեկություններ:

6. Ֆինանսական կազմակերպությունները պետք է ունենան ինտերնետային կայք: Ինտերնետային կայք ունենալու պահանջը չի տարածվում այն ֆինանսական կազմակերպությունների վրա, որոնք, համաձայն իրենց կանոնադրության, հրապարակային առաջարկի միջոցով ծառայություններ չեն մատուցում ֆիզիկական անձանց: Բոլոր դեպքերում ինտերնետային կայք ունեցող բոլոր ֆինանսական կազմակերպությունների ինտերնետային կայքերը պետք է բավարարեն սույն գլխի պահանջները:

7. Ֆինանսական կազմակերպությունները ստեղծման կամ վերակազմակերպման ամսաթվից 10 աշխատանքային օրվա ընթացքում ապահովում են ճանաչում ունեցող հիմնական դիտարկիչներով (օրինակ՝ Google Chrome, Safari, Internet Explorer և այլն) ինտերնետային կայքի հասանելիությունը: Ընդ որում՝

1) Ինտերնետային կայքը տարբեր դիտարկիչներով պետք է ունենա համարժեք դիտման հնարավորություն և ներկայացվի նույն ձևով,
2) ինտերնետային կայքի հասցեն մուտքագրելուց հետո առաջին հերթին հայտնվում է կայքի առաջին էջը (գլխավոր (դիմային) էջ), ընդ որում, հայտնվող առաջին էջը ներկայացվում է պարտադիր հայերենով, իսկ այլ լեզուներով՝ միայն սպառողի կողմից կայքում համապատասխան լեզուն ընտրելու դեպքում: Այն դեպքում, երբ սպառողը մուտք է գործում կազմակերպության ինտերնետային կայք Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, հայտնվող առաջին էջը կարող է ներկայացվել այլ լեզվով,
3) ինտերնետային կայքում այլ լեզուներով առկա տեղեկատվությունը պետք է համապատասխանի հայերենով ներկայացված տարբերակին:

8. Ֆինանսական կազմակերպությունն իր ինտերնետային կայքի գործարկման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկ է ներկայացնում ինտերնետային կայքի տվյալները

(հասցեն): Ինտերնետային կայքի տվյալների փոփոխության դեպքում ինտերնետային կայքի նոր տվյալները տրամադրվում են Կենտրոնական բանկին փոփոխությունից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:

9. Ֆինանսական կազմակերպություններն իրենց ինտերնետային կայքում մշտապես հրապարակում են իրենց վերաբերող Հայաստանի Հանրապետության օրենքներով և (կամ) սույն կանոնակարգով սահմանված տեղեկությունները:

10. Ֆինանսական կազմակերպություններն ապահովում են իրենց ինտերնետային կայքում տեղակայված տեղեկատվության մշտապես թարմացումը և հասանելիությունը սպառողների համար: Ընդ որում՝

1) Սահմանված տեղեկատվության փոփոխության դեպքում այն տեղադրվում է ինտերնետային կայքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ, եթե օրենքով կամ սույն կանոնակարգով կոնկրետ տվյալ տեղեկատվության համար թարմացման այլ ժամկետ սահմանված չէ,
2) Մատուցվող ծառայությունների սակագների, փոխարժեքների, միջնորդավճարների և այլ վճարների, ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանների փոփոխության դեպքում փոփոխված տեղեկատվությունը տեղադրվում է այդ ծառայությունը նկարագրող էջում ոչ ուշ, քան նոր սակագնով, փոխարժեքով, միջնորդավճարով կամ այլ վճարով, կամ փոփոխված պայմաններով ծառայության մատուցման պահը: Այն դեպքում, երբ ծառայությունը տարբեր ժամանակահատվածներում մատուցվում է տարբեր ծառայության մատուցման պայմաններով, սակագներով, փոխարժեքով, միջնորդավճարով կամ այլ վճարով, ապա կայքում դրանք նշվում են ըստ ժամանակահատվածների (օր/ամիս/տարի, ժամ:րոպե), որոնց համար կիրառելի են,
3) ֆինանսական կազմակերպությունն ինտերնետային կայքի յուրաքանչյուր էջի վրա՝ տեսանելի մասում նշում է կատարում, թե երբ է (ամսաթիվ/ամիս/տարի, ժամ, րոպե) թարմացվել տվյալ էջի տեղեկությունը,
4) եթե ֆինանսական կազմակերպության ինտերնետային կայքը կամ դրա որևէ բաժին կամ հատված գտնվում է վերակառուցման մեջ կամ ինչ-որ պատճառով չի գործելու ինչ-որ ժամանակահատվածում, ապա ամբողջ ինտերնետային կայքի դեպքում՝ կայքի առաջին էջը, իսկ կայքի որևէ բաժնի կամ հատվածի դեպքում համապատասխան բաժինը կամ հատվածը նշում է պարունակում այդ մասին, ինչպես նաև նշում է այն ժամկետը, մինչև երբ ինտերնետային կայքը (դրա առանձին հատվածը) չի գործելու և այն հեռախոսահամարները, որոնցով սպառողը կարող է ստանալ սպառիչ և ճշգրիտ տեղեկություններ հրապարակման ենթակա ցանկացած տեղեկատվության վերաբերյալ: Ինտերնետային կայքը կամ դրա առանձին մասերը ինտերնետային կայքի վերակառուցման կամ ֆինանսական կազմակերպության մեղքով առաջացած այլ պատճառներով չգործելու ժամկետը չի կարող ավելի լինել, քան 5 աշխատանքային օրը:

11. Ֆինանսական կազմակերպության ինտերնետային կայքում հրապարակված տեղեկությունները ներկայացվում են ***համակարգված***՝ ըստ սույն գլխի 13-րդ կետով սահմանված բաժինների: Ընդ որում՝ կանոնակարգի սույն գլխով սահմանված բաժինների վերնագրերը կարող են ձևափոխվել, սակայն այնպես, որ վերնագրերից ակնհայտ լինի տվյալ բաժնի բովանդակությունը, ինչպես նաև առաջին էջի՝ սույն կանոնակարգի 13-րդ կետով սահմանված բոլոր բաժինները պետք է տեղադրվեն նույն, հնարավորինս տեսանելի և ընթեռնելի ձևով:

12. Այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպության ինտերնետային կայքում կան հղումներ այլ անձանց ինտերնետային կայքերին, ապա ֆինանսական կազմակերպությունն այդ հղմանը զուգահեռ նույն էջում հրապարակում է նաև հայտարարություն այն մասին, որ նա պատասխանատվություն չի կրում այդ ինտերնետային կայքերի բովանդակության ստույգության և արժանահավատության, այնտեղ տեղադրված գովազդների համար, և ֆինանսական կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում այդ ինտերնետային կայքերում տեղադրված տեղեկատվության օգտագործման հնարավոր հետևանքների համար:

13. Ֆինանսական կազմակերպության ինտերնետային կայքի հասցեն մուտքագրելուց հետո հայտնվող առաջին էջում անմիջապես, աչքի ընկնող վայրում ներկայացվում են հղումներ (լինքեր) առնվազն հետևյալ տեղեկությունները պարունակող էջերին՝ բաժիններին.

1) ***Մեր մասին***,
2) ***Սեփականատերեր,***
3) ***Հաշվետվություններ***,
4) ***Մատուցվող ծառայություններ*** (ներկայացվում է ըստ թիրախային խմբերի, օրինակ՝ ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց մատուցվող ծառայություններ),

5) ***Իրավական ակտեր***,
6) ***Սպառողի իրավունքներ,***
7) ***Հետադարձ կապ***,
8) ***Սոցիալական ցանց*** (սոցիալական ցանցերում պաշտոնական էջի առկայության դեպքում),
9) ***Գործակալներ*** (միայն ապահովագրական ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և էլեկտրոնային փողի սպասարկման և իրացման դեպքում (առկայության դեպքում)),
10) ***Հաշվիչ*** (առկայության դեպքում կարող է ներկայացվել նաև տվյալ պրոդուկտի էջում),
11) ***Փնտրման կամ որոնման միջոց (պատուհան),*** որն ապահովում է ինտերնետային կայքում տեղեկատվության որոնումը,
12) ***Առցանց հայտեր*** (առկայության և տեխնիկական հնարավորության դեպքում),
13) ***Օգտակար հղումներ,*** որտեղ հրապարակվում են հղումներ առնվազն հետևյալ ինտերնետային կայքերին.

    ա. Կենտրոնական բանկի ինտերնետային կայք (www.cba.am),

    բ. սպառողների համար ստեղծված «Ֆինանսներ բոլորի համար» ինտերնետային կայք (www.abcfinance.am),

    գ. «Ձեր ֆինանսական տեղեկատուն» ինտերնետային կայք (www.fininfo.am),
14) սպասարկման հեռախոսահամարը (առկայության դեպքում՝ շուրջօրյա սպասարկման հեռախոսահամարը), որի միջոցով սպառողը կարող է կապվել ֆինանսական կազմակերպության համապատասխան բաժնի, ծառայության հետ՝ օգնություն կամ խորհրդատվություն ստանալու նպատակով:

14. **«Մեր մասին»** բաժնում ներկայացվում են.

1) ֆինանսական կազմակերպության առաքելությունը/գործունեության նպատակը, տեսլականը և արժեքները,
2) ընդհանուր տեղեկություններ, որոնք առնվազն ներառում են ֆինանսական կազմակերպության և գործունեության պատմությունը, այդ պատմության ընթացքում հիմնադրման, վերակազմակերպման, անվանափոխության, գործունեության բնույթի/տեսակի փոփոխության մասին տեղեկություններ (նշել նաև այդ իրադարձությունների տարեթվերը):
3) ֆոնդի կառավարիչը հրապարակում է հայտարարություն ֆոնդերի տեսակի փոփոխման, վերակազմակերպման, ինչպես նաև դրանց հետ կապված ֆոնդի կանոններում (կանոնադրությունում) կատարված փոփոխությունների՝ Կենտրոնական բանկի կողմից գրանցման մասին՝ համապատասխանաբար իրավասու մարմնի կողմից որոշում կայացնելուց և Կենտրոնական բանկում համապատասխան փոփոխությունները գրանցելուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան դրան հաջորդող աշխատանքային օրը: Ընդ որում, հայտարարության մեջ ներկայացվում է առնվազն տեղեկատվություն մասնակիցների, նրանց իրավունքների և պարտականությունների վրա ֆոնդերի տեսակների փոփոխության, վերակազմակերպման ազդեցության և հետևանքների մասին, և նշում այն մասին, թե երբ են ֆոնդի կանոնների (կանոնադրության) փոփոխություններն ուժի մեջ մտնում,
4) ֆինանսական կազմակերպության ներքին վարչակազմակերպական կառուցվածքը գծապատկերի տեսքով: Եթե ֆինանսական կազմակերպությունը ընդգրկված է որևէ խմբի (այդ թվում՝ ֆինանսական խմբի), հոլդինգի, կոնցեռնի, միության կամ ցանկացած այլ հիմքով իրենց ֆինանսական հաշվետվությունները համախմբող անձանց կազմում, ապա ներկայացվում է տվյալ խմբի, հոլդինգի, կոնցեռնի, միության կառուցվածքը՝ գծապատկերի տեսքով, կամ հղում՝ համապատասխան ինտերնետային էջին, որտեղ առկա է այդ կառուցվածքի գծապատկերային նկարագրությունը,
5) ֆինանսական խմբի պատասխանատու անձն իր ինտերնետային կայքում հրապարակում է ֆինանսական խմբի կազմը և կառուցվածքը՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ով սահմանված գծապատկերի, ինչպես նաև ներկայացնում հղում ֆինանսական խմբի անդամների պաշտոնական ինտերնետային կայքի գլխավոր էջերին,
6) Ֆինանսական կազմակերպության գլխամասի գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ինչպես նաև մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ցանկը՝ գտնվելու վայրերը, հեռախոսահամարները և աշխատանքային ժամերը, ֆինանսական կազմակերպության ՖԳԻԱՍ-երի ցանկը՝ հասցեներով,
7) ֆինանսական կազմակերպության մասնաճյուղի (ներկայացուցչության) գործունեությունը ժամանակավոր կամ ընդմիշտ դադարեցվելու դեպքում այդ դադարեցումից 5 աշխատանքային օր առաջ (բացառությամբ այն դեպքերի, երբ մասնաճյուղի (ներկայացուցչության) գործունեության դադարեցման մասին որոշումը պայմանավորված էր արտակարգ իրավիճակով) ինտերնետային կայքի հասցեն մուտքագրելուց հետո հայտնվող առաջին էջում տեղադրվում է հայտարարություն, որը պարունակում է գործունեությունը դադարեցրած մասնաճյուղի անվանումը և գտնվելու վայրը, ինչպես նաև, դադա-

րեցման ժամանակահատվածը, հեռախոսահամար և(կամ) կապի այլ միջոցներ, որով հնարավոր է մանրամասն տեղեկություններ ստանալ այդ մասին, ինչպես նաև նշում, թե որ մասնաճյուղին կարող է դիմել սպառողը, եթե հանդիսանում է գործունեությունը դադարեցրած մասնաճյուղի հաճախորդ: Ժամանակավոր դադարեցման դեպքում հայտարարությունը տեղադրվում է (փակցվում է) ժամանակավոր դադարեցման ողջ ժամանակահատվածի ընթացքում սպառողների համար տեսանելի վայրում, ընդմիշտ դադարեցման դեպքում՝ դադարեցումից հետո 2 ամսվա ընթացքում, ընդ որում, այդ հայտարարությունը տեղադրվում է նաև ֆինանսական կազմակերպության ինտերնետային կայքի առաջին էջում:

Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի գործունեության կասեցման կամ ուժը կորցրած ճանաչելու դեպքում համակարգի օպերատորը իր կայքում տեղադրում է նշում այդ մասին, ինչպես նաև կասեցման կամ ուժը կորցնելու հիմնավորումը, կասեցման ժամանակահատվածը, հեռախոսահամար և(կամ) կապի այլ միջոցներ, որով հնարավոր է մանրամասն տեղեկություններ ստանալ գործունեության կասեցման կամ ուժը կորցնելու վերաբերյալ,

8) ֆինանսական կազմակերպության կողմից ընդունված գործարար վարվելակերպի և էթիկայի կանոնները,

9) ֆինանսական կազմակերպության և դրա գործունեության վերաբերյալ նորությունները՝ ըստ տարիների և ամիսների: Ընդ որում՝ նորությունները կարող են տեղադրվել նաև ինտերնետային կայքի առաջին էջում,

10) Նշանակալից մասնակիցների վերաբերյալ ներկայացվում են.

ա. տվյալ տեսակի ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենքի համաձայն ուղղակի նշանակալից մասնակիցների անունը (անվանումը), ֆինանսական կազմակերպությունում իրենց ունեցած մասնակցության չափը, մասնակցի գործունեության տեսակը (իրավաբանական անձանց համար),

բ. տվյալ տեսակի ֆինանսական կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենքի համաձայն անուղղակի նշանակալից մասնակիցների անունը (անվանումը), անուղղակի նշանակալից մասնակցի գործունեության տեսակը, այն ուղղակի նշանակալից մասնակցի անունը (անվանումը), որի միջոցով մասնակիցը ձեռք է բերել անուղղակի նշանակալից մասնակցի կարգավիճակ կամ այն պահանջը, որի ուժով անձը (անուղղակի նշանակալից մասնակիցը) կարող է ազդել ֆինանսական կազմակերպության (կամ ֆինանսական կազմակերպության ուղղակի նշանակալից մասնակցի) որոշումների և գործունեության ուղղությունների վրա (օրինակ՝ խոշոր ավանդատու), առկայության դեպքում՝ նաև տվյալ ֆինանսական կազմակերպությունում մասնակցության չափը,

գ. ապահովագրական բրոքերի դեպքում՝ այն ֆինանսական կազմակերպությունների ցանկը, գործունեության տեսակը, որոնց կանոնադրական կապիտալում ունի նշանակալից մասնակցություն,

դ. հայաստանյան վճարահաշվարկային համակարգերի օպերատորի կամ դրամական (փողային) փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպության դեպքում՝ համակարգի օպերատորի կամ դրամական (փողային) փոխանցում իրականացնող վճարահաշվարկային կազմակերպության սեփականատիրոջ (սեփականատերերի) անունը (անվանումը), սեփականատիրոջ գործունեության տեսակը (իրավաբանական անձանց համար), առկայության դեպքում՝ նաև մասնակցության չափը,

ե. ֆինանսական խմբի պատասխանատու անձի ինտերնետային կայքում՝ ֆինանսական խմբի անդամների ուղղակի ու անուղղակի նշանակալից մասնակիցների վերաբերյալ տեղեկատվություն (կարող են ներկայացվել հղումներ ֆինանսական խմբի անդամների ինտերնետային կայքերի տվյալ տեղեկություններին), այդ թվում՝ ֆինանսական խմբի իրական (վերջնական) շահառուների մասին տեղեկատվություն:

11) Ղեկավարների վերաբերյալ ներկայացվում են ֆինանսական կազմակերպության ղեկավարների ցանկը, անունը, ծննդյան ամսաթիվը, կենսագրությունը, տվյալ ֆինանսական կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնը: Այն դեպքում եթե ղեկավարը ժամանակավոր պաշտոնակատար է, ապա նշվում է նաև այդ մասին: Ապահովագրական բրոքերների դեպքում ներկայացվում է նաև ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձանց՝ Կենտրոնական բանկի ռեգիստրում գրանցման համարը: Սույն ենթակետի համաձայն՝ ղեկավարների ցանկում առնվազն ընդգրկվում են ընկերության խորհրդի (խորհուրդ ձևավորելու դեպքում) անդամները և նախագահը, գործադիր տնօրենը (վարչության նախագահը), նրա տեղակալը (տեղակալները), գործադիր մարմնի անդամները, գլխավոր հաշվապահը, ներքին աուդիտի (առկայության դեպքում) ղեկավարը, ապահովագրական ընկերության կողմից նաև՝ պատասխանատու ակտուարները, ապահովագրական բրո-

քերի կողմից նաև՝ ապահովագրական բրոքերի գործառնություններ իրականացնող ֆիզիկական անձինք:

15. ***«Սեփականատերեր»*** բաժնում ներկայացվում են.

1) ֆինանսական կազմակերպության թողարկած արժեթղթերի հրապարակային տեղաբաշխման դեպքում՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Կենտրոնական բանկի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի համաձայն ինտերնետում բացահայտման ենթակա տեղեկատվությունը,
2) կանոնադրական կապիտալի փոփոխության մասին տեղեկատվությունը՝ այդ փոփոխությունը Կենտրոնական բանկի կողմից գրանցելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում,
3) եթե ֆինանսական կազմակերպությունն արժեթղթերի հրապարակային տեղաբաշխում չի իրականացնում, ապա ներկայացվում է սույն կետում նշված տեղեկատվությունը.

ա. տարեկան ընդհանուր ժողովի, ինչպես նաև բաժնետերերի (մասնակիցների) ժողով հրավիրելուն առնչվող տեղեկատվություն՝ օրենքով սահմանված կարգով,

բ. ընթացիկ տարվա ընթացքում շահութաբաժիններ վճարելու մասին որոշումը (որոշումները) և հղումներ նախորդ տարիներին ընդունված նմանատիպ որոշումներին (առնվազն վերջին երեք տարվա կտրվածքով),

գ. շահութաբաժնային քաղաքականությունը սահմանող ակտերը (առկայության դեպքում),

դ. հայտարարություն յուրաքանչյուր մասնակցի կողմից համապատասխանաբար «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Վարկային կազմակերպությունների մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» կամ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տեղեկությունների ստացման (ծանոթանալու) հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի, ժամկետի, տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարի մասին: Ընդ որում՝ հայտարարությունում հղում է կատարվում այն իրավական ակտին և ակտի հոդվածին, համաձայն որի ծագում է նման իրավունքը և այն հասցեին, որտեղ տեղադրված է համապատասխան օրենքը.

Օրինակ՝ ««ԱԱԱ» բանկի յուրաքանչյուր մասնակից, համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի, իրավունք ունի ստանալու բանկի վերջին տարեկան հաշվետվության և արտաքին աուդիտի եզրակացության պատճենները:

Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) 2%-ին և ավելիին տիրապետող յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ստանալու «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված տեղեկությունները: Օրենքը տեղադրված է www.AAAbank.am/legislation/ bankslaw.ppt հասցեում:

Վերոնշյալ տեղեկությունները բանկը տրամադրում է ԱՆՎՃԱՐ՝ մասնակցի գրավոր դիմումը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում: Գրավոր դիմումը կարող է ներկայացվել հետևյալ ձևերով. առձեռն՝ բանկի գլխամասային գրասենյակում, ցանկացած մասնաճյուղում կամ ներկայացուցչությունում, էլեկտրոնային հասցեով՝ investor@aaa.am, կամ փոստով՝ «ԱԱԱ» բանկ …» հասցեով:»,

ե. խորհրդի անդամների (խորհրդի առկայության դեպքում), գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի՝ նախորդ տարվա ընթացքում ֆինանսական կազմակերպությունից ստացված ամբողջ վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների, ֆինանսական կազմակերպության համար որոշակի աշխատանք կատարելու դիմաց վճարների, աշխատավարձին հավասարեցված այլ եկամուտների) չափը: Ընդ որում՝ ֆինանսական կազմակերպությունը կարող է սահմանափակել սույն տեղեկատվության ընթերցման հնարավորությունը, օրինակ՝ գաղտնաբառերի կիրառման միջոցով: Սույն ենթակետով սահմանված տեղեկատվությունը հասանելի է դարձվում ֆինանսական կազմակերպության բոլոր բաժնետերերին (մասնակիցներին),

4) Եթե ֆինանսական կազմակերպությունն արժեթղթերի հրապարակային տեղաբաշխում չի իրականացնում, չունի փոքր մասնակցություն ունեցող մասնակիցներ և չի ցանկանում հրապարակել սույն կանոնակարգի 15-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկատվությունը, ապա ֆինանսական կազմակերպությունը հրապարակում է ֆինանսական կազմակերպության քաղաքականությունը արտահայտող հայտարարություն այն մասին, որ չի հրապարակում ֆինանսական կազմակերպության վերաբերյալ նշված տեղեկատվությունը և չհրապարակման պատճառները:

16. ***«Հաշվետվություններ»*** բաժնում ներկայացվում են ֆինանսական կազմակերպության.

1) միջանկյալ (օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում) և տարեկան ֆինանսական հաշվետվությունները (ներառյալ՝ կից ծանոթագրությունները) և արտաքին աուդիտորական ընկերության աուդիտորական եզրակացությունը: Ընդ որում՝

ա. ֆինանսական հաշվետվությունները հրապարակվում են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, միջազգային ստանդարտների ուղեցույցների և (կամ) այլ նորմատիվ իրավական ակտերի,

բ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունը հրապարակվում են ֆինանսական տարվա ավարտից հետո 120-օրյա ժամկետում, իսկ միջանկյալ հաշվետվությունները՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա վերջին օրը, եթե օրենքով այլ ժամկետ սահմանված չէ,

գ. ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում ֆինանսական կազմակերպությունը հրապարակում է համախմբված ֆինանսական հաշվետվությունները,

2) հղումներ ֆինանսական կազմակերպության՝ հաշվետու տարվան նախորդող երեք տարիների տարեկան ֆինանսական հաշվետվություններին (առկայության դեպքում),

3) հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունը, որը հրապարկվում է եռամսյակային կտրվածքով մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը: Ընդ որում.

ա. հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունները հրապարակում են՝

ա1. բանկերը՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի (իսկ ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում՝ սույն կանոնակարգի Հավելված 3-ի),

ա2. ապահովագրական ընկերությունները՝ համաձայն սույն կարգի Հավելված 4-ի (իսկ ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում՝ սույն կանոնակարգի Հավելված 5-ի),

ա3. ներդրումային ընկերությունները՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի (իսկ ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի),

ա4. վարկային կազմակերպությունները՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի: Ընդ որում, այն վարկային կազմակերպությունները, որոնք, իրենց կանոնադրության համաձայն, հրապարակային օֆերտայի միջոցով չեն ներգրավում փոխառություններ, հրապարակում են Հավելված 8-ի հաշվետվության միայն «Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը» և «Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը» տողերը և տեղեկատվություն այն մասին, որ իրենց կանոնադրության համաձայն՝ հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություններ չեն ներգրավում, հետևաբար մնացած հիմնական տնտեսական նորմատիվներն իրենց վրա չեն տարածվում,

ա5. ֆոնդի կառավարիչները՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի (ֆինանսական հաշվետվությունների համախմբման դեպքում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 10-ի),

ա6. դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունները՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 11-ի,

բ. հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվությունում ներկայացվում են Կենտրոնական բանկի կողմից հաստատված հիմնական տնտեսական նորմատիվների փաստացի և թույլատրելի մեծությունները:

«Փաստացի մեծությունը» սյունակում ամսական հաշվարկվող նորմատիվների համար արտացոլվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա նորմատիվի փաստացի մեծությունը:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը» սյունակում արտացոլվում է Կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվետու ժամանակաշրջանի համար նորմատիվների թույլատրելի մեծությունը:

«Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը» սյունակում արտացոլվում է յուրաքանչյուր նորմատիվի գծով խախտումների քանակը, իսկ եթե խախտում առկա չէ, ապա համապատասխան տողում լրացվում են «խախտում առկա չէ» բառերը,

բանկերի համար՝ Կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափի գծով «Փաստացի մեծությունը» սյունակը չի լրացվում: Պարտադիր պահուստավորման նորմատիվը հաշվարկելիս վերջին ժամանակաշրջան է համարվում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված պարտադիր պահուստավորման օրացույցի վերջին 28 կամ 35 օրերը,

բանկերի և ապահովագրական ընկերությունների համար՝ ըստ առանձին արտարժույթների յուրաքանչյուր արտարժույթի դիրքի և ընդհանուր կապիտալի միջև առավելագույն հարաբերակցության

նորմատիվները ներկայացվում են ըստ ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուսական ռուբլու, իսկ մնացած արտարժույթների գծով լրացվում է միայն «Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը» սյունակը,

4) հղումներ նորմատիվների վերաբերյալ նախորդ եռամսյակների հաշվետվություններին (առնվազն նախորդ 4 եռամսյակների կտրվածքով) (չի տարածվում Կենտրոնական դեպոզիտարիայի վրա),
5) գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները (առկայության դեպքում):

17. ***«Մատուցվող ծառայություններ»*** բաժնում հրապարակվում են ֆինանսական կազմակերպության կողմից մատուցվող բոլոր ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև ներկայացվում են յուրաքանչյուր ծառայության մասով էական տեղեկությունները, սակագները, ծառայությունների մատուցման պայմանները, այդ թվում նաև՝ սույն կանոնակարգի 18-34-րդ կետերով սահմանված տեղեկությունները, ընդ որում՝

1) ֆինանսական կազմակերպությունը յուրաքանչյուր մատուցվող ծառայության վերաբերյալ սույն կանոնակարգի 18-34-րդ կետերով սահմանված տեղեկությունները ներկայացնում է առանձին ինտերնետային էջի միջոցով և չի կարող այդ տեղեկությունները ներկայացնել առանձին վերբեռնված տեղեկատվական ամփոփագրի, ներքին իրավական ակտի կամ պայմանագրի օրինակելի ձևի միջոցով: Ընդ որում, տեղեկատվական ամփոփագիրը, ներքին իրավական ակտը կամ պայմանագրի օրինակելի ձևը կարող են կից ներկայացվել այդ էջում,
2) յուրաքանչյուր ծառայության գծով պայմանները, այդ թվում՝ սակագին(ներ)ը փոփոխվելու դեպքում ներկայացվում են հղումներ ֆինանսական կազմակերպության՝ նախորդ մեկ տարվա յուրաքանչյուր ծառայության գծով սակագներին (առկայության դեպքում),
3) եթե տվյալ ծառայության գծով բացահայտվող տեղեկություններում հղում է կատարվում այդ ծառայությունների անբաժանելի մաս կազմող հրապարակային պայմաններին, ապա այդ պայմանները ևս տեղադրվում են: Այն դեպքում, երբ հղում է կատարվում այլ մարմնի կողմից հաստատված պայմաններին, և հնարավոր չէ նշել նույնականացման տվյալներ, ապա առնվազն նշվում է այն ժամկետը, որի համար գործում են այդ պայմանները: Եթե այդ պայմանները հրապարակային են, ապա հղում է կատարվում նաև համապատասխան աղբյուրին (ինտերնետային էջ/բաժին/ենթաբաժին),
4) յուրաքանչյուր ծառայություն մատուցելու համար սպառողներից պահանջվող նվազագույն փաստաթղթերի և տեղեկատվության ցանկը, դրանց ներկայացման կարգը և ժամկետները, ինչպես նաև նշում այն մասին, որ, ելնելով տարաբնույթ հանգամանքներից, կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն,
5) քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները՝ ըստ իրականացված գործարքի ժամկետի վաղեմության,
6) եթե ֆինանսական կազմակերպությունը մատուցում է հաշվի հեռահար սպասարկման ծառայություններ, ապա հրապարակվում են նաև հեռահար սպասարկման պայմաններն ու կարգը (օրինակ՝ ինտերնետ բանկինգ, բջջային բանկինգ, բջջային հավելված և այլն), գործարքի էությունից բխող ֆինանսական կազմակերպության և սպառողի պատասխանատվության սահմանները և հավաստման ընթացակարգերը,
7) մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ըստ թիրախային խմբերի, եթե ֆինանսական կազմակերպության կողմից որդեգրվել է նման քաղաքականություն (օրինակ՝ մատուցվող ծառայություններ ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց),
8) ֆինանսական կազմակերպության կողմից որևէ ծառայության մատուցումը ժամանակավոր կամ ընդմիշտ դադարեցվելու դեպքում տեղադրվում է հայտարարություն ֆինանսական կազմակերպության ինտերնետային կայքի առաջին էջում և (կամ) տվյալ ծառայության էջում, որը պարունակում է դադարեցված մատուցվող ծառայության անվանումը (ծառայության դադարեցման դեպքում), ինչպես նաև դադարեցման ժամանակահատվածը, հեռախոսահամար և(կամ) կապի այլ միջոցներ, որով հնարավոր է մանրամասն տեղեկություններ ստանալ դադարեցված ծառայության(ների) վերաբերյալ, ինչպես նաև նշում այն մասին, թե ինչ այլընտրանքային միջոցներով (առկայության դեպքում) սպառողը կարող է օգտվել տվյալ ծառայությունից(ներից): Ժամանակավոր դադարեցման դեպքում հայտարարությունը տեղադրվում է ժամանակավոր դադարեցման ողջ ժամանակահատվածի ընթացքում, ընդմիշտ դադարեցման դեպքում՝ դադարեցումից հետո 2 ամսվա ընթացքում: Ընդ որում՝ ընդմիշտ դադարեցման դեպքում դադարեցված ծառայությունը նկարագրող ինտերնետային էջը ապաակտիվացվում է,
9) աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և (կամ) այլ ձևով նշում է կատարվում.

ա. երբ որևէ ծառայություն մատուցվում է միայն ֆինանսական կազմակերպության գլխամասի կամ մեկ (որոշ) մասնաճյուղ(եր)ի կողմից կամ ֆինանսական կազմակերպության ոչ բոլոր մասնա-

ճյուղերում, ընդ որում՝ նշման մեջ կամ առանձին ցանկով ներկայացվում են բոլոր այն մասնաճյուղերը, որտեղ փաստացի մատուցվում է այդ ծառայությունը,

բ. երբ մատուցվող ծառայությունների համար ֆինանսական կազմակերպության կողմից սահմանված են հատուկ առաջարկներ, զեղչեր, ակցիաներ և այլն,

գ. երբ մատուցվող ծառայության գծով սահմանված որևէ պայման, պահանջ կամ վճար (օրինակ՝ վճարման ժամանակահատված, տոկոսների չափ և այլն) բացակայում է կամ չի պահանջում կամ այլ բան է նախատեսված (օրինակ՝ **«ՉԵՐ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԱՆՎՃԱՐ Է»,**

դ. Սպառողի կողմից պարտավորությունները ժամանակին չկատարելու կամ որոշ գործողություններ կատարելու (չկատարելու) դեպքում սպառողի համար հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ,

ե. այն տեղեկությունների վերաբերյալ, որոնց սպառողների կողմից ուշադրություն չդարձնելը տարածված է գործնականում և (կամ) հաճախակի բողոքների առարկա է (այն դեպքում, երբ կազմակերպության կողմից դրանք ենթակա են հրապարակման),

զ. հաղորդակցման ձևերի (փոստային կապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով) սպառողի ընտրության իրավունքի մասին (օրինակ՝ **«ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐՈՑ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ և ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ»),**

է. երբ կապի միջոցներից օգտվելը սպառողի համար վճարովի է, ընդ որում՝ նշման հետ մեկտեղ ներկայացվում է նաև վճարի չափը (այն դեպքում, երբ սակագները սահմանված են կազմակերպության կողմից),

ը. սակագների և միջնորդավճարների մասին, որոնք գանձվում են մատուցված ծառայությունների դիմաց, ընդ որում՝

ը1. վճարային քարտերի գծով միջնորդավճարները ներառում են քարտերի տրամադրման և (կամ) տարեկան սպասարկման գումարները, քարտերով գործառնությունների իրականացման համար գանձվող կոմիսիոն կամ այլ վճարները, ներառյալ նաև ՖԳԻԱՍ-երից օգտվելու դեպքում քարտապանից գանձվող սակագները (նվազագույն և առավելագույն չափը) և պայմանները, քարտով գործարքների իրականացման արդյունքում առաջացող հաշվի գերածախսի դիմաց գանձվող վճարները և պայմանները, միջազգային վճարային քարտերով արտասահմանում գործառնությունների իրականացման համար կիրառվող սակագները և պայմանները: Միջնորդավճարների վերաբերյալ տեղեկատվությունը պետք է ներկայացվի այնպես, որ քարտապանը հստակ տեղեկատվություն ունենա այն մասին, թե վճարային քարտ թողարկող ֆինանսական կազմակերպության ՖԳԻԱՍ-երից, ինչպես նաև այլ կազմակերպության ՖԳԻԱՍ-երից գործարքներ իրականացնելիս ինչ միջնորդավճար է գանձվելու վճարային քարտը թողարկողի կողմից,

ը2. ներդրումային ծառայությունների և ոչ հիմնական ծառայությունների, ինչպես նաև արտարժութային (անկանխիկ) գործառնությունների դեպքում, եթե հնարավոր չի լինում տեղեկացնել գանձման ենթակա ճշգրիտ գումարի մասին, ապա՝ ծառայություններից օգտվելու համար վճարվելիք գումարների հաշվարկման կարգի մասին: Եթե սույն ենթակետում նշված համախառն գումարի որևէ մաս վճարվում է արտարժույթով կամ ներկայացված է արտարժույթով, ապա նշվում է արտարժույթը, փոխարժեքը (օրինակ՝ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեք) և դրա հետ կապված ծախսերը,

ը3. դրամական (փողային) փոխանցումների գծով (առանց հաշվի բացման և (կամ) հաշվով) նշվում են այդ սակագները և միջնորդավճարները՝ ըստ յուրաքանչյուր երկրի, տարածաշրջանի, գումարի մեծության, արժույթի և այլն, եթե առկա է նման տարանջատում, ինչպես նաև այն մասին, թե ում կողմից է վճարվում միջնորդավճարը (դրամական միջոցների փոխանցումը նախաձեռնողի, թե՝ ստացողի), ինչպես նաև տեղեկություններ այլ լրացուցիչ վճարների մասին, եթե այդպիսիք նախատեսված են կամ կարող են ծագել գործարքի ընթացքում,

թ. երբ երկու կամ ավելի ֆինանսական կազմակերպությունների միջև առկա է սպառողի համար շահավետ որևէ ծառայության վերաբերյալ համագործակցություն (օրինակ՝ ԱԱԱ բանկի վճարային քարտերը սպասարկվում են անվճար ԲԲԲ բանկի կողմից),

ժ. սպառողի համար ֆինանսական կազմակերպության կողմից մատուցվող ծառայության հասանելիությունը սահմանափակող բոլոր պայմանները (օրինակ՝ վարկը տրամադրվում է միայն բանկում ավանդ ունեցողներին, կամ սպառողական վարկը տրամադրվում է «ԱԱԱ» խանութից ապրանքներ

ձեռք բերելու դեպքում, կամ ծառայությունը հասանելի է միայն այն սպառողին, ում տարեկան եկամուտները մեծ են որոշակի գումարից և այլն),

ժա. այն մասին, որ ֆինանսական կազմակերպությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ սպառողին (նման պահանջի առկայության դեպքում),

ժբ. ֆինանսական կազմակերպությունների կողմից կնքված պայմանագրերի, համաձայնագրերի, համագործակցությունների, կամ անդամակցությունների վերաբերյալ, որոնք ուղղակի ազդեցություն կարող են ունենալ սպառողների վրա (օրինակ՝ «Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA)) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն՝ ֆինանսական կազմակերպությունը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում»),

10) սպառողական, հիպոտեկային, գյուղատնտեսական և վերաֆինանսավորման վարկերի, ավանդների, վճարային քարտերի, դրամական փոխանցումների և ճանապարհորդության ապահովագրության մասին տեղեկություն պարունակող էջերում նաև հղում է կատարվում «Ձեր ֆինանսական տեղեկատուն»՝ www.fininfo.am ինտերնետային կայքի համապատասխան ծառայությունների մասին տեղեկություններ պարունակող բաժնին (ենթաբաժնին): Ընդ որում, այդ հղմանը զուգահեռ տրվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով (այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով կամ այլ ձևով) նշում, որում բացատրվում է «Ձեր ֆինանսական տեղեկատուն» համակարգի էությունը (օրինակ՝ **«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ» ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ և ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է»**),

11) եթե ֆինանսական կազմակերպությունը մատուցում է ծառայություններ ֆինանսական կազմակերպության կողմից հաստատված ծառայության ընդհանուր պայմանների հիման վրա, ապա այդ պայմանները ներկայացվում են ծառայության պայմանների հետ,

12) եթե ֆինանսական կազմակերպությունը մատուցում է ծառայություն, որին կից առկա են այլ (լրացուցիչ, օժանդակ) ծառայություններ (օրինակ՝ վճարային քարտին կից առաջարկվում է քարտով կատարած գնումների ապահովագրություն), ապա ֆինանսական կազմակերպությունը ներկայացնում է նաև այդ (կից) ծառայության մասին էական տեղեկությունները, սակագները, ծառայությունների մատուցման պայմանները, ինչպես նաև յուրաքանչյուր ծառայության վերաբերյալ 18-34-րդ կետերով սահմանված տեղեկությունները տվյալ (առաջին) ծառայությունը նկարագրող ինտերնետային էջում կամ տեղադրվում է հղում այդ ծառայությունները նկարագրող ինտերնետային էջին,

13) կենսաթոշակային ֆոնդերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող այլ ֆոնդերից առանձնացված ձևով:

18. ***Վարկերի*** վերաբերյալ տեղեկություններում յուրաքանչյուր վարկատեսակի գծով տվյալ վարկը նկարագրող ինտերնետային էջում ներկայացվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը՝

1) վարկի տեսակը, նպատակը և անվանումը՝ առկայության դեպքում,
2) վարկավորվող գումարի նվազագույն և առավելագույն սահմանաչափերը,
3) վարկի տրամադրման նվազագույն և առավելագույն ժամկետները՝ ըստ արժույթի և (կամ) առկայության դեպքում՝ ըստ այլ գործոնների,
4) վարկի անվանական և սպառողական վարկի, «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված գյուղատնտեսական վարկի և հիպոտեկային կրեդիտների դեպքում տարեկան փաստացի տոկոսադրույքները՝ ըստ արժույթի և առկայության դեպքում՝ ըստ այլ գործոնների (օրինակ՝ ավտոմեքենաների ձեռքբերման համար տրամադրված կրեդիտների տոկոսադրույքը տարբեր է հին ու նոր կամ տարբեր մակնիշի ավտոմեքենաների համար), ընդ որում՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը տեղադրվում է անմիջապես անվանական տոկոսադրույքի ներքևի, վերևի կամ կողքի հատվածում և չի կարող ներկայացվել ավելի փոքր տառաչափով, քան անվանական տոկոսադրույքը է: Տվյալ վարկի համար տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն արժեքներ սահմանված լինելու դեպքում ներկայացվում են անվանական տոկոսադրույքի նվազագույն և առավելագույն արժեքները: Այն դեպքում, երբ տվյալ վարկի անվանական տոկոսադրույքի համար նշվել են նվազագույն և առավելագույն արժեքներ, լրացվում են նաև տվյալ վարկի տարեկան փաստացի տոկոսա-

դրույքի նվազագույն և առավելագույն արժեքները: Ընդ որում՝ տրվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով (այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով կամ այլ ձևով) նշում, որում բացատրվում է անվանական և տարեկան փաստացի տոկոսադրույքների տարբերությունը (օրինակ՝ «**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՉԵՋ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԲՈԼՈՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՈՒՄ**...:»),

5) անվանական տոկոսադրույքի փոփոխություն նախատեսելու դեպքում՝ նշում այդ մասին, ինչպես նաև դրա փոփոխման կարգն ու պայմանները: Ընդ որում՝ նշումը ներկայացվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և (կամ) այլ ձևով (օրինակ՝ «**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՅՍ ՎԱՐԿԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ»**): Հիպոտեկային կրեդիտների դեպքում նշվում են նաև լողացող տոկոսադրույքի այն առավելագույն չեմերը, որոնցից ավելի կրեդիտի անվանական տոկոսադրույքը չի կարող բարձրանալ կամ իջնել, ինչպես նաև հայտարարություն այն մասին, որ լողացող անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել տարեկան ոչ ավելի, քան երկու անգամ,
6) վարկավորման համար սպառողի կողմից պարտադիր վճարման ենթակա վճարների ցանկը և դրանց չափը (միջակայքը),
7) սպառողի կողմից վարկավորման համար երրորդ անձանց (այդ թվում՝ պետական մարմինների) կողմից մատուցվող այլ օժանդակ ծառայություններից (օրինակ՝ գույքի գնահատում, ապահովագրություն) օգտվելը պարտադիր պայման լինելու դեպքում նշվում են նաև այդ ծառայությունների գինը (գնի միջակայքը) և երրորդ անձանց (համագործակցող կազմակերպությունների (անհատների)) ամբողջական ցանկը,
8) վարկի արժույթը,
9) մայր գումարի և տոկոսագումարների մարումների հաճախականությունը (ամսական, եռամսյակային, կիսամյակային և այլն),
10) եթե սպառողի պարտավորությունների կատարումն ապահովված է գրավով և (կամ) երաշխավորությամբ, ապա նշվում է ապահովության (գրավի) տեսակը, ընդ որում՝ նման պահանջի առկայության դեպքում ներկայացվում է նաև սույն կանոնակարգով ներկայացված երաշխավորության վերաբերյալ բացատրական տեղեկատվությունը,
11) «վարկ՝ հարաբերած գրավի արժեք» առավելագույն ցուցանիշը՝ տոկոսային արտահայտությամբ (գրավի առկայության դեպքում),
12) վարկով ձեռք բերվող ապրանքի, ծառայության կամ աշխատանքի համար վճարվող կանխավճարի և տվյալ ապրանքի, ծառայության կամ աշխատանքի արժեքի հարաբերության նվազագույն մեծությունը: Եթե կանխավճարի չափը տարբերվում է՝ կախված վարկավորվող գույքի հատկանիշներից կամ այլ գործոններից, ապա «կանխավճար/ապրանքի, ծառայության կամ աշխատանքի արժեք, հարաբերությունը նշվում է ըստ այդ գործոնների,
13) սպառողի կողմից իր պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում տույժերի չափը և կիրառման դեպքերը, ինչպես նաև նշում սպառողի կողմից պարտավորությունների կատարման դեպքում ֆինանսական կազմակերպության կողմից սահմանված մարումների հերթականության և հնարավոր բացասական հետևանքների վերաբերյալ: Ընդ որում՝ նշումը ներկայացվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և (կամ) այլ ձևով, այդ թվում՝

ա. գրավի առարկայի բռնագանձման վերաբերյալ (օրինակ՝ «**ՁԳՈՒՇԱՑՈՒՄ՝ ՁԵՐ ԳՈՒՅՔԸ** (տունը, մեքենան կամ այլ) **ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ՁԵՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ»**,

բ. սպառողի վերաբերյալ տեղեկատվությունը «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով վարկային բյուրոյին տրամադրման վերաբերյալ (օրինակ՝ «**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ** *ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿ* **ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ»**,

գ. Սպառողի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում սպառողի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու դեպքում սպառողի այլ գույքի հաշվին պարտավորությունների մարման հնարավորությունը (առկայության դեպքում):

14) վարկի գումարի տրամադրման եղանակները (օրինակ՝ կանխիկ, անկանխիկ վճարում, այլ),
15) պայմանագրի գործողության ընթացքում քաղվածքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները,
16) վարկի վաղաժամկետ մարման հնարավոր դեպքերը և պայմանները, ներառյալ նաև հնարավոր տույժերը, անբարենպաստ այլ պայմանները, ինչպես նաև ժամկետից շուտ պարտավորությունները կատարելու դեպքում նվազեցման ենթակա և ոչ ենթակա վճարները, ընդ որում՝ այդ նշումը տրվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և (կամ) այլ ձևով: Իսկ հիպոտեկային կրեդիտների դեպքում սույն կետով սահմանված տեղեկատվությունը նշվում է առանձին հաստատուն տոկոսադրույքի դեպքում և լողացող տոկոսադրույքի դեպքում,
17) վարկավորվող գույքի ապահովագրության պահանջի առկայությունը: Պետք է նշվի նաև՝ ապահովագրության համար հիմք է ընդունվում գույքի շուկայական արժե՞քը, թե՞ վարկի գումարը,
18) վարկի ձևակերպման վայրը (ֆինանսական կազմակերպության գլխամասու՞մ, մասնաճյուղում, թե՞ ֆինանսական կազմակերպության հետ համագործակցող/գործընկեր կազմակերպության գործունեության վայրում),
19) ֆինանսական կազմակերպության կողմից վարկային հայտի վերաբերյալ որոշման կայացման առավելագույն ժամկետը, վարկային հայտ ներկայացնողին որոշման մասին տեղեկացնելու և վարկը սպառողին տրամադրելու կարգը և ժամկետը,
20) ֆինանսական կազմակերպության կողմից սպառողին վարկ տրամադրելու դրական որոշման բոլոր գործոնները և վարկի մերժման բոլոր գործոնները, որոնք սահմանված են ֆինանսական կազմակերպության կողմից ընդունված ներքին իրավական ակտերով,
21) հնարավորության դեպքում հաշվիչ, որի միջոցով սպառողը, նշելով վարկի գումարը և ժամկետը, կստանա վարկի մարման ընդհանուր վճարի (վարկի մայր գումարի, տոկոսագումարների և այլ վճարների ընդհանուր գումար) մասին տեղեկությունները,
22) այն դեպքում, երբ վարկային կազմակերպության սպառողական վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը գերազանցում է 24 %-ը, հայտարարություն այն մասին, որ տվյալ տոկոսադրույքը բարձր է և, որ սպառողը նախապես դիտարկի շուկայում առկա այլընտրանքները: Ընդ որում՝ ներկայացվում են փաստացի տոկոսադրույքի նվազագույն և առավելագույն արժեքները (Օրինակ՝ «**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՏԵՂԵԿԱՑՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ԱՅՍ ՎԱՐԿԱՏԵՍԱԿՆ ՈՒՆԻ ԲԱՐՁՐ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ: ՈՒՍՏԻ, ՆԱԽԱՊԵՍ ԴԻՏԱՐԿԵՔ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՌԿԱ ՆՄԱՆԱՏԻՊ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏԵՔ ՎԱՐԿԸ ՄԱՐԵԼՈՒ ՁԵՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ):** Ընդ որում՝ նշված հայտարարությունը ներկայացվում է առանձին պատուհանի տեսքով՝ անմիջապես տվյալ վարկատեսակի էջ, իսկ այն դեպքում, երբ տվյալ վարկատեսակի համար առկա է առանձին ինտերնետային կայք կամ այն մատուցվում է առցանց այլ եղանակներով՝ տվյալ վարկատեսակի կայք յուրաքանչյուր անգամ մուտք գործելիս:

19. Վարկերի առանձին տեսակների մասին տեղեկությունները, բացի սույն կանոնակարգի 18-րդ կետում նշված պայմաններից, պարունակում են նաև լրացուցիչ տեղեկություններ, մասնավորապես՝

1) ***Վարկային գծերի*** (օվերդրաֆտների) գծով.

ա. արտոնյալ ժամկետը («գրեյս պերիոդ»),

բ. փաստացի օգտագործված միջոցների դիմաց հաշվարկված տոկոսադրույքը, տոկոսագումարների հաշվարկման կարգը և հաշվի նվազագույն շարժը,

գ. եթե նախատեսվում է տոկոս՝ օգտագործված միջոցների դիմաց, ապա նշում այդ պայմանների մասին,

դ. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կրեդիտավորման պայմանագիրը լուծելու սպառողի իրավունքի և 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կրեդիտավորման պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու սպառողի իրավունքի վերաբերյալ,

2) ***Սպառողական վարկերի*** գծով.

ա. հայտարարություն այն մասին, որ վարկատուն, նախքան վարկային պայմանագրի կնքումը, տրամադրում է Անհատական թերթիկ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 229-Ն որոշմամբ հաստատված «Ֆինանսական

կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ի»: Ընդ որում, այդ հայտարարությանը զուգահեռ տրվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով (այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով կամ այլ ձևով) նշում, որում բացատրվում է Անհատական թերթիկի էությունը (օրինակ՝ «**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՉԵՋ ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՉԵՋ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:»**),

բ. ապառիկ վարկավորման դեպքում ֆինանսական կազմակերպության հետ համագործակցող/գործընկեր կազմակերպությունների (օրինակ՝ վաճառքի սրահի) ցանկը, ինչպես նաև հնարավորության դեպքում՝ այն հեռախոսահամարները, որոնցով սպառողը կարող է սպառիչ և ճշգրիտ տեղեկություններ ստանալ այդ կազմակերպությունների վերաբերյալ:

3) ***Արտարժույթով տրամադրվող վարկերի*** գծով՝

ա. շեշտվում է, որ արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա,

բ. նշվում է տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի համար հիմք հանդիսացող փոխարժեքի, դրա հրապարակման ամսաթվի մասին, ինչպես նաև այն մասին, որ տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է փոփոխվել՝ կախված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջում հրապարակված փոխարժեքի մեծության փոփոխությունից,

4) ***Լիզինգի*** գծով՝

ա. գույքի տեսակները,

5) ***Ոսկյա իրերի գրավադրմամբ վարկերի գծով***՝

ա. վարկի ամբողջական մարման դեպքում գրավադրված ոսկյա իրերի գրավատուին հետ վերադարձման ժամկետը:

20. ***Վճարային քարտերի*** (այսուհետ՝ քարտեր) մասին տեղեկություններում յուրաքանչյուր քարտի գծով տվյալ քարտը նկարագրող ինտերնետային էջում ներկայացվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը.

1) տրամադրվող քարտի տեսակը (օրինակ՝ դեբետային, վարկային, հաշվարկային, չիպային, հիբրիդ և այլն) և պատկանելությունը համապատասխան քարտային վճարահաշվարկային համակարգին (համակարգերին) (օրինակ՝ ԱրՔա, ՎԻԶԱ, այլ),

2) քարտի թողարկման, սպասարկման, վերադարձման և վճարային քարտով գործառնությունների անվտանգ իրականացման կանոնները, մասնավորապես՝

ա. քարտով իրականացվող գործառնությունների տեսակները: Այն դեպքում, երբ քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով առկա են գործառնության կատարման հաճախականության, ժամկետների, տեսակների կամ գումարային մեծության սահմանափակումներ, այդ սահմանափակումները նույնպես նշվում են,

բ. քարտի և անհատական նույնականացման համարի (ՊԻՆ-կոդ) և (կամ) անձը նույնականացնող՝ քարտային վճարահաշվարկային համակարգի կանոններով նախատեսված այլ ծածկագրի (ծածկագրերի) տրամադրման, օգտագործման և պահպանման կանոնները,

գ. ֆինանսական կազմակերպության և քարտապանի պարտավորությունները և նրանց պատասխանատվության չափն ու պայմանները (քարտապանի պատասխանատվությունն իր կողմից չվավերացված գործարքների համար, թողարկողի պատասխանատվությունը քարտապանի առջև վերջինիս կողմից չկատարված/չվավերացված գործարքների համար, քարտապանի կողմից չկատարված գործարքների վերաբերյալ վերջինիս կողմից տեղեկացման կարգի և պայմանների, պատասխանատվության չափի և վնասների բաշխման, այլ սահմանված ընթացակարգերի վերաբերյալ),

դ. քարտի բլոկավորման և ապաբլոկավորման կարգն ու պայմանները, ժամկետը՝ ինչպես քարտապանի նախաձեռնությամբ, այնպես էլ բանկի, ինչպես նաև բլոկավորման/ապաբլոկավորման համար առանձին կապի միջոցները (հեռախոսահամարները և (կամ) ինտերնետային կայքի հասցեն) (առկայության դեպքում),

ե. քարտապանի կողմից քարտային գործառնության ***բողոքարկման*** ժամանակահատվածը, ինչպես նաև բողոքարկման և ճշգրտման, այդ թվում՝ քարտապանի կողմից ներկայացված դիմում-բողոքի հիման վրա միջոցների հետ գանձման (Չառջբեք) ժամանակ կիրառվող ընթացակարգերը և քարտապանի կողմից դրանց կիրառման կարգը և միջոցները,

զ. քարտի կորստի/գողանալու, այդ թվում՝ քարտը թողարկող բանկի կամ այլ բանկի բանկոմատի կողմից քարտի առգրավման դեպքում կիրառվող կարգերը, պայմանները և ժամկետները, ինչպես նաև հեռախոսահամար և(կամ) կապի այլ միջոցներ, որով հնարավոր է մանրամասն տեղեկություններ ստանալ այդ մասին,

է. քարտի վերաթողարկման կարգն ու պայմանները, ժամկետները,

ը. քարտով գործառնությունների իրականացման ընթացքում առաջացող ռիսկերի կառավարման և զսպման արդյունավետ մեխանիզմները, ինչպես նաև ընդհանրական տեղեկություններ այդ գործարքների հետ կապված ռիսկերի մասին (օրինակ՝ ինչ է զեղծարարությունը կամ զեղծարարության ռիսկից խուսափելու օգտակար խորհուրդներ),

թ. քարտի անվտանգ օգտագործման նվազագույն պայմանները, ինչպես նաև նշում այն մասին, որ ֆինանսական կազմակերպությունը պարտավոր է սպառողի հետ պայմանագիր կնքելիս վերջինիս տրամադրել այդ պայմանները,

ժ. քարտային հաշվի փակման դեպքում քարտը վերադարձնելու կարգն ու պայմանները, այդ թվում նաև նշում քարտը չվերադարձնելու արդյունքում պատասխանատվության չափի և առաջացող վնասների բաշխման վերաբերյալ,

ժա. քարտային հաշիվը փակելուց հետո հաշվին առկա միջոցների վերադարձման կարգն ու պայմանները,

3) քարտի գործողության ժամկետ սահմանված լինելու դեպքում նշում այդ մասին,
4) տրամադրվող քարտերի համար հաշվի արժույթի տեսակները,
5) այն դեպքում, երբ առկա են օժանդակ կամ լրացուցիչ ծառայությունների մատուցման հնարավորություններ կամ կցված է հավելյալ ծրագիր (օրինակ՝ Cashback), ապա կից նշվում են նաև այդ ծառայության (ծրագրի) էական պայմանները,
6) այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպության կողմից ներդրված են վճարային քարտերով գործառնությունների ժամանակ կիրառվող տեղեկատվական անվտանգության համակարգեր, օրինակ՝ վճարումների դեպքում մեկանգամյա գաղտնաբառերի կիրառման համակարգի (3d secure) օգտագործում, ապա ներկայացվում է նշում այդ մասին,
7) քարտ ստանալու (վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագիր կնքելու) համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո քարտի տրամադրման և ակտիվացման ժամկետներն ու պայմանները,
8) եթե ֆինանսական կազմակերպությունը մատուցում է ***հեռահար սպասարկման*** ծառայություններ (ինտերնետի, բջջային հեռախոսի կամ այլ միջոցով), ապա հրապարակվում են նաև հեռահար սպասարկման ծառայությունների պայմանները և կարգը, գործարքի էությունից բխող՝ ֆինանսական կազմակերպության և քարտապանի պատասխանատվության սահմանները և հավաստման ընթացակարգերը:

21. ***Բանկային (ընթացիկ) հաշիվների*** մասին տեղեկություններում յուրաքանչյուր հաշվի (այդ թվում՝ քարտային և ավանդային հաշիվների) գծով տեղեկություններում տվյալ հաշիվը նկարագրող ինտերնետային էջում նշվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) հաշվով հնարավոր գործառնությունների տեսակները: Այն դեպքում, երբ կան կատարման հաճախականության, ժամկետների, տեսակների կամ գումարային մեծության սահմանափակումներ, այդ սահմանափակումները նույնպես նշվում են,
2) պայմանագրով հաշվում առկա դրամական միջոցների նկատմամբ տոկոսներ վճարելու պայման նախատեսված լինելու դեպքում անվանական տոկոսադրույքի և տարեկան տոկոսային եկամտաբերության մեծությունը, հաշվարկման կարգը և հաշվեգրման ժամկետները: Ընդ որում՝ տրվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով (այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով կամ այլ ձևով) նշում, որում բացատրվում է անվանական տոկոսադրույքի և տարեկան տոկոսային եկամտաբերության տարբերությունը (օրինակ՝ «**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՈՒՄ**…:»),
3) հաշվի բացման և փակման ընթացակարգերը, ժամկետները և սակագները, ինչպես նաև հաշվի սպասարկման և գործառնությունների իրականացման սակագները,
4) հաշվի արժույթը, հաշվի արժույթից տարբերվող այլ արժույթներով կատարվող գործառնությունների իրականացման հնարավորությունը, հաշվի արժույթից տարբերվող արժույթով հաշվով գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փոխարժեքը (օրինակ՝ Կենտրոնական բանկի կողմից հայտարարված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեք),
5) հաշվետիրոջ կողմից հաշվով գործառնություններ չկատարելու դեպքում հաշվի պահպանման ծախսերը՝ ելնելով գործարք չկատարելու վաղեմությունից,

6) հաշվի նվազագույն մնացորդի մեծությունը՝ նվազագույն մնացորդ սահմանված լինելու դեպքում,
7) հաշվին դրամական միջոցների մուտքագրման/կրեդիտագրման և ելքագրման/դեբետագրման կարգն ու պայմանները, ժամկետը, հաշվից վճարումներ և փոխանցումներ կատարելու առավելագույն ժամկետները,
8) սպառողի պահանջով՝ Հայաստանի Հանրապետությունում կամ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարված գործարքների վերաբերյալ տեղեկանքի (հարցման) տրամադրման սակագները,
9) հաշվի փակման (բանկային հաշվի պայմանագրի լուծման) պայմանները (օրինակ՝ հաշվում պահվող դրամական միջոցների գումարը պայմանագրով նախատեսված նվազագույն չափից պակաս լինելու, մեկ տարվա ընթացքում տվյալ հաշվով գործառնությունների բացակայության դեպքում և այլն), ինչպես նաև հաշվի փակման (պայմանագրի լուծման) դեպքում հաշվում առկա դրամական միջոցների մնացորդի նկատմամբ իրականացվող հետագա գործողությունները, համապատասխան միջոցների վերադարձման կարգը, պայմաններն ու ժամկետը (օրինակ՝ պայմանագրի դադարեցման մասին դիմումը ստանալու մասին հավաստման տրամադրումը սպառողին, մնացորդը հաշվետիրոջ կողմից նշված հաշվեհամարին փոխանցելը, ցպահանջ կամ ժամկետային ավանդի վերաձևակերպելը և այլն), սպառողի կողմից հաշվի փակման մասին դիմում ներկայացնելուց հետո հաշվի փակման առավելագույն ժամկետը,
10) հայտարարություններ այն մասին, որ

ա. հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա,

բ. առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա և այդ մասին հաշվետիրոջը տեղեկացնելու կարգը,

11) «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաշվում առկա դրամական միջոցների մնացորդի երաշխավորված չափի մասին տեղեկացումը:

22. ***Ավանդների*** մասին տեղեկություններում յուրաքանչյուր ավանդատեսակի գծով տեղեկություններում տվյալ ավանդը նկարագրող ինտերնետային էջում նշվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը.

1) ավանդի տեսակը (օրինակ՝ ցպահանջ, ժամկետային կամ այլ),
2) ֆիզիկական անձ հաճախորդներին տրամադրվող ավանդների դեպքում՝ «Բանկային ավանդների ներգրավման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով և 4-րդ հոդվածով սահմանված տեղեկությունները,
3) անվանական տոկոսադրույքի և տարեկան տոկոսային եկամտաբերության մեծությունը, հաշվարկման կարգը և հաշվեգրման ժամկետները ներկայացուցչական օրինակի միջոցով, ընդ որում՝ տարեկան տոկոսային եկամտաբերությունը տեղադրվում է անմիջապես անվանական տոկոսադրույքի ներքևի, վերևի կամ կողքի հատվածում և չի կարող ներկայացվել ավելի փոքր տառաչափով, քան անվանական տոկոսադրույքն է: Տվյալ ավանդի համար տոկոսադրույքների նվազագույն և առավելագույն արժեքներ սահմանված լինելու դեպքում ներկայացվում են անվանական տոկոսադրույքի նվազագույն և առավելագույն արժեքները: Այն դեպքում, երբ տվյալ ավանդի անվանական տոկոսադրույքի համար նշվել են նվազագույն և առավելագույն արժեքներ, լրացվում են տվյալ ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերության նվազագույն և առավելագույն արժեքները: Ընդ որում՝ տրվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով (այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով կամ այլ ձևով) նշում, որում բացատրվում է անվանական տոկոսադրույքի և տարեկան տոկոսային եկամտաբերության տարբերությունը (օրինակ՝ «**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՔ ԴՈՒՔ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՈՒՄ**…:»),
4) ժամկետային ավանդը ժամկետից շուտ հետ վերցնելու պայմանները, ինչպես նաև այլ լրացուցիչ պայմաններ, ինչպիսիք են, օրինակ՝ պայմանագրի գործողության ընթացքում ավանդի գումարի փոփոխություն,

5) հայտարարություններ այն մասին, որ

ա. երբ ժամկետային ավանդը ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը կամ մինչև ավանդային պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, ավանդատուի տոկոսները վճարվում են բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով: Այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված է տոկոսների այլ չափ, տրվում է հայտարարություն այդ մասին,

բ. երբ ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ժամկետային ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, պայմանագիրը երկարաձգված է համարվում ցպահանջ ավանդի պայմաններով: Այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված է այլ բան, տրվում է հայտարարություն այդ մասին,

գ. ավանդային պայմանագրով որոշված տոկոսների չափը, որը ավանդատուն ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, բանկը չի կարող միակողմանի նվազեցնել: Այն դեպքում, երբ նախատեսված է այլ բան, տրվում է հայտարարություն այդ մասին,

դ. ավանդային հաշվին կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա ավանդի մասին անհրաժեշտ տվյալների նշումով: Այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված է այլ բան, տրվում է հայտարարություն այդ մասին,

ե. ավանդը կարող է ներդրվել բանկ երրորդ անձի անունով (նման հնարավորության առկայության դեպքում):

9) «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բանկային ավանդի երաշխավորված չափի մասին տեղեկացումը:

23. ***Հայաստանի Հանրապետության տարածքում և տարածքից դուրս առանց բանկային հաշվի բացման դրամական (փողային) փոխանցումների, ինչպես նաև այլ վճարումների (փոխանցումների)*** գծով տեղեկություններում յուրաքանչյուր դրամական փոխանցման (վճարման) տեսակը նկարագրող ինտերնետային էջում նշվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը.

1) վճարումների/փոխանցումների իրականացման կարգը, այդ թվում նաև՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս առանց բանկային հաշվի բացման ֆիզիկական անձանց կողմից իրականացվող դրամական (փողային) փոխանցումների դեպքում նշվում է դրամական միջոցների փոխանցում նախաձեռնողի, ինչպես նաև դրամական միջոցները ստացողի (փոխանցման շահառուի) կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը (այդ թվում՝ անձը հաստատող փաստաթղթերը), ինչպես նաև փոխանցված միջոցները ստանալու համար դրամական միջոցներ ստացողի կողմից հաղորդվող անհրաժեշտ գաղտնի տվյալների ցանկը (օրինակ՝ փոխանցման ունիկալ կոդը) և դրանց ներկայացման կարգը,
2) վճարման/փոխանցման իրականացման առավելագույն ժամկետները, որի ընթացքում կազմակերպությունը կկատարի վճարումը/փոխանցումը շահառուին: Այն դեպքում, երբ կենսաթոշակների, նպաստների և սոցիալական այլ վճարների համար ֆինանսական կազմակերպության կողմից սահմանված է վճարման ժամանակահատված (օրինակ՝ յուրաքանչյուր ամսվա 15-25-ը), ապա տեղեկացում այդ մասին,
3) վճարումը և (կամ) փոխանցումը նախաձեռնողի կողմից վճարման/փոխանցման չեղյալ համարելու և հետ կանչելու, ինչպես նաև դրամական միջոցները ստացողի (շահառուի) չհայտնաբերվելու կամ շահառուի կողմից դրամական միջոցները չստանալու դեպքում փոխանցված դրամական միջոցների հետվերադարձման ընթացակարգը, ժամկետները, կիրառվող հնարավոր միջնորդավճարները, ինչպես նաև սխալների ուղղման և վճարման/փոխանցման պայմանների փոփոխման նպատակով կիրառվող ընթացակարգը և ժամկետները, կիրառվող հնարավոր միջնորդավճարները,
4) ֆինանսական կազմակերպության կողմից գանձված միջնորդավճարների վերադարձման/ չվերադարձման դեպքերը, կարգը և պայմանները,
5) ֆինանսական կազմակերպության կողմից վճարման և (կամ) փոխանցման ուշացման, չկատարման կամ մասնակի կատարման դեպքում կիրառվող ընթացակարգը (օրինակ՝ վնասի փոխհատուցման), ժամկետները և պատասխանատվության շրջանակները,
6) ֆինանսական կազմակերպության պարտավորությունը սպառողին յուրաքանչյուր մատուցված ծառայության կատարումը հավաստող անդորրագիր տրամադրելու վերաբերյալ,
7) սպառողի կողմից իրականացված վճարումների և (կամ) փոխանցումների հետ կապված բողոքարկման ժամկետները, ինչպես նաև բողոքարկման ժամանակ կիրառվող ընթացակարգերը և սպառողի կողմից դրանց կիրառման կարգը և միջոցները,

8) Հայաստանի Հանրապետության տարածքում և տարածքից դուրս առանց բանկային հաշվի բացման դրամական (փողային) փոխանցումների գծով՝

ա. փոխանցման/ստացման ***արժույթները***, ինչպես նաև տեղեկացում դրամական փոխանցում նախաձեռնողին (ստացողին) այն մասին, թե ֆինանսական կազմակերպությունը դրամական փոխանցումների ընդունումը (վճարումը) կկատարի փոխանցման արժույթով, թե այլ արժույթով: Վճարահաշվարկային կազմակերպությունների դեպքում այս տեղեկատվությունը բացահայտվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 285-Ն որոշմամբ հաստատված «Վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի հաշվառումը, վճարահաշվարկային կազմակերպությունների ղեկավարների որակավորումը, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության վայրին ներկայացվող տեխնիկական հագեցվածության, տարածքային, ծրագրային, անվտանգության պահանջները, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների լիցենզիաների գրանցամատյանի ձևը, վարման կարգը, դրանում ներառվող տեղեկությունները» կանոնակարգ 17/01-ի 153-րդ կետով սահմանված կանոնների համաձայն,

բ. փոխանցման սահմանաչափերը,

բ1. փոխանցման նվազագույն և առավելագույն սահմանաչափերը (նման սահմանաչափերի առկայության դեպքում),

բ2. ստացվող դրամական միջոցների առավելագույն սահմանաչափը, եթե նման սահմանափակում առկա է ստացողի երկրի օրենսդրությամբ (նման տեղեկատվության առկայության դեպքում),

գ. փոխանցումների ուղղությունները, աշխարհագրությունը և այն համակարգերը, որոնց միջոցով կարող են դրամական միջոցներ ստացողները (փոխանցման շահառուները) ստանալ փոխանցված միջոցները: Ընդ որում՝ նաև ներկայացվում են դրամական փոխանցումներ իրականացնող յուրաքանչյուր համակարգի ինտերնետային կայքին հղումները,

դ. այն դեպքում, երբ առկա են լրացուցիչ կամ օժանդակ ծառայությունների մատուցման հնարավորություն(ներ), ապա նշում այդ մասին:

24. ***Հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորի*** կողմից մատուցվող ծառայությունների մասին տեղեկություններում ներկայացվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը.

1) հայաստանյան վճարահաշվարկային ***համակարգի անվանումը***, ստեղծման օրն ու տարեթիվը,
2) հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ռազմավարությունը,
3) հայաստանյան վճարահաշվարկային համակարգի մասնակիցների (անդամների) ցանկը, նրանց դերը համակարգում՝ խմբավորված ըստ յուրաքանչյուր մասնակցի.

ա. մասնակցի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը և ռեզիդենտությունը,

բ. մասնակցի դերը (կարգավիճակը) համակարգում (օրինակ՝ օպերատոր, հաշվարկային բանկ, պրոցեսինգ և/կամ քլիրինգ իրականացնող մասնակից, վճարային քարտեր թողարկող կամ սպասարկող, այլ),

4) հայաստանյան վճարահաշվարկային համակարգով իրականացվող գործառնությունների տեսակները (առանց բանկային հաշիվների բացման դրամական միջոցների փոխանցում, բանկային հաշիվների միջոցով դրամական միջոցների փոխանցում, քարտերի թողարկում (դեբետային, վարկային), քարտերի սպասարկում (կանխիկ, անկանխիկ, ինտերնետ միջավայրում և/կամ բջջային հեռախոսի միջոցով, այլ), պրոցեսինգի իրականացում և այլ), գործունեության հիմնական ուղղությունները և դրանց համառոտ բնութագիրը,
5) այն դեպքում, երբ հայաստանյան վճարահաշվարկային համակարգի կանոններով կան սահմանված գործառնության կատարման հաճախականության (օրինակ՝ կանխիկացում՝ օրական ոչ ավելի, քան 500 հազ ՀՀ դրամ), ժամկետների, տեսակների կամ գումարային մեծության սահմանափակումներ, ապա այդ սահմանափակումները նույնպես նշվում են,
6) հայտարարություն այն մասին, որ

ա. հայաստանյան վճարահաշվարկային համակարգով իրականացվող գործառնությունների (ծառայությունների) համար կարող է գանձվել վճար, որը սահմանվում է յուրաքանչյուր մասնակցի կողմից ինքնուրույն,

բ. հայաստանյան վճարահաշվարկային համակարգում կիրառվող սակագների, ինչպես նաև այլ լրացուցիչ վճարների մասին (եթե այդպիսիք նախատեսված են կամ կարող են ծագել գործարքի ընթացքում) կարող եք ծանոթանալ յուրաքանչյուր մասնակցի ինտերնետային կայքում:

7) այն դեպքում, երբ հայաստանյան վճարահաշվարկային համակարգում առկա տեխնիկական կամ այլ տեսակի խնդիրների պատճառով մասնակիցների կողմից ծառայությունների մատուցումը հնարավոր չէ իրականացնել, հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորը իր ինտերնետային

կայքի առաջին էջում հայտարարում է այդ մասին՝ նշելով նաև խնդրի կարգավորման ժամկետների վերաբերյալ:

25. ***էլեկտրոնային փողերի*** գծով տեղեկություններում նշվում է առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

1) էլեկտրոնային փողի տեսակները (օրինակ՝ էլեկտրոնային քսակ, վիրտուալ փող), որոնք հնարավոր է ձեռք բերել,
2) էլեկտրոնային փողերի ձեռքբերման կարգը, պայմանները, վայրերը, այդ թվում նաև՝ հաշվառման հաշվի բացման ժամանակ սպառողի պատշաճ ուսումնասիրություն անցնելու պարտադիր քայլերը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ժամկետները: Ընդ որում՝ գրանցումն ավարտելու համար սպառողը պարտադիր նշում է կատարում «Համաձայն եմ սույն պայմանագրի պայմաններին » հայտարարության առջև: Կնքվող գրավոր պայմանագրի հղումը ներկայացված է աչքի ընկնող և առանձնացված ձևով,
3) էլեկտրոնային փողի հետ կապված հնարավոր բոլոր գործառնությունների ցանկը, կատարման կարգը, պայմանները, ժամկետները, հաշվառման հաշիվների կարգավիճակները (օրինակ՝ նույնականացված, չնույնականացված հաշիվներ), ինչպես նաև առկա սահմանափակումները (օրինակ՝ լիցքավորում կամ կանխիկացում իրականացնելու սահմանափակում և այլ),
4) ժամկետ, որի ընթացքում փոխանցված և (կամ) մուտքագրված էլեկտրոնային փողը հասանելի կլինի շահառուին,
5) էլեկտրոնային փողով գործառնությունների անդորրագրերի պահպանման, քաղվածքների տրամադրման ժամկետները, կարգը և պայմանները,
6) էլեկտրոնային փողի գործողության առավելագույն ժամկետ սահմանված լինելու դեպքում ժամկետը լրանալուց հետո սպառողի մոտ առկա էլեկտրոնային փողին համարժեք դրամական միջոցները վերադարձնելու կարգն ու պայմանները,
7) հաշվառման հաշիվը հեռահար եղանակով գրանցելիս հայտարարություն այն մասին, որ գրանցման գաղտնաբառը պետք է լինի հուսալի, պարունակի մեծատառեր, փոքրատառեր, նշաններ (օրինակ՝ **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՎ ՁԵՐ ՀԱՇՎԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆՏՐԵՔ ՀՈՒՍԱԼԻ, ՈՉ ՊԱՐԶ ԳԱՂՏՆԱԲԱՌ, ՈՐԸ ԿՊԱՐՈՒՆԱԿԻ ՄԵԾԱՏԱՌԵՐ, ՓՈՔՐԱՏԱՌԵՐ, ՆՇԱՆՆԵՐ**): Ընդ որում՝ նշումը ներկայացվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և (կամ) այլ ձևով,
8) հաշվառման հաշվով մեկանգամյա գործառնության առավելագույն և նվազագույն գումարների սահմանաչափերը (առկայության դեպքում),
9) հաշվառման հաշվով օրական և ամսական կատարվող գործառնության քանակի և գումարի սահմանաչափերը (առկայության դեպքում),
10) նույնականացման պատշաճ ուսումնասիրություն չանցած սպառողների հաշվառման հաշվով հնարավոր գործարքների ցանկը,
11) ինտերնետային կայքում հաշվառման հաշվի՝ սպառողին հատկացված համապատասխան էջ մուտք գործելիս նշում վերջին այցելության ամսաթվի, ժամի և IP հասցեի մասին: Ընդ որում, կողքը նշվում է հայտարարություն այն մասին, որ սպառողը պետք է փոխի իր գաղտնաբառն այն դեպքում, եթե ներկայացված վերջին այցելությունը իրենը չի եղել (օրինակ՝ «**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԵԹԵ ՎԵՐՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՆՇՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՉԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՎԵՐՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻՆ, ԱՊԱ ՓՈԽԵՔ ՁԵՐ ԳԱՂՏՆԱԲԱՌԸ, ՈՐՊԵՍԶԻ ՊԱՇՏՊԱՆԵՔ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇԻՎԸ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒՑ**»,
12) ինտերնետային կայքում հաշվառման հաշվի՝ սպառողին հատկացված համապատասխան էջում հաշվի մնացորդը, կատարված գործառնությունների պատմությունը,
13) ինտերնետային կայքում հաշվառման հաշվով գործառնություններ կատարելիս (հանրային ծառայությունների համար (կոմունալ) վճարումների ընդունում, ծառայության/ապրանքի գնում և այլն) կայքի հաշվառման հաշվի համապատասխան էջում հայտարարություն գործարքի սակագնի, ժամկետի (առկայության դեպքում) և անհրաժեշտ այլ տեղեկատվության մասին, էլեկտրոնային փողերի հաշվառման հաշվի մնացորդի առավելագույն սահմանաչափը (առկայության դեպքում),
14) հաշվառման հաշվի փակման պայմանները, կարգը և ժամկետները:

26. ***Ապահովագրական ծառայությունների*** մասին տեղեկություններում յուրաքանչյուր ծառայության տեսակի գծով տեղեկություններում տվյալ ծառայությունը նկարագրող ինտերնետային էջում նշվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը.

1) ապահովագրության ***տեսակը*** և ապահովագրության ***դասը և (կամ) ենթադասը***՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի,

2) ծառայության տեսակի ***սակագները***, սակագների տատանման ***միջակայքը*** (սակագնի հնարավոր նվազագույն և առավելագույն չափերը)՝ կախված ապահովագրության որոշակի պայմաններից (չհատուցվող գումարից և այլն) և ապահովագրական ռիսկի վրա ազդող գործոններից,
3) իրականացվող ապահովագրության դասի (ենթադասի) կանոնները (պայմանները), որոնք առնվազն ներառում են՝

ա. ապահովագրության օբյեկտը,

բ. ապահովագրական պատահարը (պատահարները), որի տեղի ունենալու դեպքում տրվում է ապահովագրական հատուցումը. ապահովագրական պատահար չհամարվող դեպքերը կամ ռիսկերը (բացառությունները),

գ. ապահովագրական գումարի չափը, հաշվարկման կարգը,

դ. ապահովագրական հատուցում ստանալու կարգը և գործընթացը՝ ապահովադրի կողմից ապահովագրական պատահար տեղի ունենալուց հետո իրականացվելիք գործողությունները և ժամկետները, հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ներկայացման կարգը, հատուցման համար հայտը ֆինանսական կազմակերպության ներկայացնելուց հետո որոշման կայացման ժամկետը և պայմանները: Ընդ որում, եթե ապահովադրի որոշ գործողություններ (անգործությունը) հանդիսանում են ապահովագրական հատուցումը մերժելու հիմք, ապա այդ մասին նշումը ներկայացվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և (կամ) այլ ձևով,

ե. ապահովագրավճարի հաշվարկման կարգը, ինչպես նաև հղում ապահովագրավճարի հաշվարկման հաշվիչին (առկայության դեպքում),

զ. ապահովագրավճարի վճարման կարգը, ձևը և ժամկետները,

է. ապահովադրի կողմից ապահովագրավճարի՝ պայմանագրում սահմանված ժամկետներում և կարգով չվճարելու հետևանքները,

ը. վնասի գնահատման կարգը,

թ. ապահովադրի իրավունքները և պարտավորությունները, ընդ որում՝ այն պարտավորությունները, որոնց չկատարումը կարող է հանգեցնել ապահովագրական հատուցման չվճարմանը և այդ պարտավորությունների չկատարումը տարածված է սպառողների մոտ, նշվում են աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և (կամ) այլ ձևով,

ժ. եթե ապահովագրական տվյալ ծառայության համար «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն նախատեսված է մտածելու ժամանակ, ապա՝ մտածելու ժամանակի էությունը և օգտվելու ընթացակարգը:

4) ապահովագրության պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
5) ապահովագրության պայմանագրի վերակնքման, վերաձևակերպման կարգն ու պայմանները,
6) ապահովագրական պայմանագրի գործողության ընթացքում պայմանագրի կրկնօրինակների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները,
7) ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման և լուծման դեպքերն ու պայմանները, ներառյալ նաև ապահովադրին վերադարձման ենթակա ապահովագրավճարների մեծության չափը և հաշվարկման կարգը,
8) ԱՊՊԱ-ի գծով ներկայացվում է նաև հետևյալ տեղեկատվությունը.

ա. համաձայնեցված հայտարարագրի վերաբերյալ՝ համաձայնեցված հայտարարագրի լրացման և այն ապահովագրական ընկերությանը ներկայացման ընթացակարգերը,

բ. ոչ ստանդարտ իրավիճակներում (օրինակ, երբ պատահարում ներգրավված են մի քանի տուժողներ և նրանց պատճառված վնասների ընդհանուր գումարը գերազանցում է սահմանված ապահովագրական գումարը) կիրառվող ապահովագրական հատուցումների հաշվարկման օրինակներ, բացատրություններ,

գ. երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին ապահովագրական հատուցումների վճարման դեպքերն ու կարգը,

դ. ապահովագրավճարների զեղչերի և հավելավճարների համակարգի (Բոնուս-Մալուս համակարգ) էությունը և կիրառման ժամկետները,

ե. հղում Բյուրոյի պաշտոնական ինտերնետային էջին:

27. ***Ներդրումային ծառայությունների և ոչ հիմնական ծառայությունների,*** ինչպես նաև ***արտաժութային (անկանխիկ) գործառնությունների*** մասին առնվազն ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը.

1) ծառայության/գործառնության անվանումը և տեսակը,
2) սպառողի կողմից վճարումներ կատարելու պայմանների, եղանակների և ժամկետների մասին,

3) սպառողի հետ կապի իրականացման կարգի և ժամկետների մասին (սպառողից պատվերներ կամ հանձնարարականներ և առանձնահատուկ ցուցումներ ստանալու դեպքում),
4) սպառողներից գործարքների իրականացման պատվերների և հանձնարարականների ընդունման և կատարման ընթացակարգերի մասին,
5) պայմանագրերի ժամկետների մասին (ինչ ժամկետայնությամբ ներդրումային ծառայությունների պայմանագրեր կարող են կնքվել),
6) կնքված պայմանագրերի դադարեցման դեպքում սպառողի միջոցների վերադարձման կարգի մասին,
7) գործարքների իրականացման վայրերի մասին,
8) շահերի բախման կանխարգելմանն ուղղված քաղաքականության վերաբերյալ,
9) մատուցվող ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
10) պատվերների վերաբերյալ քաղվածքների, հաշվետվությունների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները՝ ըստ իրականացված գործարքի ժամկետի վաղեմության,
11) նշում այն մասին, թե ով է կրում տվյալ ծառայության հետ կապված ռիսկը: Ընդ որում՝ նշումը տրվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով կամ այլ ձևով (օրինակ՝ իր կամ սպառողի անունից և սպառողի հաշվին արժեթղթերով գործարքների կատարման ծառայությունների մատուցման դեպքում կարող է նշվել. «**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ պատվերում նշված պայմաններին համապատասխան գործարքների կատարման դեպքում արժեթղթերում ներդրման հետ կապված ՌԻՍԿԸ ԿՐՈՒՄ է ՍՊԱՌՈՂԸ: Ֆինանսական կազմակերպությունը ՉԻ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ սպառողի վնասները, եթե դրանք չեն պատճառվել ֆինանսական կազմակերպության կողմից անբարեխիղճ վարքագծի արդյունքում»**):

28. Ի լրումն սույն կանոնակարգի 27-րդ կետի՝ ներդրումային ծառայությունների և ոչ հիմնական ծառայությունների դեպքում նշվում են նաև արժեթղթերի տեսակները, որոնց հետ կապված է առաջարկվող ներդրումային կամ ոչ հիմնական ծառայությունը, ինչպես նաև ընդհանրական տեղեկություններ այդ արժեթղթերի և նրանց հետ կապված ռիսկերի մասին:

29. ***Արտարժույթի առուվաճառքի (փոխանակման) գործառնությունների*** մասին առնվազն ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը.
1) արտարժույթի առքուվաճառքի գործառնությունների փոխարժեքները. այն դեպքում, երբ կան կատարման հաճախականության, ժամկետների, տեսակների կամ գումարային մեծության սահմանափակումներ, այդ սահմանափակումները նույնպես նշվում են,
2) գործարքի կատարման մերժման հիմքերը,
3) ցանկացած տիպի միջնորդավճարները, որոնք կարող են գանձվել սպառողից մատուցված ծառայության դիմաց,
4) այն դեպքում, երբ նշված գործարքների համար ֆինանսական կազմակերպությունը տարբերակում է սպառողներին (օրինակ՝ ֆինանսական կազմակերպության հետ որևէ ծառայության մատուցման համար պայմանագիր կնքած անձ**)**, ապա նշումը կատարվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով,
5) գործարքի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ կախված գործարքի գումարից,
6) լրացուցիչ կամ օժանդակ ծառայությունների մատուցման (օրինակ՝ հնամաշ կամ վնասված դրամանիշերի փոխանակում պիտանի դրամանիշերով) դեպքում տեղեկացում այդ մասին:

30. ***Ֆոնդերի*** կատարողականի գծով ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը.
1) ***Պայմանագրային բաց ֆոնդերի մասին*** տեղեկատվությունը ներկայացվում է համաձայն Հավելված 12-ով սահմանված աղյուսակի, որում.

ա. ***«Օր/ամիս/տարի դրությամբ»*** տողում թավ տառերով լրացվում է հրապարակման օրվա ամսաթիվը (օր, ամիս, տարեթիվ), որի դրությամբ ներկայացվում են աղյուսակում նշված տեղեկությունները,

բ. ***«Ֆոնդի անվանումը»*** սյունակում լրացվում են միևնույն կառավարչի կողմից կառավարվող ֆոնդերի անվանումները,

գ. ***«Փայի դասը»*** սյունակում լրացվում է ֆոնդի փայի դասը, ընդ որում, եթե տվյալ ֆոնդը չունի տարբեր դասի փայեր, ապա նշվում է «-»,

դ. ***«Փայի հաշվարկային արժեքը»*** սյունակում լրացվում է ֆոնդի փայի հաշվարկային արժեքը հաշվարկման օրվա դրությամբ,

ե. ***«Ֆոնդի եկամտաբերությունը»*** տողի համապատասխան սյունակներում լրացվում են ֆոնդի եկամտաբերության ցուցանիշները, ընդ որում՝

ե1. ***«շաբաթական»*** սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող մեկ շաբաթվա եկամտաբերությունը,

ե2. ***«տարվա սկզբից»*** սյունակում լրացվում է հաշվարկման տարվա սկզբից մինչև հաշվարկման օրն ընկած ժամանակահատվածի եկամտաբերությունը,

ե3. ***«վերջին 12 ամիսների»*** սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող տասներկու ամիսների եկամտաբերությունը,

ե4. ***«նախորդ տարվա»*** սյունակում լրացվում է հաշվարկման տարվան նախորդող տարվա եկամտաբերությունը: Ընդ որում՝ ֆոնդի կառավարիչը պետք է ապահովի, որ սպառողը հնարավորություն ունենա տեսնելու այդ տեղեկատվությունը ցանկացած տարիների համար,

ե5. ***«վերջին 3 տարիների (միջին տարեկան)»*** սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող երեք տարիների միջին տարեկան եկամտաբերությունը,

ե6. ***«վերջին 5 տարիների (միջին տարեկան)»*** սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող հինգ տարիների միջին տարեկան եկամտաբերությունը,

ե7. ***«ստեղծման պահից (միջին տարեկան)»*** սյունակում լրացվում է ֆոնդի գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի (ստեղծման պահից մինչև հաշվարկման օրը ներառյալ) միջին տարեկան եկամտաբերությունը: Ընդ որում՝ աղյուսակների ներքևում, թավ տառերով ներկայացվում է դրույթ այն մասին, որ ստեղծման պահ է համարվում այն օրը, որի համար հաշվարկվում է փայի առաջին հաշվարկային արժեքը:

2) ***Կորպորատիվ բաց ֆոնդերի*** մասին տեղեկատվությունը ներկայացվում է համաձայն Հավելված 13-ով սահմանված աղյուսակի, որում.

ա. ***«Օր/ամիս/տարի դրությամբ»*** տողում թավ տառերով լրացվում է հրապարակման օրվա ամսաթիվը (օր, ամիս, տարեթիվ), որի դրությամբ ներկայացվում են աղյուսակում նշված տեղեկությունները,

բ. ***«Ֆոնդի անվանումը»*** սյունակում լրացվում են միևնույն կառավարչի կողմից կառավարվող ֆոնդերի անվանումները,

գ. ***«Բաժնետոմսի հաշվարկային արժեքը»*** սյունակում լրացվում է ֆոնդի բաժնետոմսի հաշվարկային արժեքը՝ հաշվարկման օրվա դրությամբ,

դ. ***«Ֆոնդի եկամտաբերությունը»*** տողի համապատասխան սյունակներում լրացվում են ֆոնդի եկամտաբերության ցուցանիշները, ընդ որում՝

դ1. ***«շաբաթական»*** սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող մեկ շաբաթական եկամտաբերությունը,

դ2. ***«տարվա սկզբից»*** սյունակում լրացվում է հաշվարկման տարվա սկզբից մինչև հաշվարկման օրն ընկած ժամանակահատվածի եկամտաբերությունը,

դ3. ***«վերջին 12 ամիսների»*** սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող տասներկու ամիսների եկամտաբերությունը,

դ4. ***«նախորդ տարվա»*** սյունակում լրացվում է հաշվարկման տարվան նախորդող տարվա եկամտաբերությունը: Ընդ որում՝ ֆոնդի կառավարիչը պետք է ապահովի, որ սպառողը հնարավորություն ունենա տեսնելու այդ տեղեկատվությունը ցանկացած տարիների համար,

դ5. «**վերջին 3 տարիների (միջին տարեկան)»** սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող երեք տարիների միջին տարեկան եկամտաբերությունը,

դ6. ***«վերջին 5 տարիների (միջին տարեկան)»*** սյունակում լրացվում է հաշվարկման օրվան նախորդող հինգ տարիների միջին տարեկան եկամտաբերությունը,

դ7. ***«ստեղծման պահից (միջին տարեկան)»*** սյունակում լրացվում է ֆոնդի գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի (ստեղծման պահից մինչև հաշվարկման օրը ներառյալ) միջին տարեկան եկամտաբերությունը: Ընդ որում՝ աղյուսակների ներքևում, թավ տառերով ներկայացվում է դրույթ այն մասին, որ ստեղծման պահ է համարվում այն օրը, որի համար հաշվարկվում է փայի առաջին հաշվարկային արժեքը:

3) Սույն կանոնակարգի 30-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված տեղեկությունները հրապարակվում են յուրաքանչյուր աշխատանքային օր, սակայն ոչ ուշ, քան համապատասխան հաշվարկման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը,

4) Սույն կանոնակարգի Հավելված 12-ով և Հավելված 13-ով սահմանված աղյուսակներում ներկայացվող եկամտաբերության ցուցանիշները հաշվարկվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերութ-

յան մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ով սահմանված կարգով,

5) Սույն կանոնակարգի Հավելված 12-ով և Հավելված 13-ով սահմանված աղյուսակների եկամտաբերությանը վերաբերող սյունակները լրացնելիս, եթե համապատասխան ժամանակահատվածի առաջին օրվա համար փայի հաշվարկային արժեքի ցուցանիշը բացակայում է, ապա եկամտաբերությունը հաշվարկելիս հիմք է ընդունվում նախորդ աշխատանքային օրվա ցուցանիշը՝ բացառությամբ այն ժամանակահատվածի, երբ ֆոնդը գործունեություն չի ծավալել և չի հաշվարկել ֆոնդի փայի հաշվարկային արժեքը,

6) Սույն կանոնակարգի Հավելված 12-ով և Հավելված 13-ով առկա աղյուսակները պետք է պարունակեն հղում կառավարչի յուրաքանչյուր ֆոնդի էջին, որում պետք է ներկայացվեն կանոնակարգի 31-րդ կետով սահմանված տեղեկությունները,

7) Սույն կանոնակարգի Հավելված 12-ով և Հավելված 13-ով սահմանված ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ ցուցանիշներ հրապարակելիս ներկայացվում են նաև հետևյալ պարտադիր տեղեկությունները.

ա. Հավելված 12-ով և Հավելված 13-ով աղյուսակներում ներառված ցուցանիշների նկարագրությունը, որը ներկայացվում է առանձին բացվող պատուհանի տեսքով կամ ցուցանիշների նկարագրությունը պարունակող փաստաթղթին հղման միջոցով կամ օգտագործողին մատչելի այլ միջոցով,

բ. աղյուսակների ներքևում, թավ տառերով ներկայացվում է նախազգուշական դրույթ այն մասին, որ ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ նախկինում ցուցաբերած վարքագիծը կամ նախկին ցուցանիշները չեն նշանակում, որ դրանք շարունակվելու են նաև ապագայում,

գ. նշում այն մասին, որ ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ ցուցանիշները ներառում են ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող վճարները և ծախսերը (այդ թվում՝ ֆոնդի հարկերը),

դ. այն աղբյուրները, որտեղից մասնակիցը կարող է առավել մանրամասն տեղեկություններ ստանալ ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ,

ե. այն դեպքում, երբ տեխնիկական խնդիրների պատճառով հնարավոր չէ պահպանել աղյուսակի ձևաչափը, առնվազն ներկայացվում է Հավելված 12-ով և Հավելված 13-ով սահմանված աղյուսակներում ներառված տեղեկատվությունը,

8) Եթե ֆոնդի կառավարիչը կատարում է իր կողմից կառավարվող ֆոնդի եկամտաբերության համեմատություն իմաստալից հենանիշի հետ, ապա այդ իմաստալից հենանիշը միաժամանակ պետք է բավարարի հետևյալ պայմանները.

ա. պետք է արտահայտի այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունը, որը հնարավորություն կտա սպառողին համեմատելու կառավարման արդյունավետությունը այլընտրանքային ներդրումների արդյունավետության հետ: Մասնավորապես, իմաստալից հենանիշը պետք է արտահայտի ֆինանսական շուկայում առկա համադրելի այլ գործիքների եկամտաբերությունը, որոնց ժամկետայնությունը, ռիսկը, ներդրման երկիրը և այլ էական բնութագրիչները համապատասխանում են, հնարավորինս մոտ կամ համեմատելի են ֆոնդի ներդրումային քաղաքականությանը,

բ. չպետք է հիմնվի տվյալ կառավարչի՝ անցյալում ձեռք բերված եկամտաբերության կամ տվյալ կառավարչի ազդեցության տակ գտնվող ցուցանիշների վրա,

գ. նշված իմաստալից հենանիշը կարող է հիմնվել նաև բորսայական ինդեքսների, այլ կառավարիչների կողմից արժեթղթերի փաթեթի կառավարման արդյունավետությունն արտահայտող ամփոփ ցուցանիշների, համանման գործիքների որոշակի խմբի համար հաշվարկված միջին եկամտաբերության և նմանատիպ այլ ցուցանիշների վրա,

9) Յուրաքանչյուր ֆոնդի էջում պետք է ներկայացվեն ֆոնդի եկամտաբերությունը և փայի հաշվարկային արժեքը (այդ թվում՝ փայի տեղաբաշխման և հետգնման (մարման) գները) առնվազն վերջին 3 տարիների համար, իսկ եթե ֆոնդը գործում է 3 տարուց պակաս, ապա՝ ֆոնդի եկամտաբերությունը, հաշվարկային արժեքը և տեղաբաշխման ու մարման գները ֆոնդի գործունեության իրականացման ողջ ժամանակահատվածի համար: Ֆոնդի եկամտաբերությունը և փայի հաշվարկային արժեքը պետք է ներկայացվեն առանձին գրաֆիկների տեսքով, իսկ փայի տեղաբաշխման և հետգնման (մարման) գները՝ աղյուսակների տեսքով: Փայի հետգնման (մարման) գների փոխարեն կարող է ներկայացվել համապատասխան միջնորդավճարների չափը և դրանց գինը որոշելու օրինակ (բացատրություն): Ընդ որում՝ պետք է հնարավոր լինի տեսնել այդ տեղեկատվությունը ցանկացած ժամանակահատվածի համար: Միջակայքային և փակ ֆոնդերի դեպքում սույն կետում նշված տեղեկատվությունը ներկայացվում է ըստ կիրառելիության:

10) Եթե ֆոնդի կառավարիչը հրապարակում է տեղեկություններ իր կողմից կառավարվող փակ կամ միջակայքային ֆոնդի եկամտաբերության վերաբերյալ, ապա այդ դեպքում ֆոնդի եկամտաբերությունը պետք է հաշվարկվի և հրապարակվի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ի 4-րդ գլխով սահմանված բանաձևերով: Ընդ որում, ֆոնդի եկամտաբերության ցանկացած ցուցանիշ հրապարակելիս պետք է նշվի նաև այն ժամանակահատվածը, որի համար հաշվարկվել է ֆոնդի եկամտաբերությունը,
11) Եթե ֆոնդի կառավարիչը հրապարակում է իր կողմից կառավարվող ֆոնդի ռիսկի յուրաքանչյուր միավորի դիմաց եկամտաբերության վերաբերյալ տեղեկություններ, ապա այդ դեպքում ֆոնդի ռիսկի յուրաքանչյուր միավորի դիմաց եկամտաբերությունը պետք է հաշվարկվի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի մարտի 6-ի թիվ 62-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների եկամտաբերության հաշվարկի մեթոդաբանությունը և եկամտաբերության մասին տեղեկատվության ներկայացման չափանիշները» կանոնակարգ 10/17-ի 5-րդ գլխով սահմանված բանաձևերով:

31. Յուրաքանչյուր **ֆոնդի** գծով տեղեկություններում առնվազն նշվում են.

1) Ֆոնդի անվանումը և գործունեության ժամկետը (եթե նրա գործունեությունը սահմանափակված է որոշակի ժամկետով), ֆոնդի կառավարչի, ֆոնդի պահառուի և ֆոնդի մասնակիցների ռեեստրավարի (եթե այն ֆոնդի կառավարչից տարբերվող այլ անձ է, եթե ոչ՝ նշում այդ մասին) անվանումը, գտնվելու վայրը, կապի միջոցներ և հղում ինտերնետային կայքին (առկայության դեպքում),
2) Ֆոնդի ստեղծման ամսաթիվը (օր, ամիս, ամսաթիվ),
3) Ֆոնդի տեսակը՝ ըստ ներդրումային քաղաքականության, ըստ ֆոնդի փայերի կամ բաժնետոմսերի, թողարկման և հետգնման (մարման) կառուցակարգի, ըստ տարատեսականացվածության, ըստ իրավական կարգավիճակի և որակավորված ներդրողների ֆոնդ չհանդիսանալու հանգամանքի,
4) Ֆոնդի ներդրումային քաղաքականության համառոտ նկարագիրը, այդ թվում՝ ներդրումների ուղղությունները, սահմանաչափերը և այլ յուրահատուկ (աշխարհագրական, ճյուղային և այլն) սահմանափակումները, ներդրումների հետ կապված ռիսկերի համառոտ նկարագիրը,
5) Տեղեկություններ ֆոնդի ակտիվներից և մասնակիցներից գանձման ենթակա վճարների և ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի մասին, որն առնվազն ներկայացվում է ըստ վճարների և ծախսերի հետևյալ տեսակների՝ ֆոնդի ակտիվներից գանձման ենթակա ֆոնդի կառավարչի և ֆոնդի պահառուի պարգևավճարները, ֆոնդի հարկերը, ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ֆոնդի կառավարման և պահառության հետ ուղղակիորեն կապված և ֆոնդի ազդագրով (առկայության դեպքում), կանոններով (կանոնադրությամբ) սահմանված ծախսերը, ինչպես նաև այլ ծախսերը, որոնց կատարումը ֆոնդի ակտիվների հաշվին անմիջականորեն նախատեսված է «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,
6) Ֆոնդի յուրաքանչյուր դասի փայի կամ բաժնետոմսի հաշվարկային արժեքը, ինչպես նաև տեղաբաշխման և հետգնման (մարման) գները (հետգնման (մարման) գների դեպքում կարող է ներկայացվել միջակայք տոկոսային արտահայտությամբ) և համապատասխան ամսաթիվը, որի դրությամբ դրանք ներկայացված են,
7) ֆոնդի զուտ ակտիվների արժեքը և համապատասխան ամսաթիվը, որի դրությամբ դրանք ներկայացված են,
8) փայ (բաժնետոմս) գնելու կամ ֆոնդին միանալու համար անհրաժեշտ քայլերի նկարագրությունը, ինչպես նաև անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
9) փայի (բաժնետոմսի) հետգնման (մարման) կարգի համառոտ նկարագիրը, պայմանները և ժամկետները,
10) կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդի դեպքում մասնակցի կամ մասնակցի օգտին երրորդ անձի կողմից կամավոր կենսաթոշակային վճարների վճարման կարգը և ժամկետները,
11) կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդի դեպքում կառավարչի կողմից մասնակցին կենսաթոշակներ վճարելու ժամկետը, պարբերականությունը և ձևերը,
12) ֆոնդի ակտիվների կառավարումից ստացված եկամտի՝ մասնակիցների միջև բաշխման համառոտ քաղաքականությունը,
13) նշում այն մասին, որ ֆոնդի և ֆոնդի կառավարչի վերաբերյալ մասնակիցը առավել մանրամասն տեղեկություններ կարող է ստանալ ֆոնդի ազդագրից (առկայության դեպքում) և կանոններից (կանոնադրությունից),

14) կապի միջոցները, որոնց միջոցով կարելի է լրացուցիչ տեղեկություններ ստանալ տվյալ ֆոնդի վերաբերյալ,
15) ֆոնդի պորտֆելի կառուցվածքը, որը պետք է ներկայացնի ֆոնդի ներդրումներն ըստ երկրների (օրինակ՝ Ֆրանսիա, Գերմանիա և այլն), աշխարհամասերի (օրինակ՝ Եվրոպա, Ասիա և այլն) և ոլորտային բաշխվածության տոկոսային արտահայտությամբ՝ առանձին սխեմաների կամ գրաֆիկների տեսքով: Ընդ որում՝ պորտֆելի կառուցվածքում.

ա. ավանդների դեպքում լրացվում է համապատասխան բանկի (ֆինանսական կազմակերպության) գրանցման երկիրը,

բ. պետության կամ կենտրոնական բանկի կողմից թողարկված կամ երաշխավորված արժեթղթերի դեպքում լրացվում է համապատասխան պետության անվանումը,

գ. կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերի դեպքում լրացվում է այն պետության անվանումը, որտեղ գրանցված է արժեթղթերի թողարկողը,

դ. ներդրումային ֆոնդերի փայերի (բաժնետոմսերի) դեպքում լրացվում է ներդրումային ֆոնդի թողարկման երկիրը,

ե. ածանցյալ գործիքների դեպքում լրացվում է համապատասխան կարգավորվող շուկան, իսկ դրա բացակայության դեպքում՝ կոնտրագենտի գրանցման երկիրը:

Սույն ենթակետի բ-ե պարբերություններով սահմանված տեղեկատվությունը ներկայացվում է նաև ըստ յուրաքանչյուր գործիքի, առանց խմբավորման՝ նշելով գործիքի տեսակը, թողարկողի անվանումը, արժեթղթի տարբերակիչ կոդը (ISIN), արժույթը, քանակը, շուկայական արժեքը, տեսակարար կշիռը ֆոնդի ընդհանուր պորտֆելի մեջ, թողարկման երկիրը, ժամկետային արժեթղթերի դեպքում՝ նաև մարման ժամկետը:

Սույն ենթակետով սահմանված տեղեկատվությունը հրապարակվում է յուրաքանչյուր եռամսյակի վերջին օրվա դրությամբ՝ ոչ ուշ, քան տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա վերջին աշխատանքային օրը:
16) ֆոնդում ներդրման սահմանափակումները, եթե այդպիսիք առկա են,
17) ֆոնդի հերթական և արտահերթ ժողովների գումարման մասին հայտարարություն (ժողովի առկայության դեպքում),
18) ֆոնդի ժողովի ընդունած որոշումները (ժողովի առկայության դեպքում), ընդ որում՝ ֆոնդի կառավարչի ինտերնետային կայքում սույն տեղեկատվությունը տեղադրվում է ներբեռնող փաստաթղթի ձևով,
19) ֆոնդում կառավարչի մասնակցության չափը (առկայության դեպքում),
20) լրացուցիչ ծառայությունները և արտոնությունները, որոնք ստանում է տվյալ ֆոնդի մասնակիցը (առկայության դեպքում),
21) ֆոնդի արտաքին աուդիտ իրականացնող կազմակերպության անվանումը, ինչպես նաև կապի միջոցները և հղում ինտերնետային կայքին (առկայության դեպքում),
22) ֆոնդի փայերը (բաժնետոմսը) կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված լինելու դեպքում նշում այդ մասին,
23) բաց ֆոնդի համար նաև՝ հայտարարություն, որ յուրաքանչյուր մասնակից կարող է ցանկացած ժամանակ փայը (բաժնետոմսը) ներկայացնել հետգնման (մարման),
24) միջակայքային ֆոնդի համար նաև՝ միջակայքային ժամանակահատվածը և հայտարարություն, որ յուրաքանչյուր մասնակից կարող է փայը (բաժնետոմսը) ներկայացնել հետգնման (մարման) տվյալ ժամանակահատվածում,
25) ենթաֆոնդերը (առկայության դեպքում), ընդ որում, յուրաքանչյուր ենթաֆոնդի վերաբերյալ ներկայացվում է սույն կետի 1-23 ենթակետերով պահանջված տեղեկատվությունն ըստ կիրառելիության:
26) յուրաքանչյուր ֆոնդի էջում տեղադրվում է հղում ֆոնդի ազդագրին (առկայության դեպքում), կանոններին (ֆոնդի կանոնադրությանը)՝ տվյալ պահին կատարված բոլոր փոփոխությունները և լրացումները ներառած (ինկորպորացրած) վիճակում: Ընդ որում, կանոնների (կանոնադրության) տիտղոսաթերթի վրա պետք է նշվեն կանոնների (կանոնադրությունում) կատարված բոլոր փոփոխությունների և լրացումների ընդունման և Կենտրոնական բանկի կողմից գրանցման ամսաթվերը, իսկ փոփոխված կամ լրացված կետերի ներքո նշվի այդ փոփոխությունների և լրացումների կատարման ամսաթվերը՝ հնարավորություն ընձեռելով կանոնները (կանոնադրությունը) դիտելու նախորդող յուրաքանչյուր ժամանակահատվածի դրությամբ,
27) «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով սահմանված դեպքում փայերի (բաժնետոմսերի) թողարկումը, տեղաբաշխումը կամ հետգնումը (մարումը)

կասեցնելու դեպքում գլխավոր էջում պետք է լինի հայտարարություն այդ մասին, որն առնվազն ներառում է

ա. կասեցման պատճառը,

բ. կասեցման տևողությունը:

32. ***Կենտրոնական դեպոզիտարիայի*** կողմից կուտակային կենսաթոշակային համակարգի գծով մատուցվող ծառայությունների մասին տեղեկություններում ներկայացվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը.

1) Նշում այն մասին, որ մասնակցի կողմից կենսաթոշակային ֆոնդի և կենսաթոշակային ֆոնդի կառավարչի ընտրություն չկատարելու դեպքում ընտրությունը կկատարվի Հայաստանի պարտադիր կենսաթոշակային տեղեկատվական համակարգի միջոցով՝ պատահականության սկզբունքով: Ընդ որում, նշումը ներկայացվում է աչքի ընկնող և առանձնացված ձևով՝ այլ տառատեսակով, այլ տառաչափով, այլ գույնով և (կամ) այլ ձևով (օրինակ՝ «**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԵԹԵ ԴՈՒՔ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՉԵՔ ԿԱՏԱՐՈՒՄ, ԱՊԱ ՁԵՐ ԱՆՈՒՆԻՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ՝ ՊԱՏԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ»**),

2) նշում այն մասին, որ մասնակիցը կարող է ընտրել նոր կենսաթոշակային ֆոնդ (նույն կամ այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի) իր հետագա կուտակային հատկացումները տվյալ կենսաթոշակային ֆոնդին ուղղելու համար,

3) հաշվի օպերատորների մասին ամբողջական և թարմացված տեղեկություններ, այդ թվում՝ հաշվի օպերատորների անվանումները, նրանց գլխամասային գրասենյակների և մասնաճյուղերի հասցեները, հեռախոսային և էլեկտրոնային կապի միջոցները, պաշտոնական ինտերնետային կայքի հասցեները,

4) կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկատվությունը անձին թղթային կամ էլեկտրոնային տարբերակով տրամադրելու և տեղեկատվության ստացումը դադարեցնելու ու տեղեկատվության ստացումը վերականգնելու կարգի մասին,

5) կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների և նրանց կենսաթոշակային ֆոնդերի մասին ամբողջական և թարմացված տեղեկություններ, այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների անվանումները, նրանց գլխամասային գրասենյակների հասցեները, հեռախոսային և էլեկտրոնային կապի միջոցները, պաշտոնական ինտերնետային կայքի հասցեները, յուրաքանչյուր կառավարչի կողմից կառավարվող ֆոնդերի անվանումները,

6) պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասով ներկայացվում է նաև Հավելված 12-ով սահմանված աղյուսակը,

7) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի հունիսի 21-ի թիվ 171-Ն որոշմամբ հաստատված «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը փոխանակելու, կենսաթոշակի տեսակ ընտրելու համար կենսաթոշակային հաշվի վերաբերյալ տեղեկություններ ստանալու, կենսաթոշակի տեսակ ընտրելու, նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը մասնակցի միջոցները միանվագ վճարի ձևով ստանալու, մասնակցի միջոցներն օտարերկրյա պետությունում գործող կուտակային կենսաթոշակային հաշվին փոխանցելու, ժառանգված կենսաթոշակային ֆոնդի փայերը ստանալու, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի սեփականությունից հրաժարվելու/ընդունելու դիմումների ձևերը և դրանց ներկայացման կարգը» կանոնակարգ 10/07-ով սահմանված դիմումների ձևերը, Կենտրոնական դեպոզիտարիայի ներքին կանոններով հաստատված ձևերը:

33. ***Կուտակային կենսաթոշակային համակարգի հաշվի օպերատոր*** հանդիսացող ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների մասին տեղեկություններում ներկայացվում է նվազագույնը հետևյալ տեղեկատվությունը.

1) հաշվի օպերատորի մասին համառոտ բնութագիր (օրինակ՝ Կուտակային կենսաթոշակային համակարգի հաշվի օպերատորը միջնորդավորում է մասնակիցների ռեեստր վարողի կողմից մասնակիցներին մատուցվող ծառայությունները),

2) պարունակի հղում Կենտրոնական դեպոզիտարիայի կայքի այն բաժնին, որտեղ ներկայացված են կուտակային կենսաթոշակային համակարգին վերաբերող դիմումների ձևաչափերը,

3) հաշվի օպերատորին դիմումների ներկայացման կարգը:

34. ***«Իրավական ակտեր»*** բաժնում հրապարակվում են

1) հիմնական օրենքների, նորմատիվ իրավական այլ ակտերի, կանոնների ցանկը որոնցով կարգավորվում է ֆինանսական կազմակերպության կողմից ծառայությունների մատուցումը,

2) ֆինանսական կազմակերպության կանոնադրությունը, հայաստանյան վճարահաշվարկային համակարգի օպերատորի դեպքում՝ վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոնակարգը՝ տվյալ պահին կատարված բոլոր փոփոխությունները և լրացումները ներառած (ինկորպորացրած) վիճակում: Ընդ որում, կանոնադրության տիտղոսաթերթի (կանոնակարգի) վրա պետք է նշվեն կանոնադրությունում (կանոնակարգում) կատարված բոլոր փոփոխությունների և լրացումների ընդունման և Կենտրոնական բանկի կողմից գրանցման ամսաթվերը, իսկ փոփոխված կամ լրացված կետերի ներքո նշվեն այդ փոփոխությունների և լրացումների կատարման ամսաթվերը՝ հնարավորություն ընձեռելով կանոնադրությունը (կանոնակարգը) դիտելու նախորդող յուրաքանչյուր ժամանակահատվածի դրությամբ:

35. ***«Սպառողի իրավունքներ»*** բաժնում ներկայացվում են.

1) տեղեկություններ սպառողների կողմից բողոքներ ներկայացնելու վերաբերյալ, այդ թվում՝

ա. հղում բողոքները կարգավորող ներքին իրավական ակտին(երին),

բ. հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային հասցե(ները), փոստային հասցե(ները) և այլ կապի միջոցներ, որոնցով սպառողները կարող են բողոք ներկայացնել ֆինանսական կազմակերպությանը,

գ. տեղեկություններ Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին, այդ թվում՝

գ1. հայտարարություն այն մասին, որ ֆիզիկական անձը հնարավորություն ունի ներկայացնելու ֆինանսական կազմակերպության և սպառողի միջև կնքվող գործարքից բխող պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին: Այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպությունը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր չի կնքել, ապա նշում այդ մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 225-Ն որոշմամբ հաստատված «Հաճախորդների բողոքների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ» կանոնակարգ 8/04-ի Հավելված 1-ի: Այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպությունը կնքել է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր որոշակի սահմանափակումներով (օրինակ՝ համաձայնագիր, որը տարածվում է մինչև 250,000 ՀՀ դրամ գումարով գույքային պահանջների վրա), ապա նշում է կատարվում նաև տվյալ սահմանափակման մասին,

գ2. ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի գտնվելու վայրը,

գ3. ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի աշխատանքային ժամերը, կապի միջոցները,

գ4. հղում Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի ինտերնետային կայքին,

դ. տեղեկություններ Բյուրոյի մասին (միայն ապահովագրական ընկերությունների համար), այդ թվում՝

դ1. հայտարարություն այն մասին, որ ԱՊՊԱ-ի վերաբերյալ բողոք ունենալու դեպքում ֆիզիկական անձը հնարավորություն ունի դիմելու Բյուրոյին,

դ2. Բյուրոյի գտնվելու վայրը,

դ3. Բյուրոյի աշխատանքային ժամերը, կապի միջոցները,

դ4. Հղում Բյուրոյի ինտերնետային կայքին,

ե. Կենտրոնական բանկի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 225-Ն որոշմամբ հաստատված «Հաճախորդների բողոքների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ» կանոնակարգ 8/04-ով սահմանված «Ինչ անել, եթե բողոք ունեք, ձևաթուղթը, բողոքի քննության գործընթացի հակիրճ նկարագրությունը և սպառողի կողմից բողոքի ներկայացման հայտի ձևը,

2) Հայտարարություն ցանկացած անձի կողմից «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Վարկային կազմակերպությունների մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Արժեթղթերի շուկայի մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» կամ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տեղեկությունների ստացման հնարավորության և այդ տեղեկությունների ստացման կարգի, վայրի, ժամկետի, տեղեկությունների տրամադրման համար գանձվող վճարի մասին: Ընդ որում՝ հայտարարությունում հղում է կատարվում այն իրավական ակտին և ակտի հոդվածին, համաձայն որի ծագում է նման իրավունքը և այն հասցեին, որտեղ տեղադրված է համապատասխան օրենքը.

Օրինակ՝ «Ցանկացած անձ իրավունք ունի ստանալու ««ԱԱԱ» ԲԲԸ բանկի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվության պատճենները: Օրենքը կարող եք գտնել՝ www.AAAbank.am/legislation/bankslaw.ppt: Վճարը՝ թղթային մեկ տպագիր էջը 3 դրամ, էլեկտրոնային առաքման դեպքում՝ անվճար:

«Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ, 120-րդ հոդվածներով, 126-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկությունները: Վճարումը՝ անվճար: Ժամկետը՝ դիմումը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը:

Բանկը վերոնշյալ տեղեկությունները տրամադրում է մասնակցի գրավոր դիմումը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ, եթե տեղեկատվության կողքին այլ ժամկետ է նշված: Գրավոր դիմումը կարող է ներկայացվել հետևյալ ձևերով. առձեռն՝ բանկի գլխամասային գրասենյակում, ցանկացած մասնաճյուղում կամ ներկայացուցչությունում, էլեկտրոնային հասցեով՝ investor@aaa.am, կամ փոստով՝ «ԱԱԱ» բանկ … հասցեով:»:

36. ***«Հետադարձ կապ»*** բաժնում.

1) ներկայացվում են այն հեռախոսահամար(ներ)ը (առնվազն մեկ ֆիքսված հեռախոսակապ), էլեկտրոնային հասցե(ներ)ը, փոստային հասցե(ներ)ը և այլ կապի միջոցները, որոնցով սպառողները կարող են կապ հաստատել ֆինանսական կազմակերպության հետ,
2) եթե ֆինանսական կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունը սպառողին ուղղակիորեն (ոչ միջնորդավորված) մատուցվում է այլ անձանց կամ կազմակերպությունների կողմից, ապա նշվում են այդ անձանց կամ կազմակերպությունների կապի տվյալները (օրինակ, եթե ապահովագրական ընկերությունը վաճառում է իր ապահովագրության պայմանագրերը ապահովագրական գործակալների միջոցով, կամ բանկը գրավի գնահատումը իրականացնում է անշարժ գույքի գնահատմամբ զբաղվող կոնկրետ անձանց հետ, կամ ապահովագրական ընկերությունը ապահովագրական հատուցումները սպառողներին անկանխիկ վճարում է կոնկրետ բանկի միջոցով, իսկ, օրինակ, SWIFT-ի միջոցով բանկի կողմից փոխանցումների իրականացման դեպքում թղթակից (միջնորդ) բանկերի տվյալները չեն նշվում, քանի որ ծառայությունը թղթակից բանկի կողմից ուղղակիորեն սպառողին չի մատուցվում):

37. ***«Գործակալներ»*** բաժնում ներկայացվում է տվյալ ֆինանսական կազմակերպության անունից և/կամ հաշվին հանդես եկող գործակալների մասին տեղեկատվությունը, այդ թվում գործակալի՝

1) անունը, ազգանունը կամ անվանումը (իրավաբանական անձանց համար),
2) Կենտրոնական բանկում ռեգիստրի համարը (միայն ապահովագրական ընկերությունների համար, բացառությամբ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ ապահովագրական գործակալի գործունեություն իրականացնող անձանց),
3) լիցենզիայի համարը (միայն ֆոնդերի գործակալների համար),
4) հղում գործակալի ինտերնետային կայքին (առկայության դեպքում),
5) գործակալի կապի տվյալները (գործակալի գտնվելու (բնակության) վայր, հեռախոս, աշխատանքային ժամերը),
6) ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական գործակալին տրված լիազորությունները, ներառյալ՝ ապահովագրական միջնորդության գործառույթները, ապահովագրության դասերը, ապահովագրավճարների և (կամ) ապահովագրական հատուցումների սահմանաչափերը,
7) ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից ֆոնդի գործակալին տրված լիազորությունները, ինչպես նաև այն բոլոր ֆոնդերը, որոնց գործակալ է հանդիսանում տվյալ անձը, ֆոնդի կառավարչի և ֆոնդի գործակալի միջև կնքված պայմանագրի ժամկետները,
8) էլեկտրոնային փողերի դեպքում՝ փող թողարկողների գործակալների և տարածողների ցանկը:

38. ***«Հաշվիչ»*** բաժնում ներկայացվում են ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների սակագների, տոկոսադրույքների և այլնի հաշվիչներ (առկայության դեպքում): Ընդ որում, ԱՊՊԱ իրականացնող ապահովագրական ընկերությունների համար՝

1) ԱՊՊԱ-ի գծով ապահովագրավճարների հաշվիչում ներառվող հարցադրումները, դրանց պատուհանների բացատրությունները պետք է լինեն հստակ և միանշանակ,
2) ԱՊՊԱ-ի գծով ապահովագրավճարների հաշվիչի բաժնում ներկայացվում են նաև կապի միջոցներ, որով սպառողները կարող են պարզաբանումներ ստանալ ԱՊՊԱ-ի գծով ապահովագրավճարների հաշվիչի հետ կապված հարցերի վերաբերյալ:

39. ***«Առցանց հայտեր»*** բաժնում ներկայացվում են այն հայտերը, որոնք սպառողը կարող է լրացնել առցանց եղանակով՝ ֆինանսական կազմակերպության կողմից որևէ ծառայություն ստանալու նպատակով: Ընդ որում՝ այս բաժնում առնվազն ներկայացվում են

1) սպառողի նույնականացման, տեղեկությունների պահպանման և գաղտնիության ապահովման ընթացակարգերը,
2) տվյալների մուտքագրումն իրականացնելուց հետո տրվում է «Համաձայն եմ, որ ֆինանսական կազմակերպությունն օգտագործի մուտքագրված տվյալները ծառայություններ մատուցելու նպատակով» հայտարարությունը, որի առջև սպառողը հնարավորություն է ունենում նշում կատարել:

ԳԼՈՒԽ 5

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԷՋ

40. Սույն գլուխը սահմանում է ֆինանսական կազմակերպությունների կողմից սոցիալական ցանցի պաշտոնական էջերում հրապարակման ենթակա տեղեկատվության կազմը և հրապարակման կարգը: Սույն կանոնակարգով սահմանված տեղեկություններից բացի, ֆինանսական կազմակերպությունները կարող են իրենց հայեցողությամբ իրենց էջ(եր)ում տեղադրել օրենքով չարգելված այլ տեղեկություններ, որոնք վերաբերում են ֆինանսական կազմակերպություններին, իրենց գործունեությանը, իրենց և իրենց կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ նորություններին, իրադարձություններին և այլն:

41. Սոցիալական ցանցում պաշտոնական էջ ունենալու պահանջը պարտադիր չէ, այնուամենայնիվ պաշտոնական էջ ունենալու դեպքում բոլոր ֆինանսական կազմակերպությունների պաշտոնական էջերը պետք է բավարարեն սույն գլխի պահանջները:

42. Ֆինանսական կազմակերպություններն ապահովում են իրենց պաշտոնական էջերում տեղակայված տեղեկատվության մշտապես թարմացումը, արդիականությունը և հասանելիությունը սպառողների համար, ընդ որում՝

1) այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպության պաշտոնական էջը ինչ-որ պատճառով չի թարմացվում կամ չի գործում (գործելու) ինչ-որ ժամանակահատվածում, ապա ֆինանսական կազմակերպության պաշտոնական էջի վերջին հրապարակումը նշում է պարունակում այդ մասին, ինչպես նաև նշում է այն ժամկետը, մինչև երբ չի թարմացվելու: Պաշտոնական էջի չթարմացման (չգործելու) ժամկետը չի կարող ավելի լինել, քան երկու ամիս: Այդ դեպքում ֆինանսական կազմակերպությունը փակում կամ ապաակտիվացնում է այդ էջը, ինչպես նաև իր ինտերնետային կայքից հեռացնում է հղումը տվյալ էջին,
2) եթե հրապարակումը վերաբերում է ֆինանսական կազմակերպության կողմից մատուցվող որևէ ծառայության, ապա այն պետք է նաև հղում պարունակի այդ ծառայությունը նկարագրող ինտերնետային էջին:

43. Ֆինանսական կազմակերպությունները սոցիալական ցանցում պաշտոնական էջ ունենալու դեպքում իրենց պաշտոնական էջերում հրապարակում են առնվազն հետևյալ տեղեկությունները.

1) ֆինանսական կազմակերպության մասին, որն առնվազն ներառում է՝
   ա. ֆինանսական կազմակերպության անվանումը, կազմակերպաիրավական տեսակը և գործունեության տեսակը (օրինակ՝ բանկային գործունեություն),
   բ. հեռախոսահամար(ներ)ը և էլեկտրոնային հասցե(ներ)ը, որով սպառողները կարող են կապ հաստատել ֆինանսական կազմակերպության հետ, ինչպես նաև ֆինանսական կազմակերպության կայքի հասցեն և հղումը ֆինանսական կազմակերպության կայքին,
2) ֆինանսական կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների ցանկը՝ հղում(ներ) տալով այդ ծառայությունները նկարագրող ինտերնետային էջերին (էջում տեղադրման հնարավորության դեպքում),
3) հաշվիչ(ներ)ը (առկայության դեպքում և էջում տեղադրման հնարավորության դեպքում),
4) ծրագրային հավելված(ներ)ին հղումներ (առկայության դեպքում և էջում տեղադրման հնարավորության դեպքում),
5) առցանց հայտերը (առկայության դեպքում և էջում տեղադրման հնարավորության դեպքում), որոնց նկատմամբ պահանջները սահմանված են սույն կանոնակարգի 39-րդ կետով,
6) հղում «www.fininfo.am» ինտերնետային կայքին:

44. Այն դեպքում, երբ տվյալ բաժնում սույն կանոնակարգի 43-րդ կետով սահմանված տեղեկությունները կամ այլ տեղեկություններ հնարավոր չէ հրապարակել (օրինակ՝ տարածքի կամ նիշերի սահմանա-

փակման պատճառով) կամ սոցիալական ցանցում որևէ բաժին առկա չէ կամ հնարավոր չէ ստեղծել, ապա ֆինանսական կազմակերպությունը հղում է կատարում իր կայքին և այդ հղմանը զուգահեռ հրապարակում է հայտարարություն այն մասին, որ ամբողջական և ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար հարկավոր է այցելել ֆինանսական կազմակերպության կայքը:

45. Եթե սոցիալական ցանցի առանձնահատկությունները հնարավորություն են տալիս պաշտոնական էջում ավելացնելու բաժիններ կամ էջեր, ապա այդ տեղեկությունները ներկայացվում են առանձին բաժիններով:

46. Ֆինանսական կազմակերպությունը պետք է ձեռնարկի համապատասխան քայլեր, որպեսզի պաշտոնական էջի այցելուի կողմից անգիտակցաբար չհրապարակվի որևէ անձնական տվյալ կամ տեղեկատվություն:

ԳԼՈՒԽ 6

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

47. Ֆինանսական կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները մշտապես հասանելի են սպառողների համար առանձին տեղեկատվական ամփոփագրերի ձևով: Ֆինանսական կազմակերպությունը պետք է ապահովի բոլոր տեղեկատվական ամփոփագրերի մշտապես հասանելիությունը ֆինանսական կազմակերպության գործունեության վայրում՝ սպառողի համար տեսանելի վայրում, այդ թվում՝ տեխնիկական սարքերի օգտագործմամբ, իսկ սպառողի պահանջով տրամադրի թղթային տարբերակը:

48. Ֆինանսական կազմակերպության կողմից հաստատված յուրաքանչյուր տեղեկատվական ամփոփագիր յուրաքանչյուր ծառայության (պայմանագրի) վերաբերյալ պարունակում է.

1) «Տեղեկատվական ամփոփագիր» վերնագիրը,
2) Մատուցվող ծառայությանը վերաբերող սույն կանոնակարգի 17-29-րդ կետերով սահմանված տեղեկությունները, բացառությամբ 17-րդ կետի 1-ին, 2-րդ, 3-րդ ենթակետերի,
3) տեղեկություն այն մասին, թե որտեղ (կայքի հասցե, հեռախոսահամար, կամ կապի այլ միջոց) կարելի է ծանոթանալ ծառայության ամբողջական պայմաններին,
4) եթե տվյալ ամփոփագրում նշված ծառայությունը սահմանված պայմաններով ունի գործողության ժամկետ, ապա ամփոփագրի դիմային էջում նշվում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ պայմանները ուժի մեջ են: Եթե ամփոփագրի հրապարակման պահին հայտնի չէ, թե ամփոփագրում նշված ծառայությունը մինչև որ ժամկետը կգործի, ապա ամփոփագրի դիմային էջի վրա նշվում է ամփոփագրի հրապարակման ամիսը և տարեթիվը, ինչպես նաև նշում, որ ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել և մանրամասների համար ում և ինչ կապի միջոցներով կարող են դիմել,
5) հիպոտեկային կրեդիտների դեպքում տեղեկատվական ամփոփագրերը պարունակում են նաև «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը:

49. Տեղեկատվական ամփոփագրերը կարող են լինել յուրաքանչյուր ծառայության համար առանձին: Միասնական մեկ ամփոփագրի ձևով ներկայացնելու դեպքում ամփոփագիրը պարունակում է յուրաքանչյուր ծառայության (պայմանագրի) վերաբերյալ օրենքով և սույն կանոնակարգով սահմանված տեղեկատվությունը առանձին ձևով:

50. Եթե տվյալ ամփոփագրում նշված ծառայության հետ մեկտեղ մատուցվում է կից (լրացուցիչ, օժանդակ) ծառայություն (օրինակ՝ վճարային քարտին կից առաջարկվում է քարտով կատարած գնումների ապահովագրություն), ապա ամփոփագրին կցվում է այդ ծառայության գծով տեղեկատվական ամփոփագիրը կամ դրանք ներկայացվում են միասնական մեկ ամփոփագրի ձևով:

50.1 Ընդ որում, վարկերի համար ֆինանսական կազմակերպությունները ապահովում են, որ կանոնակարգով սահմանված պահանջներից ներքոնշյալ էական պայմանները լինեն տեղեկատվական ամփոփագրի առաջին էջում (եթե առկա է դիմերես, ապա ներսի 1-ին էջում), աչքի ընկնող հատվածում.

1) Վարկի անվանական, իսկ սպառողական, գյուղատնտեսական վարկերի և հիպոտեկային կրեդիտների դեպքում նաև տարեկան փաստացի տոկոսադրույքների մասին սույն կանոնակարգով սահմանված տեղեկատվությունը,
2) Վարկի համար գանձվող պարտադիր վճարների չափի և հաճախականության մասին տեղեկատվությունը,

3) վարկային գծերի (օվերդրաֆտների) դեպքում՝ արտոնյալ ժամկետը («գրեյս պերիոդ»), հաշվի նվազագույն շարժը և վճարման կարգը,
4) Պարտավորությունների չկատարման դեպքում հնարավոր բացասական հետևանքների մասին տեղեկատվությունը (տույժ և (կամ) տուգանքների, գույքի բռնագանձման, տեղեկատվությունը վարկային բյուրո ուղարկելու մասին),
5) Պարտավորությունների վաղաժամկետ կատարման իրավունքի մասին, հիպոտեկային կրեդիտների դեպքում նշվում է նաև «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման» օրենքի 13-րդ հոդվածով սահմանված սպառողի՝ վաղաժամկետ մարման ձևի ընտրության իրավունքի, տույժերի կիրառման դեպքերի և չափերի մասին:
6) Հիպոտեկային կրեդիտների դեպքում, եթե անվանական տոկոսադրույքը լողացող է, նշում նաև առավելագույն շեմերի մասին, որոնցից ավելի կրեդիտի անվանական տոկոսադրույքը չի կարող բարձրանալ կամ իջնել, ինչպես նաև հայտարարություն այն մասին, որ լողացող անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել տարեկան ոչ ավելի, քան երկու անգամ,
7) Հիպոտեկային կրեդիտների դեպքում նշվում է նաև պայմանագրի առաջարկը յոթ օր առաջ սպառողին տրամադրելու ֆինանսական կազմակերպության պարտավորության և սպառողին յոթ օր մտածելու ժամանակ ընձեռելու մասին:

51. ԱՊՊԱ-ի վերաբերյալ տեղեկատվական ամփոփագրերը, բացի սույն կանոնակարգի 49-րդ կետով նախատեսված տեղեկություններից, ներառում են նաև.
1) Բյուրոյի գտնվելու վայրը, աշխատանքային ժամերը, կապի միջոցները, Բյուրոյի ինտերնետային կայքի հասցեն,
